

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Համլետ ՔՈՉԱՐՅԱՆ

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ  
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

ԵՐԵՎԱՆ - 2002

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պատմական տարբեր փուլերում յուրաքանչյուր տնտեսական համակարգի զարգացում անպայմանորեն իրականացվել է գերակայությունների առանձնացմամբ: Ժամանակի ցանկացած կոնկրետ հատվածում տնտեսական գերակայությունների սահմանումը բավականին բարդ և կարևոր խնդիր է: Կախված ընտրվող գերակայություններից, ձևավորվում է այն գործոնների խումբը, որոնք մասնակցում են այս կամ այն տնտեսական մեխանիզմի կարգավորմանը:

Բնական է, որ տնտեսական համակարգի զարգացման ցանկացած կոնկրետ իրավիճակում կարող են գործել բազմաթիվ գերակայություններ և ըստ կարևորության դրանց դասակարգումը կլինի խիստ իրավիճակային:

Գլոբալ զարգացումների ներկա փուլում ՀՀ կառավարության կողմից նախանշվել են տնտեսության գերակա այն ոլորտները, որոնց ինտենսիվ զարգացումն առաջիկայում կազմելու է երկրի տնտեսական ընդհանուր առաջընթացի հիմքը:

Ժամանակակից պայմաններում հասարակական ու պետական ինստիտուտների գործառնություններում և յուրաքանչյուր անհատի կյանքում տեղեկատվությունը վճռորոշ դեր ու նշանակություն է ձեռք բերել: Ժամանակակից հասարակությունում տեղեկատվությանը մեծ դերակատարում է վերապահված: Պատահական չի ասված, որ ով տիրապետում է տեղեկատվությանը, նա տիրում է աշխարհին: 400 տարի առաջ անգլիացի պետական գործիչ ու փիլիսոփա Ֆրենսիս Բեկոնը գրել է, որ տեղեկատվություն նշանակում է իշխանություն:

Տեղեկատվայնացման գործընթացները զարգանում են սրընթաց և, հաճախ, անկանխատեսելի ու մենք գիտակցում ենք միայն դրանց սոցիալական, քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ հետևանքները: Տեղեկատվայնացումը տանում է դեպի համաշխարհային միասնական տեղեկատվական տարածության ստեղծում, որի շրջանակներում էլ տեղի է ունենում տեղեկատվության կուտակում, մշակում, պահպանում ու փոխանակում:

Ներկայումս Հայաստանում ուրվագծվում են տեղեկատվական հասարակության ձևավորման ու զարգացման նախապայմանները և ուղիները:

Այդ գործընթացն անդամալի է: Անխուսափելի է մեր երկրի մուտքը համաշխարհային տեղեկատվական համագործակցություն: Միայն այդ դեպքում Հայաստանը համաշխարհային գլոբալ զարգացումների լիարժեք մասնակցի իրավունքներով կհամալրի տեխնոլոգիապես ու տնտեսապես զարգացած երկրների ընտանիքը՝ պահպանելով իր քաղաքական անկախությունը, ազգային առանձնահատկություններն ու մշակութային ավանդույթները:

Արդեն այսօր տեղեկատվական քաղաքակրթության առանձին գծեր ու բնորոշիչներ ի հայտ են գալիս զարգացած երկրների, հատկապես «Մեծ յոթնյակի» պետական կյանքում: Այդ երկրները գործնականորեն ձևավորում և կյանքի են կոչում տեղեկատվական զարգացման նախապատվություններն ու ռազմավարական նպատակներն ընդգծող պետական տեղեկատվական քաղաքականություն՝ նշանակետ ունենալով երկրագնդում իրենց աշխարհաքաղաքական ու տնտեսական առաջանցիկ դիրքերի ամրապնդումը:

Վերոնշյալ գործոնները ստիպում են առանձնահատուկ ուշադրություն դարձնել ՀՀ պետական տեղեկատվական քաղաքականության (ՊՏՔ) ձևավորմանը, քանզի տեղեկատվական հասարակության կառուցման գործընթացները պահանջում են հավասարակշռված ու բազմակողմանի պետական կառավարում ու կարգավորում:

## Գլոբալացումն ու տեղեկատվական համակարգը

### 1.1 Գլոբալացման էությունը

20-րդ դարի վերջերից համաշխարհային տնտեսությունը, որպես ազգային տնտեսությունների և դրանց փոխազդեցությունների ընդհանրություն, ձեռք է բերում նոր որակ. իբրև տնտեսական կյանքի կարևորագույն դրսևորում ու միաժամանակ միջազգայնացման նոր փուլ հանդես է գալիս գլոբալացումը: Այն ընդգրկում է աշխարհի սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն գործընթացներ ու նպաստում տնտեսական աճի ու մոդեռնացման արագացմանը: Միաժամանակ գլոբալացումը ծնում է նոր հակասություններ ու հիմնախնդիրներ: Այսօր աշխարհի բոլոր երկրները այս կամ այն չափով ընդգրկված են գլոբալացման գործընթացում:

Որպես գլոբալացման մասշտաբների չափանիշ կարող է ծառայել միջազգային ֆինանսական գործարքների ծավալը, որը միայն Նյու-Յորքի արտարժութային շուկաներում օրական կազմում է 1.3 տրիլիոն ԱՄՆ դոլար:

Գոյություն ունեն գլոբալացման գործընթացի տարբեր բացատրություններ: Ավելի ընդհանուր՝ գլոբալացման տակ հասկացվում է համաշխարհային առևտրի ու միջազգային փոխանակության այլ գործընթացների մասշտաբների վիթխարի ավելացումը առավել բաց, ինտեգրված, սահմաններ չճանաչող համաշխարհային տնտեսության պայմաններում: Դրանց հետ են կապված նաև գլոբալացման նկատմամբ տարբեր մոտեցումները. ոմանք գլոբալացումը դիտում են որպես համաշխարհային տնտեսական համակարգի սպառնալիք, իսկ մյուսները՝ համաշխարհային տնտեսության հետագա առաջընթացի գրավական: Շատերը գլոբալացումն ընկալում են որպես ազգային տնտեսությունների համաերկրագնդային միավորում և ունիվերսալացում: Այդ տեսանկյունից դիտարկելիս ծագում է գլոբալ գործընթացների հետևյալ հիմնախնդիրը. մի կողմից, որպես ազդեցության հիմնական առարկա, արտադրության հիմնական միջոց հանդես է գալիս մարդկային ինտելեկտը, որը ձգտում է զարգացման, լիարժեք ինքնադրսևորման: Մյուս կողմից, թվում է, թե գլոբալացումը հա-

մաշխարհային նույնականացման գործընթաց է, որը ձգտում է միջակ դարձնել բոլորին և ամեն ինչ:

Նեղ իմաստով գլոբալացումը կարելի է բնորոշել որպես միջազգայնացման բարձրագույն աստիճան: Գլոբալացումը մի գործընթաց է, որը միջազգայնացումից որակապես տարբերվում է ոչ միայն հասարակական կյանքի լայնամասշտաբ ոլորտների ընդգրկմամբ, այլև նրանով, որ դրա շնորհիվ ձևավորվում են համաշխարհային տնտեսությանը սերտաճած բաց ազգային տնտեսություններ:

Գլոբալացման հիմքում ընկած հիմնական գաղափարախոսության իմաստն այն է, որ բազմաթիվ հիմնախնդիրներ անհնար է համարժեքորեն գնահատել և ուսումնասիրել ազգային պետության մակարդակում: Փոխարենը, դրանց լուծումներն անհրաժեշտ է ձևակերպել գլոբալ գործընթացների համատեքստում:

Գլոբալացման բովանդակությունը բաղկացած է դրա ծագմամբ, դրսևորման ոլորտներով, գործունեության մեխանիզմներով ու հետևանքներով տարբերվող բազմաբնույթ գործընթացներից, որոնք ամբողջական են համակարգային առումով և խիստ հակասական են ներհամակարգային մակարդակներում:

Անհրաժեշտ է տարբերակել գլոբալացման առնվազն հինգ ուղղություն.

- ընդհանուր,
- բնապահպանական սահմանափակումներ,
- մշակութային գլոբալացում,
- տնտեսական գլոբալացում,
- քաղաքական գլոբալացում:

Միջազգայնացման գործընթացների տեսանկյունից գլոբալացումը հիմնվում է ոչ այնքան մարդկային և ապրանքային հոսքերի աճի, որքան տեղեկատվության ու գիտելիքների փոխանակման ակտիվացման վրա: Առավել լայն իմաստով գլոբալացումն իր մեջ ընդգրկում է այնպիսի գործընթացներ ու դրսևորումներ, ինչպիսիք են ապրանքների, ծառայությունների, կապիտալի, տեխնոլոգիաների ու տեղեկատվության տրանսսահմանային հոսքերը, մարդկանց միջպետական տեղաշարժը, առևտրում ու ներդրումային գործընթացներում դեպի միջազգային շուկա կողմնորոշման գերակշռումը, շուկաների տարածքային և ինստիտուցիոնալ ինտեգրացումը, ինչպես նաև գլոբալ հիմնախնդիրների առաջացումը, որոնց

լուծման համար անհրաժեշտ է համաշխարհային համագործակցություն: Այստեղ բավական առանձնահատուկ են դրսևորվում միջազգային հոսքերը, որոնք ազատականացման պայմաններում համարյա կամ ընդհանրապես չեն վերահսկվում ազգային օրենսդրությունների կողմից: Դրանք հիմնականում տեղեկատվությունն ու կապիտալի հոսքերն են:

Միջազգային արժույթային հիմնադրամի փորձագետները գլոբալացման ֆենոմենը բացատրում են որպես ապրանքների, ծառայությունների ու կապիտալի համաշխարհային հոսքերի գծով միջազգային գործարքների տարատեսակության ու ծավալների աճի արդյունքում, և ավելի ու ավելի արագ զարգացող տեխնոլոգիաների շնորհիվ բոլոր երկրների աճող տնտեսական փոխկապվածություն: Գլոբալացումն առաջընթացի առավել պայծառ դրսևորումն է, որն իր մեջ կրում է տնտեսական ու սոցիալական անհաշիվ նորամուծությունների ներուժը: Միաժամանակ, գլոբալացումը դեռևս իր սկզբնական փուլում ի հայտ է բերում նոր վտանգներ ու ռիսկեր, որոնք ողջ մարդկությանը ուղղված մարտահրավերներ են: Անհրաժեշտ է ընդգծել, որ գլոբալացումը մրցապայքար է ոչ միայն շուկաների, այլև արժեքների համար: Ներկա պահին միջազգային շուկաների համար մրցապայքարում վճռորոշ նշանակություն է տրվում ոչ թե հումքային պաշարներին, այլ ինտելեկտուալ ռեսուրսներին:

Գլոբալացումը դարձել է ժամանակակից աշխարհակարգի կարևոր և իրական բնութագիրը, մարդկային քաղաքակրթության զարգացման հետագա ընթացքը որոշող ազդեցիկ ուժերից մեկը:

Գլոբալացումն ազդում է հասարակական կյանքի բոլոր ոլորտների վրա, ներառյալ տնտեսությունը, քաղաքականությունը, սոցիալական ոլորտը, մշակույթը, բնապահպանությունը, անվտանգությունը և այլն: Առանց գլոբալացման օրինաչափությունների հաշվառման ներկայումս անհնար է կանխատեսել և իրականացնել ցանկացած պետության արտաքին քաղաքականությունը: Դա շատ դինամիկ, որոշակի արագացմամբ զարգացող գործընթաց է: Այդ պատճառով գլոբալ գործընթացները չի կարելի դիտարկել ստատիկ վիճակներում. զարգացման յուրաքանչյուր նոր փուլում դրանք ունեն իրենց առանձնահատկությունները, որոնք և փոփոխում են արտադրողական ուժերի բնույթն ու որակական հատկանիշները:

Գլոբալացումը պահանջում է աշխարհի՝ որպես միասնական ամբողջության մկատմամբ համապատասխան մոտեցման ու մտածելակերպի

ձևավորում, որը խիստ կարևոր է համընդհանուր հիմնախնդիրների կառավարման, անվտանգության ու համագործակցության հարցերի շուրջ մշտական քաղաքական երկխոսության կայացման համար:

Ինչպես էլ որ վերաբերվեն գլոբալացմանը դրա հակառակորդներն ու կողմնակիցները, անհրաժեշտ է խոստովանել, որ այն արդեն փոխել է համաշխարհային համակարգը՝ ծնելով նոր հիմնախնդիրներ ու գլոբալ զարգացման համար բացելով նոր հեռանկարներ: Ակնհայտ է, որ տեխնոլոգիական, քաղաքական, ինստիտուցիոնալ, գաղափարախոսական ու մշակութային զարգացման միտումներն ակտիվացնում են գլոբալացման գործընթացները: Աշխարհի երկրները դառնում են առավել բաց, ինտեգրացված ու փոխկապակցված:

Գլոբալացման դրական ազդեցությունը կապված է մրցունակության արդյունավետության հետ, իսկ բացասական ազդեցությունը՝ կոնֆլիկտների առաջացման հավանականության հետ, որոնցից կարելի է խուսափել գլոբալ համագործակցության զարգացման միջոցով:

Գլոբալացման գործընթացների օգուտներն ու վնասները դրանց մասնակիցների միջև բաշխվում են խիստ անհավասարաչափ: Գլոբալ համագործակցության մի բևեռում արտադրողականության բարձրացումը, ծախսերի կրճատումը, եկամուտների ու բարեկեցության աճը ձեռք են բերվում մյուս բևեռում անորոշության, ռիսկերի, անհավասարության և աղքատության մեծացման գնով: Քանի որ օգուտներն ու վնասները, շահերի համընկնումն ու հակասությունները միաժամանակ դրսևորվում են գալիս ոչ միայն առանձին երկրում, այլ նաև դրա սահմաններից դուրս, ապա հիմնախնդիրները չեն կարող լուծվել միայն միջպետական համագործակցության օգնությամբ: Ազգային շահերի ներդաշնակեցման, գլոբալացման գործընթացին մասնակցող բոլոր կողմերի համար ընդունելի «խաղի կանոնների» պահպանման համար անհրաժեշտ են գործառնության ճանաչումն ու մեխանիզմները: Առանձին երկրներ չեն կարող իրենց շայլություն թույլ տալ դուրս մնալ համաշխարհային շուկայի համակարգից՝ դրա համար վճարելով շատ մեծ գին:

Գլոբալացումն ունի նաև առավելություններ: Նախ, այն ծնել է միջազգային մրցակցության աննախադեպ սրացում: Առողջ մրցակցությունն ու շուկայի ընդլայնումը կբերեն մասնագիտացման ու աշխատանքի միջազգային բաժանման գործընթացների խորացման, որն էլ իր հերթին կխթանի

նի արտադրության աճը ոչ միայն ազգային, այլ նաև՝ միջազգային մակարդակում: Գլոբալացման և մեկ առավելություն է արտադրության մասշտաբով տնտեսումը, որը կհանգեցնի ծախսերի կրճատման ու գների իջեցման, հետևաբար, կայուն տնտեսական աճի: Արտադրության ռացիոնալացման և առաջավոր տեխնոլոգիաների ներդրման արդյունքում գլոբալացումը կբերի նաև աշխատանքի արտադրողականության աճ:

Գլոբալացման առավելությունները կապված են նաև փոխաշահավետ հիմքերի վրա ծավալվող միջազգային առևտրից ստացվող օգուտների հետ: Գլոբալացման վերջնական արդյունքը պետք է լինի բարեկեցության ընդհանուր աճի ապահովումն աշխարհում:

Չնայած գլոբալացման բոլոր առավելություններին, այն համաշխարհային տնտեսությունում առաջ է բերում նոր հակասություններ:

Առաջին հակասությունը զարգացած ու զարգացող երկրների միջև կտրուկ աճող խզումն է: Խզում, որը բացատրվում է ոչ համարժեք փոխանակության թռիչքաձև մեծացմամբ:

Երկրորդ, հենց գլոբալացման հողի վրա է տեղի ունենում շուկայական ու ֆինանսական մեխանիզմների կերպափոխումը: Ընդհանրացված ձևով այն դրսևորվում է մրցակցության գործիքների հակաազատական կերպափոխման միջոցով: Մրցակցությունը վեր է ածվում հակամրցակցության: Այն այլևս չի նպաստում ետ մնացող երկրների դրոպապատճառային մեխանիզմների ու մրցակցային առավելությունների զարգացմանը, այլ ոչնչացնում է շատ շատերին, որոնք այլ՝ հավասար պայմաններում իրենց հնարավորությունները լիարժեք դրսևորելու հնարավորություն կունենային:

Երրորդ, որպես տնտեսության կայուն զարգացման սպառնալիք հանդես է գալիս գլոբալ կապիտալի, հատկապես սպեկուլյատիվ կապիտալի, էքսպանսիան: Ներկայումս կապիտալի զգալի մասը նոր, սովորական շահույթի հետ անհամաչափելի, գլոբալ եկամուտների ազդեցության ներքո վերակողմորոշվում է դեպի սպեկուլյատիվ հարստացում: Սպեկուլյատիվ հոսքերի ծնունդ հանդիսացող հզոր ալիքներն ապակազմակերպում են ոչ միայն զարգացող, այլ նաև զարգացած երկրների տնտեսությունները: Փոխվում է համաշխարհային ՀՆԱ-ի արտադրության բնույթը: Դրա մեջ արագ աճում է գիտատար արտադրանքի մասնաբաժինը: Տեղեկատվության ու հարակից արտադրանքների արտադրությունը դառնում է զարգացման կարևորագույն ցուցանիշ: Մարդկային ինտելեկտուալ կապի-

տալը ավելի ու ավելի է դառնում անմիջական արտադրողական ուժ:

Գլոբալացման առաջին հիմնախնդիրը կապված է այն հարցի հետ, թե ո՞վ կշահի գլոբալացումից: Փաստորեն, ներկայումս առավելությունների հիմնական մասը ստանում են հարուստ երկրները: Գլոբալացման բարիքների անհավասարաչափ բաշխումը դառնում է առձակատումների սպառնալիք ազգային, տարածաշրջանային ու միջազգային մակարդակներում:

Երկրորդ հիմնախնդիրը կապված է համաշխարհային մակարդակում ազգային տնտեսությունների փոխկախվածության հետևանքով տարածաշրջանային կամ գլոբալ հնարավոր անկայունության հետ: Լոկալ տնտեսական տատանումները կամ ճգնաժամերը առանձին երկրում կարող են ունենալ տարածաշրջանային կամ մուլտինազգային գլոբալ հետևանքներ: Նման հնարավորությունն ունի ոչ միայն տեսական, այլև իրական բնութագիր, որն ապացուցվել է ոչ վաղ անցյալի պատմությամբ: Նման իրավիճակը վկայում է փոխկապակցված տնտեսությունների խոցելիության մասին:

Գլոբալացման հետևանքով ի հայտ եկող հիմնախնդիրների երրորդ շրջանակը կապված է այն հարցի հետ, որ առանձին երկրների տնտեսությունների նկատմամբ վերահսկողությունը ինքնիշխան կառավարություններից կարող է անցնել առավել հզոր պետություններին, բազմազգ կամ գլոբալ կորպորացիաներին ու միջազգային կազմակերպություններին: Տվյալ ենթատեքստում գլոբալացումը կարելի է ներկայացնել մի գործընթաց, որը վտանգ է ներկայացնում ազգային ինքնիշխանության համար:

Գլոբալացումը մեծ ազդեցություն է գործում բոլոր երկրների տնտեսությունների վրա և ունի բազմաասպեկտ բնույթ: Ազգային տնտեսության վրա գլոբալացման ազդեցության որոշակի ասպեկտներ առանձնահատուկ ընդգծման կարիք են զգում: Առաջին հերթին նշենք արտասահմանյան ուղղակի ներդրումների բարձր տեմպերը: Երկրորդ ասպեկտը վերաբերում է տեխնոլոգիական նորամուծություններին: Նոր տեխնոլոգիաները հանդիսանում են գլոբալացման շարժիչ ուժերից մեկը:

Շատ հաճախ գլոբալացման գործընթացներից առաջացող բացասական հետևանքների շարքին են դասում նաև գործազրկության առկայությունը աշխատավարձի բարձր մակարդակ ունեցող զարգացած երկրներում: Սակայն այդ փաստարկը ի չիք է դառնում այդ երկրներից շատերում առկա գործազրկության համեմատաբար ցածր մակարդակով ու դրա բարձր մակարդակով զարգացող երկրներում, որտեղ և աշխատավարձի

մակարդակն է անհամեմատ ցածր: Յուրաքանչյուր երկրում տարվող ազգային քաղաքականությունն ու տեխնոլոգիական առաջընթացն անհամեմատ ավելի մեծ չափերով են ազդում գործազրկության վրա, քան գլոբալացման գործոնները: Գլոբալացման հետ է կապվում նաև այն առասպելը, թե այն սպառնում է որոշ երկրների սոցիալական բարեկեցությանը: Սակայն այդ ուղղորտի վրա առավել մեծ ազդեցություն են թողնում այլ գործոններ՝ հարկային քաղաքականությունը և ժողովրդագրական միտումները:

Պետք է նշել, որ տնտեսական ասպեկտները հանդիսանում են սոսկ գլոբալացման հետևանքների բաղադրիչներից մեկը: Գլոբալացումն առաջ է բերում նաև ոչ տնտեսական բնույթի հետևանքներ: Օրինակ, անվտանգության բնագավառում, որտեղ գլոբալացման գործընթացները կարող են առաջացնել կոնֆլիկտային իրավիճակներ: Հաջորդ ոչ տնտեսական հետևանքը քաղաքական ճգնաժամերի առաջացումն է, որոնց նկատմամբ ոչ համարժեք վերաբերմունքը կարող է ծնել առավել լայնամասշտաբ բացասական գործընթացներ: Որպես երրորդ հետևանք կարելի է նշել բնապահպանությունն ու առողջապահությունը: Գլոբալ զարգացումները հղի են նաև գլոբալ բնապահպանական և առողջապահական աղետների առաջացմամբ, կապված, օրինակ, կլիմայի համընդհանուր փոփոխության ու վարակիչ հիվանդությունների լայնածավալ բռնկման հետ:

Ընդհանուր առմամբ, գլոբալացման տնտեսական, քաղաքական, սոցիալական և այլ բնույթի հիմնախնդիրների լուծումը պահանջում է աշխարհի բոլոր հզոր երկրների, հատկապես Եվրամիության երկրների, ԱՄՆ-ի, Կանադայի, Ռուսաստանի, Ճապոնիայի, Չինաստանի, Հնդկաստանի, Բրազիլիայի և այլն սերտ համագործակցությունը: Անհրաժեշտ է մոդեռնացնել գլոբալ հեռանկարներ ունեցող միջազգային ինստիտուտները կամ նորովի ստեղծել և կատարելագործել դրանց գործունեության թափանցիկությունն ու հրապարակայնությունն ապահովող մեխանիզմները:

Գլոբալացման գործընթացների հետևանքով առաջացող հիմնախնդիրների լուծման արդյունավետ մեխանիզմ կարող են ծառայել գլոբալ համագործակցության արդյունքում ստեղծված միջազգային ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտները: Դրանց միջոցով հնարավոր կլինի գլոբալացվող աշխարհում հասնել համընդհանուր կայունության ու տնտեսական առաջընթացի:

Գոյություն ունեցող գլոբալ հիմնախնդիրները կարելի է համակարգել

հետևյալ կերպ.

- միջազգային սոցիալ-քաղաքական հիմնախնդիրներ. միջուկային պատերազմի կանխում, սպառազինության մրցավազքի մակարդակի նվազում, տարածաշրջանային ու միջպետական առճակատումների կարգավորում, ժողովուրդների միջև վստահության ամրապնդում, համընդհանուր անվտանգության համակարգի ձևավորում,

- միջազգային սոցիալ-տնտեսական ու բնապահպանական հիմնախնդիրներ. թերզարգացման ու դրա հետ կապված աղքատության և մշակութային հետամնացության հաղթահարում, էներգետիկ, հումքային ու պարենային ճգնաժամերի հաղթահարման ուղիների որոնում, ժողովրդագրական իրավիճակի օպտիմալացում, խաղաղ նպատակներով տիեզերական տարածության ու համաշխարհային օվկիանոսի յուրացում, բնապահպանական անվտանգության ապահովում,

- մարդու հիմնախնդիրներ. մարդու հիմնական իրավունքների և ազատությունների ապահովում, մարդկային բնականոն կենսագործունեության համար անհրաժեշտ պայմանների բարելավում, հասարակական հարաբերությունների ժողովրդավարացում, մշակույթի զարգացում և այլն:

Տեղեկատվությանը բավականին մեծ դեր է վերապահված ժամանակակից աշխարհի զարգացման գործում: Տեղեկատվական գործընթացները ստեղծել են արտաքին քաղաքական ներազդեցության նոր գործիքներ: Դասական գործիքների՝ ռազմական ուժ, տնտեսություն, դիվանագիտություն, շարքում տեղեկատվական ռեսուրսները ձեռք են բերում առաջնային նշանակություն: Այդ տեսակետից այսօր պետության կողմից ազգային շահերի պաշտպանությունը անհնար է առանց տեղեկատվական անվտանգության ապահովման, առանց ազդեցության տեղեկատվական ռեսուրսի ձևավորման: Ներկայումս տեղեկատվական պատերազմը վեր է ածվել պետության արտաքին քաղաքականության լիարժեք գործիքի: Ի մասնավորի, Ինտերնետն այսօր ձևավորում է ոչ միայն, այսպես կոչված, միջազգային հանրության, այլ նաև բազմաթիվ երկրների հասարակական կարծիքը: Տեղեկատվության ոլորտում ի հայտ է գալիս պետական ինքնիշխանության սահմանափակում, եթե ոչ դրա իսպառ վերացում:

Ինչպիսի՞ն կարող է լինել գլոբալացման «մաքուր» արդյունքը՝ հաշվի առնելով դրա բացասական ու դրական հետևանքները: Այս հարցի պա-

տասխանը մեծապես կախված է միջազգային համակարգի բնութագրից: Եթե աշխարհը հեղեղված լինի տարաբնույթ առճակատումներով, ապա ակնհայտ է, որ գլոբալացումը կունենա բացառապես բացասական արդյունքներ: Եվ հակառակը, եթե երկրագունդը շարժվի համագործակցության և արարման ճանապարհով, ապա գլոբալացման հետևանքները կլինեն առավելապես դրական: Այսպիսով, գլոբալացման գործընթացների ակտիվացման ներկա իրավիճակի կարևորագույն խնդիրն այնպիսի միջազգային համակարգի ստեղծումն է, որը թույլ կտա գլոբալացումից քաղել առավելագույն դրական արդյունք՝ հնարավորինս չեզոքացնելով դրա վնասակար ազդեցությունը: Որպես նման համակարգի անկյունաքար կարող են հանդես գալ երկրների միջև համագործակցության ծավալումը և այդ բնագավառի դինամիկ նորամուծությունները:

Վերջին տասնամյակների ընթացքում ի հայտ են եկել գլոբալացման մի շարք պատճառներ:

Առաջինը տեխնոլոգիական առաջընթացն է, որը բերեց տրանսպորտային ու հաղորդակցության, տեղեկատվության մշակման, պահպանման և օգտագործման ծախսերի կրճատման:

Գլոբալացման երկրորդ պատճառը առևտրի ու տնտեսական գործունեության մյուս ձևերի ազատականացումն է: Դրա արդյունքում վերացան ապրանքների, ծառայությունների և կապիտալի ազատ տեղաշարժը խոչընդոտող արգելքները, միջազգային տնտեսությունը դարձավ ավելի թափանցիկ:

Գլոբալացման երրորդ պատճառը կարելի է համարել կազմակերպությունների ու ֆիրմաների գործունեության ոլորտների նշանակալից ընդլայնումը, որը հնարավոր դարձավ ինչպես տեխնոլոգիական առաջընթացի, այնպես էլ հաղորդակցության նոր միջոցների ինտենսիվ օգտագործման արդյունքում:

Գլոբալացման չորրորդ պատճառը կարելի է համարել համաերկրագնդային առումով շուկայական տնտեսության և ազատ առևտրի համակարգի նկատմամբ գլոբալ միակարծության ձևավորումը:

Հիմնգրորդ պատճառը գտնվում է մշակութային զարգացման առանձնահատկությունների մեջ: Խոսքն այստեղ գնում է համասեռ գլոբալ արվեստի, զանգվածային լրատվության միջոցների ձևավորման միտումների ու միջազգային ասպարեզում անգլերեն լեզվի, որպես հաղորդակցու-

թյան համընդհանուր միջոցի, օգտագործման մասշտաբների ընդլայնման մասին: Մասնավորապես, հենց այդ պատճառով էլ որոշ երկրներ գլոբալացման գործընթացներին վերաբերում են որպես ԱՄՆ-ի գլոբալ առումներով մշակութային, տնտեսական ու քաղաքական հեգեմոնիայի հասնելու փորձի:

Գլոբալացման գործընթացների ամենակարևոր հետևանքը մարդկային պատմության մեջ ժամանակի գործոնի որակական նոր ընկալումն է: Եթե քաղաքակրթության վաղ փուլերում մարդու կեցության նյութական ու մշակութային միջավայրերի որակական փոփոխությունները տեղի էին ունենում հազարամյակների ընթացքում, երկրորդ հազարամյակում՝ 200-300 տարում, ապա 20-րդ դարի վերջից մարդկային կյանքի տնտեսական, մշակութային ու հոգեբանական բաղադրիչները փոփոխվում են մեկ սերնդի կյանքի ընթացքում: Հազարամյակներն ու հարյուրամյակները «տեղավորվում են» 20-30 տարվա սահմաններում: Դա իր հերթին մեծացնում է անկայունությունն ու իրավիճակի անկանխատեսելիությունը, նույնիսկ զարգացած երկրներում:

Միջազգայնացման գործընթացի կարևոր բաղադրիչներից ու գլոբալացման հիմնական պատճառներից է հանդիսանում տրանսազգայնացման երևույթը, որի շրջանակներում երկրներից յուրաքանչյուրի արտադրության, սպառման, արտահանման, ներմուծման և եկամուտների զգալի մասը կախված է տվյալ պետության տարածքից դուրս գտնվող միջազգային կենտրոնների որոշումներից: Առաջատար ուժերի դիրքերում այստեղ հանդես են գալիս տրանսազգային կորպորացիաները, որոնք միաժամանակ և գլոբալացման արդյունք են, և դրա շարժիչ ուժը:

Վերջին տասնամյակները բնութագրվում են համաշխարհային տնտեսության տրանսազգայնացման աստիճանի բարձրացմամբ և աշխարհի ամբողջականության խորացմամբ: Միջազգայնացման խորացման արդյունք է ազգային տնտեսությունների փոխներգործությունն ու փոխկապվածությունը: Նախկինում ազգային կառավարությունների կողմից իրականացվող բազմաթիվ գործառույթներ անցնում են տրանսազգային կորպորացիաներին ու քաղաքացիական հասարակության ինստիտուտներին: Ազգային ու միջազգային ոչ կառավարական կազմակերպություններն աճող ազդեցություն են ունենում հասարակական կարծիքի ու քաղաքականության վրա, կատարում են սոցիալական պաշտպանության

գործառույթներ ու նույնիսկ մասնակցում են ՄԱԿ-ի կոմիտեների ու հանձնաժողովների աշխատանքներին: Համաշխարհային տնտեսական համակարգի միջուկը կազմում են տրանսազգային մոտ 500 կորպորացիաներ, որոնք ունեն գրեթե անսահմանափակ տնտեսական իշխանություն:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում դժվար թե գտնվի մեկը, որը կփորձի կասկածանքի տակ դնել այն ճշմարտությունը, որ բոլոր մարտահրավերները, որոնց հետ բախվում է ու հետագայում ևս կբախվի Հայաստանը, կապված են գլոբալացման գործընթացների հետ: Այսօր ակնհայտ են դառնում համաշխարհային զարգացմանը բնորոշ գլոբալացումից ակնկալվող դրական արդյունքները: Միաժամանակ, չի կարելի չնկատել, որ հիշյալ գործընթացը կարող է կործանարար լինել, եթե հաշվի չառնվեն երկրի առանձնահատկությունները և տնտեսական ու քաղաքական գերակայությունները: Այնպիսի երկրի համար, ինչպիսին Հայաստանի Հանրապետությունն է, գլոբալացումն իր մեջ ներառում է և գրավիչ կողմեր, և բազմաթիվ ռիսկեր: Այս ամենով հանդերձ ճանապարհը դեպի գլոբալ տարածություն այլընտրանք չունի, քանի որ ինքնամեկուսացումը ստեղծում է ապահովության խաբուսիկ ու ժամանակավոր շղարշ:

## *1.2 Տեղեկատվական համակարգի զարգացումը որպես գլոբալացման շարժիչ ուժ*

Ի տարբերություն մարդկության պատմության մյուս ժամանակահատվածների, վերջին երկու տասնամյակը բնութագրվում է բացառապես նոր երևույթով՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի հեղափոխությամբ: Տեղեկատվական տեխնոլոգիաները բազմակի անգամ արագացրեցին գլոբալացման գործընթացի պատմական օբյեկտիվ ընթացքը:

Ակնհայտ է, որ տեղեկատվական տեխնոլոգիաները հանդիսանում են գլոբալացման գործընթացի ներկա փուլի արագացուցիչն ու բովանդակությունը: Բայց, այնուամենայնիվ, դրանց հետագա զարգացումը իր մեջ պարունակում է նաև իրական վտանգներ: Թվում է, թե ոչ մի վատ բան չկա աշխարհի միավորման, համաերկրագնդային էգոյի ձևավորման մեջ: Միթե՞ դա չի նշանակի բոլոր պատերազմների և աշխարհաքաղաքական հակասությունների վերջը: Սակայն, կենսունակ է նաև այն տեսակետը, հա-



մածայն որի գիտատեխնիկական առաջընթացի վրա հիմնված գլոբալացումը իրականում կհանգեցնի հատկապես փոքրաթիվ ազգերի հոգևոր և ինտելեկտուալ ստրկության, դրանց պետական ինքնիշխանության և ազգային ինքնատիպության կորստի:

Նոր տեխնոլոգիաների արագ զարգացումը կառաջացնի տնտեսական մրցակցության աննախադեպ աշխուժացում միջազգային մրցաբեմում: Հայաստանի, ինչպես նաև նախկին խորհրդային հանրապետությունների մեծամասնության համար նման սցենարի զարգացումը հատկապես անցանկալի է, որովհետև քանի դեռ մենք գտնվում ենք պոստամբողջատիրական սինդրոմը հաղթահարելու գործընթացում, մնացյալ աշխարհը կհասնի զարգացման էլ ավելի բարձր մակարդակի:

Այսօր գլոբալացման շրջանակներում Արևմուտքի կողմից իրականացվում է գլոբալ տեղեկատվական-մշակութային ու տեղեկատվական-գաղափարախոսական էքսպանսիա: Դա հիմնականում կյանքի է կոչվում միջազգային հեռահաղորդակցման ցանցերի (օրինակ, Ինտերնետի) ու զանգվածային լրատվության միջոցների օգնությամբ: Բազմաթիվ երկրներ, այդ թվում և Հայաստանը, ստիպված կլինեն առանձնահատուկ ձեռնարկել միջոցներ իրենց քաղաքացիներին, մշակույթը, սովորություններն ու հոգևոր արժեքները օտար տեղեկատվական ազդեցություններից զերծ պահելու համար: Երկրի ազգային անվտանգությունը էականորեն կախված է տեղեկատվական անվտանգության ապահովումից և գիտատեխնիկական առաջընթացին զուգընթաց այդ կախվածությունն էլ ավելի կաճի:

20-րդ դարի վերջը նշանավորվեց բարձր տեխնոլոգիաների, այդ թվում և տեղեկատվական ոլորտների շեշտակի զարգացմամբ: Ներկայումս անհնարին է պատկերացնել որևէ ոլորտ առանց համակարգչային տեխնոլոգիաների կիրառման: Չնայած Հայաստանում այդպիսի տեխնոլոգիաների զարգացման և ներդրման դանդաղ տեմպերին, այնուամենայնիվ ձեռնարկությունների ղեկավարները բացահայտ շահագրգռվածություն են ցուցաբերում դրանց ներդրման, ձեռնարկությունների գործունեության արդյունավետության բարձրացման գործում: Այդ խնդիրների լուծմանը էապես կարող է նպաստել մարքեթինգային ծառայության ստեղծումը և Ինտերնետ ծառայությունների ներդրումը ձեռնարկություններում:

Տեղեկատվական գործիքների համալիրը տնտեսվարող սուբյեկտներին հնարավորություն է ընձեռնում ուսումնասիրել շուկան, որոշել ար-

տադրանքի նկատմամբ եղած պահանջարկը, վերլուծել առկա մրցակցությունը և այդ տվյալների հիման վրա պլանավորել ձեռնարկության ռազմավարությունը:

Տեղեկատվական համակարգերի կիրառումը հիմնավորվում է հետևյալ համաշխարհային միտումներով`

- գլոբալ տնտեսության առաջացում,
- արդյունաբերական տնտեսության անցում գիտական նվաճումների և տեղեկատվական ծառայությունների վրա հիմնված տնտեսության:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը հանգեցրեց նրան, որ մրցակցությունը ազգային մակարդակից դուրս եկավ գլոբալ շուկաների մակարդակ՝ ի հայտ բերելով աշխատանքի միջազգային բաժանման ու մասնագիտացման խորացում: Տեղի է ունենում ազգային շուկաների դերի փոփոխում. ավելի շատ կողմնորոշվելով մրցակցության բավականին կոշտ պայմաններ ունեցող գլոբալ շուկա, ազգային արտադրությունը ձգտում է ապահովել արդյունավետություն ու ներքին պահանջարկի որակյալ բավարարում: Իսկ ժամանակակից պայմաններում կայուն և մրցունակ են այն երկրների ազգային տնտեսությունները, որոնք հաջողությամբ յուրացնում և օգտագործում են տրանսազգային ու տարածաշրջանային ինտեգրման ընձեռած հնարավորությունները` հենվելով զարգացած տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգի առավելությունների վրա:

Համաձայն լայնորեն տարածված ժամանակակից փիլիսոփայական տեսություններից մեկի` մոդեռնացման տեսության, համաշխարհային մոդեռնացման գործընթացը կապված է զարգացման հետինդուստրիալ փուլ քաղաքակրթության մուտքի հետ, որն ունի իր առանձնահատկությունները:

Ալնիայտ է, որ 20-րդ դարի վերջին տասնամյակները բեկում մտցրեցին համաշխարհային քաղաքակրթության զարգացման մեջ: Գլոբալ մոդեռնացման գործընթացներում ընդգրկված են հասարակության ու պետության կենսագործունեության հիմնական ոլորտները` բնապահպանական փոխհարաբերությունները, հասարակական հարաբերությունները, սոցիալական կարգավորման խնդիրները: Կարելի է խոսել քաղաքակրթության էվոլյուցիայի պատմական մեկ պարբերաշրջանի (ինդուստրիալ) ավարտի ու նորի (տեղեկատվական) սկզբնավորման մասին: Նոր ժամանակահատվածի գլխավոր առանձնահատկությունը հասարակական կյանքի

հիմնական ոլորտներում տեղեկատվական միջավայրով և ենթակառուցվածքներով մարդկային գործունեության միջնորդավորվածությունն է: Ձարգացման հետինդուստրիալ փուլի վճռորոշ գործոնը տեղեկատվական հեղափոխությունն է:

Ա. Տոֆֆլերը իր «Երրորդ ալիք» աշխատության մեջ տեղեկատվական հեղափոխությունը դասում է տեխնոլոգիական մեծ հեղափոխությունների՝ ագրարայինի և արդյունաբերականի, շարքին:

Ա. Ռակիտովը ընդգծում է տեղեկատվական հեղափոխությունների հարահու բնույթը և նշում այն փաստը, որ ժամանակակից քաղաքակրթության զարգացման գործընթացում տեղի ունեցած բոլոր սոցիալական ու տեխնոլոգիական հեղափոխություններն իրենց սկզբնավորումը ստացել են շնորհիվ տեղեկատվական հինգ հեղափոխությունների:

Տեղեկատվական բոլոր հեղափոխությունների շարքում բացառիկ նշանակություն է տրվում հինգերորդ հեղափոխությանը, որը կապված է համակարգչային տեխնիկայի ու հեռահաղորդակցության նորագույն միջոցների ստեղծման հետ: Ըստ էության, տեղեկատվական-համակարգչային հեղափոխությունը թույլ տվեց ստեղծել ու սոցիալական շրջանառության համակարգին միացնել տեղեկատվության այնպիսի հոսքեր, որոնք ներկայումս լիարժեքորեն բավարարում են առավելագույն ռացիոնալ բնօգտագործման ապահովմանն ու մարդկային ռեսուրսների ժողովրդագրական, տնտեսական, ինդուստրիալ, ագրարային և հոգևոր-մշակութային զարգացմանը:

Ակնհայտ է, որ ժամանակակից տեղեկատվական հեղափոխության երևույթը արդյունք է մարդկության պատմության ողջ ժամանակահատվածում զուգահեռաբար զարգացող երկու գործընթացների՝ հասարակության կենսագործունեության ապահովման համար անհրաժեշտ տեղեկատվության դերի անընդհատ բարձրացման ու դրա ծավալների մեծացման և տեղեկատվության կուտակման ու տարածման տեխնոլոգիաների կատարելագործման:

Տեղեկատվությունը յուրահատուկ ռեսուրս է, որը ստեղծվում է հասարակության կողմից՝ նրա կենսագործունեության ընթացքում:

Մեր օրերում կարելի է առանձնացնել տեղեկատվության բնորոշման հետևյալ հիմնական մոտեցումները.

- տեղեկատվությունը տեղեկությունների ամբողջություն է, որն անհրա-

ժեշտ է կառավարվող համակարգի վրասպտիմալացման նպատակով ներագրելու համար,

- տեղեկատվությունը հասարակության գործունեության բոլոր ոլորտների ներ մասնագիտական տվյալների հավաքածու է,

- տեղեկատվությունը հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման անհրաժեշտ ռեզերվն ու ռեսուրսն է, որը նման է մյուս՝ աշխատանքային, էներգետիկ, նյութական ռեսուրսներին,

- տեղեկատվությունը հասարակության կենսաապահովության համակարգի արժեքավոր ինտելեկտուալ ռեսուրսն է, նրա մտավոր սեփականության կարևորագույն բաղադրիչը:

Տեղեկատվության, տեղեկատվական ռեսուրսների առանձնահատկությունը կայանում է նրանում, որ չնայած դրանց անընդհատ աճող սպառմանը, տեղի է ունենում դրանց պարբերաբար աճող ծավալների կուտակում: Հենց այդ հատկանիշն էլ խթանում է տեղեկատվական ռեսուրսների շահագործման տեխնոլոգիաների՝ տեղեկատվական-հեռահաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) զարգացումն ու կատարելագործումը:

20-րդ դարի վերջը դարձավ հետինդուստրիալ տնտեսության ծաղկման ժամանակաշրջան: Տնտեսական առաջընթացի հիմնական գործոնի դերը վերապահվեց տեղեկատվությանն ու գիտելիքներին: Հենց դրանք են այն ռազմավարական ապրանքները, որոնց պահանջարկն անընդհատ աճում է և որոնք ունեն ամենափոքր գնային ճկունությունը:

Տեղեկատվության տեղափոխման ունիվերսալ ու գլոբալ միջոցի՝ Ինտերնետի, ի հայտ գալը և հաղորդող ու ընդունող սարքավորումների ոլորտում իրականացված տեխնոլոգիական հեղափոխությունը հանգեցրել են անսովոր իրավիճակի՝ բոլորը, ովքեր կապված են տեղեկատվական ինդուստրիայի հետ, դառնում են մրցակիցներ:

Գլոբալացման ներկա գործընթացների էական առանձնահատկությունը հասարակական կյանքում նոր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման մասշտաբների էքսպոնենցիալ աճն է: Այդ գործընթացներում առանձնահատուկ դերակատարում ունի Ինտերնետ գլոբալ ցանցը, որը հանդիսանալով զանգվածային հաղորդակցության ինտերակտիվ միջոց, լայնորեն կիրառվում է հասարակության քաղաքական կյանքում:

Խոսելով ժամանակակից հասարակական կյանքում ընթացող քաղաքական գործընթացների վրա Ինտերնետի ունեցած ներգործության մա-

սին, պետք է նշել, որ դրա միջոցով տեղեկատվության ստացումը դրական հասարակական զարգացումներին զուգընթաց թողնում է նաև սոցիալական բացասական հետևանքներ: ԱՄՆ-ում, որտեղ կա այդ բնագավառի հսկայական փորձ, պետական կարգավորումից ազատ Ինտերնետ-քաղաքականությունը լուրջ քննադատության է ենթարկվում: Մասնավորապես, անհատական տվյալների չսանկցիավորված օգտագործման հաճախակի դեպքերը սկսում են անհանգստացնել սպառողների իրավունքներն ու քաղաքական ազատությունները պաշտպանող տարբեր հասարակական կազմակերպությունների:

1998թ. գլոբալ տեղեկատվական ցանցում տեղեկատվության կուտակման ծավալը կազմել է 12 տերաբայթ (12X10<sup>12</sup> բայթ): Համաձայն ուսումնասիրությունների արդյունքների, ցանցում օրական հայտնվում է միջինը կես միլիոն նոր էջ, վայրկյանում՝ 20 էջ:

Ցանցի պատմությունը խիստ բացառիկ է: Ծնունդ առնելով 1969թ. Կալիֆոռնիայում, 1990թ. Ինտերնետը իր մեջ ներառում էր ավելի քան 3000 ակտիվ ցանցեր ու 200000 համակարգիչներ: 1998թ. տվյալներով այն երկրների շարքին, որտեղ Ինտերնետն արդեն դարձել է սոցիալական ու տնտեսական իրականություն, կարելի է դասել ԱՄՆ-ին, որի չափահաս բնակչության 40%-ը օգտվում է դրանից: Մեծ Բրիտանիայում այդ ցուցանիշը 20% է, Կանադայում՝ 36, Ավստրալիայում՝ 28, Նիդերլանդներում՝ 22, Գերմանիայում՝ 20, Բելգիայում՝ 14, Հարավային Կորեայում՝ 13, ճապոնիայում՝ 12%: «Շեմային» Ինտերնետ-պետություններ են Ֆրանսիան և Իսպանիան՝ 9%, Չիլին՝ 7%:

Տեղեկատվական ու հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտում ընթացող հեղափոխությունը շարունակում է մնալ համաշխարհային տնտեսության գլոբալացման և ապանյութականացման հիմնական շարժիչ ուժը:

Տնտեսական գործունեության համար Ինտերնետի գրավչությունը հաստատելու նպատակով ներկայացնենք որոշակի տվյալներ, որոնք վերցված են տարբեր կազմակերպությունների հաշվետվություններից:

“InterNet Info” զեկույցում (օգոստոս 1996թ.) նշվում է, որ միայն 1996թ. առաջին կիսամյակում Ինտերնետի առևտրային մասն աճել է 139%-ով: “Corporate Cyber-Dash Surveiy” զեկույցում (մայիս 1996թ.) բերված են ԱՄՆ-ի և Եվրոպայի 500 կորպորացիաների շրջանում կատարված հար-

ցախույզի տվյալները. դրանց 66%-ն արդեն միացված էր Ինտերնետին, 80%-ը Ինտերնետը դիտարկում է որպես կարևորագույն կոմունիկացիոն գործիք: KPMG կոմպանիայի զեկույցում (նոյեմբեր 1996թ.) նշվում է, որ Ինտերնետը դեռևս չի փոխարինել, այսպես կոչված, “tete-a-tete” բիզնեսին, բայց հարցված մենեջերների և հարկային մասնագետների 56%-ը կարծում է, որ Ինտերնետը մեծապես կազդի իրենց բիզնեսի միջազգայնացման վրա: 1996թ. դեկտեմբերին “Forrester” ֆիրման հաղորդել էր, որ ԱՄՆ 50 խոշորագույն կորպորացիաների տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինների ղեկավարների շրջանում անցկացված հարցմամբ պարզվել է, որ նրանց 46%-ն ակնկալում է, որ Ինտերնետը զգալիորեն կազդի իրենց առևտրային գործընթացների վրա: “Project 2000” ամսագրի 1996թ. ապրիլյան համարում բերված են տվյալներ այն մասին, որ 1.5 մլն մարդ գնումների համար արդեն օգտագործել է «համաշխարհային սարդոստայնը»

Եվրոպայում գործարարության ոլորտում էլեկտրոնային փոստի և Ինտերնետի օգտագործումը 1996թ. 10%-ից այսօր արդեն հասել է 25%-ի: Շատ հավանական է, որ բիզնեսում նման միջոցների օգտագործման ցուցանիշը 90%-ի կհասնի ԱՄՆ-ում՝ 2003թ., իսկ Եվրոպայում՝ 2005թ.:

Անհրաժեշտ էր 100 տարի, որպեսզի սովորական հեռախոսից օգտվեին 700 մլն մարդ և մոտ 30 տարի, որպեսզի էլիտար ծառայությունից այն վերածվեր կենցաղային ենթակառուցվածքի տարրի: Ներկայումս հեռախոսակապի զարգացումը կապված է բջջային տարատեսակի հետ: Արդեն 1997թ. բջջային հեռախոսի բաժանորդների թիվը գերազանցում էր սովորական հեռախոսակապից օգտվողների թվին: Եվրոպայում բջջային հեռախոսացանցը աճում է ավելի արագ, քան Ինտերնետը: Այսօր աշխարհում հաշվվում է բջջային հեռախոսի ավելի քան 200 մլն բաժանորդ (մոտ 90 մլն՝ Եվրոպայում): Ըստ կանխատեսումների 2005թ. այդ ցուցանիշը կհասնի 1 մլրդ-ի: Սակայն, պայմանավորված սոցիալ-տնտեսական իրավիճակով, Երկիր մոլորակի բնակչության 2/3 մասը դեռևս չի կարողանա օգտվել հեռախոսի ծառայություններից:

Այսօր արդեն Ինտերնետից օգտվում է մոտ 300 մլն բաժանորդ՝ 80 մլն ԱՄՆ-ում և մոտ 40 մլն՝ Եվրոպայում: 2010թ. այդ թիվը կարող է հասնել 1 մլրդ-ի:

Գլոբալացման գործընթացները միաժամանակ կխթանվեն և էլեկտրո-

նային կոմերցիայի զարգացմամբ, և առևտրային պայմանների հետագա ազատականացմամբ: Այսօր էլեկտրոնային կոմերցիան կազմում է կոմերցիոն ողջ ակտիվության 2%-ը: 2005թ. այն կաճի մինչև 10%-ի:

Կառավարման բնագավառի ամերիկացի մասնագետ Գ. Պուպելի կարծիքով, տեղեկատվական տեխնոլոգիաներ ասելով անհրաժեշտ է հասկանալ հասարակական կյանքի բոլոր ոլորտների համար հաշվողական տեխնիկայի ու կապի միջոցների օգտագործումը տեղեկատվության ստեղծման, կուտակման, փոխանցման, պահպանման ու մշակման համար: Տեղեկատվական տեխնոլոգիաները դիտարկվում են և որպես տեղեկատվական բիզնեսի բաղադրիչ, և որպես ենթակառուցվածքի առանձին սեկտոր, որը զարգանում է ինքնուրույն: Համաձայն ամերիկյան մասնագետների, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի շարժիչ ուժը հանդիսանում են տեղեկատվական հետևյալ հինգ միտումները.

- տեղեկատվական արդյունքի դերի բարձրացում,
- դրանց համատեղելիության զարգացում,
- միջանկյալ օղակների վերացում,
- գլոբալացում,
- կոնվերգենցիա:

Տեղեկատվական արդյունքի դերի բարձրացումը ի հայտ է գալիս ծրագրային միջոցների, տվյալների բազայի տեսքով: Հետևաբար, մտավոր աշխատանքի մասնակիցների գործունեությունը մեծ մասամբ կախված է ստացվող տեղեկատվության բովանդակությունից, ճշգրտությունից և ստացման ժամանակից: Ամերիկյան փորձը ցույց է տալիս, որ ֆիրմաների մեծ մասը հսկայական միջոցներ են ծախսում տեղեկատվական արդյունքի վրա:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հաջորդ միտումը տեղեկատվական համակարգի ֆիզիկական ու տրամաբանական բոլոր տարրերի փոխգործողության հատկությունն է: Իսկ դրա կարևորագույն նախապայմանը ստանդարտացման գործընթացներն են:

Բիզնեսի տարբեր ոլորտներում տեղեկատվական տեխնոլոգիաների ներթափանցման աստիճանին զուգընթաց փոխվում են ինքնարժեքի ցուցանիշները, որոնց վրա է հիմնվում մրցակցությունը: Դա իր հետևից բերում է տնտեսության տարբեր ճյուղերի հիմնարար կառուցվածքային փոփոխություններ, որոնց արդյունքում վերանում է արտադրողների ու սպա-

ռողների միջև միջնորդների առկայության անհրաժեշտությունը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման կարևորագույն միտումներից է տեղեկատվական բիզնեսի գլոբալացումը: Տեսականորեն այսօր յուրաքանչյուր մարդ հանդիսանում է տեղեկատվության սպառող: Ներկայումս տեղեկատվական շուկայում ձևավորվել են երեք խոշորագույն կենտրոններ՝ ԱՄՆ, Ճապոնիա, Եվրոպա: ԱՄՆ-ը այսօր գերիշխում է միայն համակարգչային սարքավորումների մատակարարման (75%) և ծրագրային միջոցների ոլորտներում (65%): Նկատվում է Ճապոնիայի դերի աստիճանական բարձրացում:

Գլոբալացումն անմիջականորեն կապված է կոնվերգենցիայի հետ, որը հանգեցնում է ունիվերսալ տեխնոլոգիաների ստեղծմանը:

Մինչև 1960թ. ամբողջ աշխարհում օգտագործվում էր ոչ ավել, քան 7000 համակարգիչ: Պատմական բեկումը սկսվեց 1993թ., երբ համակարգիչների արտադրության ծավալը առաջին անգամ գերազանցեց թեթև մարդատար ավտոմեքենաների արտադրության ծավալին և հասավ 35.4 մլն միավորի: Մեկ տարի անց այդ ծավալն աճեց 27%-ով և անցավ 48 մլն հատի սահմանը: 1995թ. այն աճեց ևս 25%-ով ու մոտեցավ 60 մլն-ի սահմանին: Այսօր արդեն որոշ երկրներում, օրինակ, ԱՄՆ-ում, համակարգիչներ արտադրվում ու վաճառվում է ավելի շատ, քան հեռուստացույցներ և այդ միտումն էլ ծավալվելու հատկություն է դրսևորում:

Ավելի ու ավելի լայնորեն կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաներն արմատապես փոխում են միլիոնավոր մարդկանց ամենօրյա կյանքը: Դրանք ազդում են ոչ միայն զարգացման տարբեր մակարդակներում գտնվող երկրների ներքին քաղաքականության, այլ նաև պետությունների միջև ծագող փոխհարաբերությունների վրա: Փոխվում է հենց միջազգային հարաբերությունների տեսությունը: Ժամանակակից միջազգային հարաբերությունների տեսական ընկալումներն անհնար են դառնում առանց հաշվի առնելու նոր տեղեկատվական տեխնոլոգիաների դերը:

Մեր ժամանակներում տեղեկատվությունը հանդիսանում է էլեկտրոնային սենսորների կողմից հավաքված ռեսուրսների արդյունք: Ինտերնետն ապահովեց մշտական ու արագ տեղեկատվության փոխանակության բացառիկ պահանջարկ ռազմական, կառավարման ու մասնավոր սեկտորներում: Ինտերնետին միացված տեղեկատվական ցանցերը մշտապես մշակում են մասնավոր, գործնական ու ռազմական բնույթի տեղեկատվու-

թյուն: Տեղեկատվությունն այն ռազմավարական ռեսուրսն է, որի արդյունավետ օգտագործումը միակ միջոցն է առավելություններ ձեռք բերելու համար:

Տեղեկատվական դարաշրջանի տեխնոլոգիաները շրջակա միջավայրը դարձնում են առավել դինամիկ ու անկանխատեսելի: Դա գլոբալ զարգացումների նկատմամբ ազգային տնտեսություններին դարձնում է ավելի զգայուն, բարձրացնում է աշխարհի բնակչության զգալի մասի մշակութային ու քաղաքական գիտակցությունը և սնուցում այն արմատական շարժումներին, որոնք խրախուսում են համաշխարհային հատվածավորումն ու ապակայունացումը:

Արդեն սկսել է ձևավորվել տեղեկատվական ծառայությունների վրա հիմնված նոր տնտեսությունը: Այն քայքայում է արդյունաբերական աշխարհի աստիճանակարգությունը: Տեղեկատվական հեղափոխությունը կրճատել, եթե ոչ ամբողջությամբ վերացրել է բնակչության կողմից ստացվող տեղեկատվության վերահսկողությունը ազգային կառավարությունների կողմից:

Ինտերնետը վեր է ածվել տեղեկատվության ստացման զանգվածային աղբյուրի: Այն ցույց է տալիս, թե ինչքան դժվար է տեղեկատվության նկատմամբ վերահսկողություն իրականացնելը: Տպագիր ՁԼՄ-երի ու հեռուստատեսային հաղորդումների բովանդակությունն ավելի հեշտ է վերահսկել, քանի որ արտադրանքի քանակը սահմանափակ է, իսկ լսարանը՝ պասսիվ: Ինտերնետից յուրաքանչյուր օգտվող հանդիսանում է տեղեկատվության և սպառող, և արտադրող:

Տեղեկատվական ու հեռահաղորդակցության տեխնոլոգիաները (ՏՀՏ) առանցքային դեր են խաղում գիտելիքների վրա հիմնված գլոբալ տնտեսության զարգացման գործում:

Արդեն այսօր տեղեկատվական գործընթացները հանդիսանում են ցանկացած հասարակության ու պետության տնտեսական, սոցիալական և քաղաքական բոլոր գործընթացների կարևորագույն ու անքակտելի բաղադրիչը: Եթե նախորդ փուլերում տեղեկատվական ռեսուրսների ու տեխնոլոգիաների զարգացումն ապահովում էր քաղաքակրթության տեխնոլոգիական և գործիքային բազայի կատարելագործումը, ապա պոստինդուստրիալ փուլում դրանց զարգացումը բնորոշում է դրա էական որակները: Այդ կապակցությամբ էլ 20-րդ դարավերջի տեղեկատվա-

կան հեղափոխությունը միայն տեխնոլոգիական չէ, այլ նաև՝ սոցիոտեխնոլոգիական:

Հասարակության զարգացման ինդուստրիալ փուլից պոստինդուստրիալ փուլին անցման հիմքը կազմում է ՏՀՏ-երի կատարելագործմամբ պայմանավորված տեղեկատվական փոխազդեցության գործընթացների օպտիմալացումը: Տեղեկատվական գործընթացների օպտիմալացումն ու ՏՀՏ-երի կատարելագործումը թույլ են տալիս ակտիվացնել և արդյունավետ օգտագործել հասարակության զարգացման ռազմավարական գործոն հանդիսացող տեղեկատվական ռեսուրսները: Տեղեկատվական ռեսուրսների տարածումն ու ռացիոնալ օգտագործումը թույլ է տալիս զգալիորեն կրճատել ռեսուրսների մյուս տեսակների՝ հումքի, էներգիայի, օգտակար հանածոների, նյութերի ու սարքավորումների, մարդկային ռեսուրսների և ժամանակի սպառումը: Տեղեկատվական գործընթացները հանդիսանում են համալիր տնտեսական, սոցիալական և արտադրական գործընթացների կարևորագույն տարրը: Ժամանակակից տնտեսական, սոցիալական ու քաղաքական տեխնոլոգիաները, որպես հիմնական բաղադրիչ, անպայմանորեն ընդգրկում են ՏՀՏ-երը: Ընդ որում, ՏՀՏ-երը, որպես կանոն, իրականացնում են այդ տեխնոլոգիաների առավել էական, «մտավոր» գործառույթները:

Տեղեկատվական ու հեռահաղորդակցության տեխնոլոգիաները թույլ են տալիս օպտիմալացնել և ավտոմատացնել հասարակության ու պետության կյանքում ընթացող տեղեկատվական գործընթացները: Ջրադրված ազգաբնակչության աշխատանքային գործունեության օբյեկտ և արդյունք աստիճանաբար դառնում են ոչ թե նյութական արժեքները, այլ՝ տեղեկատվությունն ու գիտելիքները:

Այսօր ավելի ու ավելի ակնհայտ է դառնում մարդկային գործունեության տեղեկատվական բաղադրիչի գերակայությունը դրա այլ բաղադրիչների նկատմամբ: Ջարգացած երկրներում բարձր տեխնոլոգիաների ոլորտն աստիճանաբար դառնում է տնտեսական աճի հիմնական աղբյուր, որը և բնորոշում է տնտեսությունում ընթացող կառուցվածքային տեղաշարժերը: Այդ պատճառով էլ ՏՀՏ-երը դիտարկվում են որպես արդյունաբերական արտադրության ողջ համակարգի մոդեռնացման, տնտեսական ու սոցիալական ենթակառուցվածքների զարգացման հիմնական գործիք: Օժտված լինելով հզոր մուլտիպլիկացիոն արդյունքով, ՏՀՏ-երը

խաղում են տնտեսական առաջընթացի լոկոմոտիվի, համաշխարհային տնտեսության տեխնոլոգիական ու կազմակերպական մոդեռնացման կատալիզատորի դեր:

Տեղեկատվական գործընթացներն ու ՏՀՏ-երը ազդեցիկ դեր ունեն միջանձնային հարաբերությունների, տարբեր սոցիալական խմբերի, քաղաքացիական հասարակության և իշխանության փոխհարաբերությունների ներդաշնակեցման ու պրոգրեսիվ զարգացման գործում: Սոցիալական ոլորտում ավանդաբար օգտագործվող կապի միջոցներին (հեռախոս, հեռագիր, ռադիո և հեռուստատեսություն) զուգահեռ ավելի ու ավելի լայնորեն օգտագործվում են հեռահաղորդակցության էլեկտրոնային համակարգերը, էլեկտրոնային փոստը և այլն: Այդ միջոցներն արագորեն ասիմիլյացիայի են ենթարկվում ժամանակակից հասարակության մշակույթի կողմից, քանի որ ստեղծում են նպաստավոր պայմաններ ու չեզոքացնում բազմաթիվ տեխնոլոգիական, սոցիալական և կենցաղային հիմնախնդիրներ, որոնք առաջանում են համաշխարհային ինտեգրման ու գլոբալ գործընթացների զարգացման արդյունքում:

ՏՀՏ-երի զարգացմամբ է պայմանավորված այն փաստը, որ «զանգվածային լրատվության միջոցներ» հասկացությունը աստիճանաբար իր տեղը զիջում է նոր՝ «զանգվածային հեռահաղորդակցության միջոցներ» հասկացությանը, որը ավանդական ՁԼՄ-երը և զանգվածային լրատվության փոխանակման համակարգչային համակարգերը միավորում է հեռահաղորդակցության ցանցերի օգնությամբ: Այդ կապակցությամբ էլ այսօր ՁԼՄ-երի, տեղեկատվայինացման գործընթացների, համակարգչային տեղեկատվական համակարգերի ու զանգվածային հաղորդակցության ցանցերի զարգացումն անհրաժեշտ է դիտարկել անխզելի ամբողջության մեջ:

Տեղեկատվական գործընթացներն ու տեխնոլոգիաները կենտրոնական տեղ են զբաղեցնում հասարակության «մտավորականացման» գործընթացներում, նպաստում կրթության, գիտության ու մշակույթի զարգացմանը: Գիտությունն ու կրթությունը առավել ևս դարձել են երկարաժամկետ տնտեսական աճ ապահովող գործոններ: Ժամանակակից ՏՀՏ-երը հանդիսանում են հասարակության տնտեսական, գիտատեխնիկական, մշակութա-կրթական ու բնական ներուժի պրակտիկ օգտագործման գործիքներ՝ ստեղծելով համայն մարդկության հոգևոր արժեքների ու

մտավոր կարողությունների միավորման տեխնոլոգիական հիմքը:

Հասարակության զարգացման ժամանակակից փուլում տեղեկատվական ու հեռահաղորդակցության տեխնոլոգիաների սկզբունքային կարևոր նշանակությունը կայանում է նրանում, որ դրանց օգտագործումը կարող է զգալիորեն նպաստել մարդկության գլոբալ հիմնախնդիրների լուծմանը:

Հենց գլոբալ գործընթացների տեղեկատվական մոդելավորման մեթոդները, զուգակցվելով տեղեկատվական մոնիտորինգի մեթոդների հետ, արդեն այսօր կարող են ապահովել շատ ճգնաժամային իրավիճակների կանխատեսումը բարձր սոցիալական ու քաղաքական լարվածություն ունեցող տարածաշրջաններում, բնապահպանական աղետների շրջաններում, տեխնածին վթարների վայրերում:

Տեղեկատվական ու հեռահաղորդակցության տեխնոլոգիաները մարդկային գործունեության բոլոր ոլորտներում դարձել են կառավարման արդյունավետության բարձրացման կարևոր միջոցներ: Արդյունաբերապես զարգացած երկրներում արդեն հասել են այն գիտակցությանը, որ ՏՀՏ-երը կազմակերպությունների, պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մեջ դադարել են կատարել օժանդակ գործառույթներ ու վեր են ածվել այդ գործընթացի արդյունավետությունն ապահովող կարևորագույն գործոնների: Դրանց զարգացումից է կախված տարաբնույթ կազմակերպությունների առջև ծառայած խնդիրների լուծումը. կոմերցիոն կառույցների համար՝ մրցունակության բարձրացումը, պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի համար՝ հասարակության պահանջմունքների առավել արդյունավետ բավարարումը: Ընդ որում, այդ դեպքում տեղեկատվությունը վեր է ածվում մարդկության գլոբալ, սկզբունքային առումով՝ անսպառ ռեսուրսի:

Տեղեկատվական հեղափոխության հետ կապված խորը և որակական փոփոխություններից մեկն է դարձել հասարակության մեջ իշխանության տարբեր տեսակների հարաբերակցության կառուցվածքային տեղաշարժը՝ կապված սոցիալական կարգավորման գործում տեղեկատվական ու տնտեսական իշխանության դերի բարձրացման հետ:

Բազմաթիվ հետազոտողներ նշում են, որ տեղեկատվական հեղափոխությունը կարող է էապես ազդել մոլորակի աշխարհաքաղաքական քար-

տեզի և միջազգային տեղեկատվական զարգացման վրա: Այն կարելի է դիտարկել որպես կարևոր աշխարհաքաղաքական գործոն, որը կարող է փոփոխել հարաբերությունները ծանրության կենտրոնների, տարածաշրջանների ու պետությունների միջև: Այն յուրաքանչյուր երկրի առջև դնում է միջազգային բարդ տեղեկատվական հիմնախնդիրների համալիր: Նախ, խոսքը գնում է պետական սահմանների տեղեկատվական թափանցիկության պայմաններում միջազգային հարաբերությունների համակարգի շինարարության մասին:

Երկրորդ, խիստ արդիական է դառնում համաշխարհային բաց տեղեկատվական համակարգերի, մասնավորապես Ինտերնետի, նկատմամբ ռացիոնալ պետական քաղաքականության մշակումը և ազգային ու կորպորատիվ տեղեկատվական և հեռահաղորդակցության ցանցերի միացումը դրանց՝ ազգային տեղեկատվական ռեսուրսների ու ենթակառուցվածքների պաշտպանության տեսակետից:

Երրորդ, ազգային ու միջազգային անվտանգության իրական սպառնալիք են դառնում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման հնարավորությունները տեղեկատվական պատերազմների ժամանակ:

Այսպիսով, տեղեկատվական ոլորտի զարգացման ներկա միտումները ցույց են տալիս, որ համաշխարհային քաղաքակրթության զարգացման վեկտորը գտնվում է հենց այդ հարթության մեջ և տեղեկատվական հեղափոխության արդյունք կհանդիսանա հասարակության պոստիմդուստրիալ տեսակը՝ տեղեկատվական հասարակությունը:

### *1.3 Տեղեկատվական հասարակություն*

Աշխարհում ստեղծվում է որակապես նոր իրողություն՝ տեղեկատվական հասարակությունը, որն առաջին հերթին բնութագրվում է ամհամեմատ բարձր արտադրական արդյունավետությամբ: Գլոբալ տեղեկատվական հասարակության ձևավորման գործընթացի սկիզբ կարելի է համարել 1993-1994 թվականները: Դա առաջին հերթին վերաբերում է «Ազգային տեղեկատվական ենթակառուցվածք» (National Information Infrastructure) ստեղծելու ամերիկյան նախաձեռնությանը և «Տեղեկատվական հասարակություն» (Information Society) եվրոպական հայեցակարգին: Ընդ

որում, անհրաժեշտ է ընդգծել, որ առաջիկա տասնամյակներում տեղեկատվական հասարակության զարգացման միտումները կողմնորոշող հիմնական գործոն է հանդիսանալու World Wide Web (W W W) տեխնոլոգիան:

Նոր տեխնոլոգիաների ոլորտի ձեռքբերումները, որոնց վրա հիմնվում է տեղեկատվական հասարակության ձևավորումը, արմատապես փոխում են քաղաքական հաղորդակցության բնույթը: Առանց տեղեկատվական օժանդակության ժամանակակից ժողովրդավարական ինստիտուտների գործունեությունը էապես կղժկարանա, իսկ համապատասխան պայմանների առկայության դեպքում տեղեկատվական ցանցերից օգտվելու հավասար իրավունքի ապահովումը կնպաստի միջանձնային ու միջխմբային հարաբերությունների մակարդակներում ժողովրդավարական չափորոշիչների ամրապնդմանը: Ընդ որում, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները, հասարակության ամենօրյա կյանքում իրենց օգտագործման ոլորտների ընդլայնմանը զուգընթաց, ստեղծում են անհատի նկատմամբ մանիպուլյացիոն ներգործության պոտենցիալ հնարավորություն: Նոր սերնդի տեղեկատվական տեխնոլոգիաները, որոնք կոչվում են նաև մետատեխնոլոգիաներ, անմիջականորեն ազդելով մարդու գիտակցության վրա, ոչ միայն ձևավորում են աշխատառժի նոր, արդյունավետ տարատեսակ, այլ նաև բացառում են այդ տեխնոլոգիաների նախագծողների հետ մրցակցության հնարավորությունը:

Առավել վտանգավոր մետատեխնոլոգիաներից են զանգվածային գիտակցություն ձևավորող և այն մանիպուլյացիայի ենթարկող տեխնոլոգիաները: Այսօր գերակշռում են հենց այդպիսիք, որոնք արագորեն տարածվելով վեր են ածվել տեղեկատվական հասարակության կարևորագույն և առանցքային բաղադրիչի:

Տեղեկատվական տեխնոլոգիաները որակապես փոխել են մարդկային զարգացման ռեսուրսների կազմը: Եթե նախկինում գլխավոր ռեսուրս համարվում էին արտադրողական ուժերը, ապա ներկայումս՝ ինտելեկտն ու ֆինանսական միջոցները, որոնք ժամանակակից աշխարհում դարձել են խիստ շարժունակ: Եվ եթե առաջ զարգացած տնտեսությունների կողմից աշխարհագրական նոր տարածքների յուրացումն ուղեկցվում էր արտադրության և ենթակառուցվածքների զարգացմամբ, ապա այժմ յուրացման

խնդիրը հանգում է տվյալ տարածաշրջանի մտավոր ներուժի առանձնացմանն ու դրա շահագործմանը, ինչպես նաև հասարակական գիտակցության վրա մանիպուլյացիոն մեխանիզմների գրոհներին: Հայաստանի համար այդ միտումը վտանգավոր է էժան աշխատուժի մատակարար դառնալու, ինչպես նաև կազմակերպական ու մարդկային ռեսուրսների մրցունակության թուլացման առումներով:

Տեղեկատվական հասարակության զարգացման պայմաններում տեղի է ունենում տեղեկատվության ստացման ու փոխանցման համար անհրաժեշտ ծախսերի կրճատում, որը նախադրյալներ է ստեղծում հետևյալ երկու միտումների համար. նախ, աստիճանաբար աճում է այն մարդկանց քանակը, ովքեր քաղաքական կարևոր որոշումների մշակման և ընդունման գործընթացներին մասնակցելու հնարավորություն են ունենում և երկրորդ, ստեղծվում են տեխնոլոգիական նախապայմաններ քաղաքացիների քաղաքական հնարավորությունների անհավասարության վերացման համար:

Տեղեկատվական տնտեսության համար բնութագրական են.

1. համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) մեջ գիտելիքների ու տեղեկատվության տեսակարար կշռի անընդհատ աճը:

Տնտեսագիտության մեջ ավանդաբար ընդունված էր, որ տնտեսական աճը պայմանավորված է 3 հիմնական գործոններով: Դրանք են՝ հողը և բնական այլ ռեսուրսները, կապիտալը՝ որպես հիմնական բաղադրիչ ունենալով արտադրության միջոցները և աշխատանքը: Ժամանակակից պայմաններում դրանց գումարվել է նաև չորրորդ գործոնը՝ տեղեկատվությունը:

2. Երկրի բնակչության ընդհանուր եկամուտների ծավալում տեղեկատվական գործունեության արդյունքում ստացված եկամուտների բարձր տեսակարար կշիռը:

Փողի շրջանառությունը շատ դեպքերում տեղեկատվության որոշակի ձևի շրջանառություն է: Դա առանձնապես ակնհայտ է դառնում էլեկտրոնային փողերի առաջացմամբ:

3. Երկրի ՀՆԱ-ում տեղեկատվական սեկտորի բարձր տեսակարար կշիռը:

Սովորաբար, տնտեսության տեղեկատվական սեկտորի մեջ ընդգրկվում են տեղեկատվական գործունեության ոչ բոլոր տեսակները, այլ մի-

այն տեղեկատվական ապրանքների ու ծառայությունների անմիջական արտադրությունը: Բայց մինչև օրս էլ հստակ չեն ձևակերպվել տեղեկատվական-տնտեսական գործունեության այն տեսակները, որոնց անվերապահորեն կարելի է համարել այդ սեկտորի բաղադրիչ: Անժխտելի է, որ սեկտորի միջուկը կազմում է տեղեկատվական ինդուստրիան՝ համակարգչային տեխնիկայի, տեղեկատվայնացման ու հեռահաղորդակցության միջոցների և ծրագրային ապահովման ապրանքների արտադրությունը: Բացի դրանից, տեղեկատվական սեկտորը ներառում է ԶԼՍ-երը, տարաբնույթ տեղեկատվական-խորհրդատվական ընկերությունները, գիտական ու նախագծա-կոնստրուկտորական կազմակերպությունները, գովազդային ու մարքեթինգային գործակալությունները:

Առաջիկա տարիներին տեղեկատվական հասարակությունը երկրների մի մասի համար կդառնա իրականություն, մյուս մասի համար՝ զարգացման կողմնորոշիչ:

Գործնականում բոլոր մասնագետները համակարծիք են նրանում, որ հետինդուստրիալ հասարակությունն ունի տեղեկատվական բնույթ, քանզի այն կառուցվում է բաց համակարգերում շրջանառվող կողավորված գիտելիքների ու տեղեկատվության հիման վրա:

Տեղեկատվական հասարակությունը բնորոշվում է որպես մի հասարակություն, որտեղ տնտեսական զարգացումը, սոցիալական առաջընթացը, հասարակական կյանքի որակն ու կերպը կախված են գիտելիքներից և տեղեկատվության շահագործման բնույթից: Նման հասարակությունը բնութագրվում է հետևյալ չափորոշիչներով.

- տեխնոլոգիական. առանցքային գործոնը տեղեկատվական տեխնոլոգիաներն են, որոնք լայնորեն կիրառվում են արտադրության մեջ, պետական կառավարման ու կրթական համակարգերում, կենցաղում,
- սոցիալական. տեղեկատվությունը հանդես է գալիս որպես կյանքի որակական բարելավման խթանիչ, ձևավորվում ու հաստատվում է տեղեկատվական գիտակցությունը,
- տնտեսական. տեղեկատվությունը ռեսուրսի, ապրանքի, ծառայության, ավելացված արժեքի ու զբաղվածության սկզբնաղբյուրի որակներով դառնում է տնտեսական առաջընթացն ապահովող կարևոր գործոն,
- քաղաքական. տեղեկատվության ազատությունը հասարակական ավելի լայն շերտեր է ընդգրկում քաղաքական գործընթացներում՝ նպաս-



տելով տարբեր խավերի ու սոցիալական շերտերի միջև կոնսենսուսի ձևավորմանը,

- մշակութային. տեղեկատվությունը ձեռք է բերում նաև մշակութային գործընթացների ակտիվությունն ապահովող գործոնի որակներ:

Ընդհանրացնելով «տեղեկատվական հասարակություն» հասկացության վերաբերյալ եղած մեկնաբանությունները, կարելի է նշել, որ ներկայումս այն ընկալվում է որպես

- գլոբալ սոցիալական հեղափոխության արդյունքում ձևավորված նոր տեսակի հասարակություն, որը հետևանք է թռիչքաձև զարգացող տեղեկատվական ու հեռահաղորդակցության տեխնոլոգիաների,

- գիտելիքների հասարակություն, այսինքն՝ հասարակություն, որտեղ յուրաքանչյուր անհատի և պետության բարեկեցության գլխավոր պայման դառնում են գիտելիքները,

- գլոբալ հասարակություն, որտեղ տեղեկատվության փոխանակությունը չունի ոչ ժամանակային, ոչ տարածական, ոչ էլ քաղաքական սահմաններ:

Ապագայում գոյություն կունենան տեղեկատվական հասարակության մի քանի տեսակներ, ինչպես ժամանակին կային ինդուստրիալ հասարակության մի քանի մոդելներ: Հասարակության տեսակը որոշելիս առանցքային հարցերը կլինեն.

- հիմնական ռեսուրսից՝ տեղեկատվությունից օգտվելու քաղաքացիների հավասար իրավունքի ապահովումը,

- հասարակական կյանքին ֆիզիկական սահմանափակ հնարավորություններով մարդկանց մասնակցության աստիճանը և նրանց ինքնադրսևորման հնարավորությունները:

Տեղեկատվական հասարակության կարևորագույն առանձնահատկությունը շեշտադրման տեղափոխումն է նյութական ռեսուրսների արտադրությունից դեպի ծառայությունների մատուցումը, որի հետևանքն է լինելու հունքի, նյութերի և էներգիայի օգտագործման ծավալների կրճատումը: Տնտեսության կառուցվածքային նման վերափոխումները կբերեն ՀՆԱ-ի ձևավորման գործում տնտեսության տարբեր ոլորտների տեսակարար կշռի էական փոփոխությունների: Օրինակ, եվրոպական երկրներում, որտեղ տեղեկատվական հասարակությունը զարգացման զգալի ուղի է

անցել, տեղեկատվական ինդուստրիայում շրջանառվող միջոցների 55%-ը ծախսվում է տեղեկատվական արտադրանքի ու տեխնոլոգիաների ստեղծման վրա և միայն 45%-ը՝ տեխնիկայի արտադրության վրա: Կապի ոլորտում խզումն էլ ավելի մեծ է. 80%-ը կազմում են հեռահաղորդակցության ծառայությունները և միայն 20%-ը՝ հաղորդակցության միջոցների արտադրությունը:

Ինչպես արդեն նշվեց, տեղեկատվական հասարակության առանցքային բնութագրերից մեկը դրա գլոբալ բնույթն է: Դրա ձևավորման ընթացքում աստիճանաբար վերանում են միջպետական սահմանները, արմատապես փոխվում է համաշխարհային տնտեսության կառուցվածքը, շուկան դառնում է առավել դինամիկ ու մրցունակ: Նման պայմաններում յուրաքանչյուր պետության համար կենսական նշանակություն ունի ազգային տեղեկատվական ենթակառուցվածքի զարգացումը և դրա արդյունավետ միացումը գլոբալ տեղեկատվական ենթակառուցվածքին:

Տեղեկատվական հասարակության տարբերակիչ հատկանիշը տեղեկատվությունից օգտվելու և այն տարածելու ազատությունն է: Դա նպաստում է ժողովրդավարական գործընթացների կարգավորմանը, գործարար ակտիվության բարձրացմանը, բարեխիղճ մրցակցության ապահովմանը, սպառողների շահերի պաշտպանությանը: Այն նաև կանխում է տնտեսության օլիգարխացումը, բյուրոկրատիայի սերտաճումը մենաշնորհային տնտեսական կառույցների հետ, տնտեսության կազմալուծումն ու կոռուպցիան: Ակնհայտ է, որ հենվելով միայն լրիվ ու հավաստի տեղեկատվության վրա, կարելի է ընդունել ճիշտ և հավասարակշռված որոշումներ: Տեղեկատվական հասարակությունը իր մեջ մեծ ներուժ է պարունակում պետական կառուցվածքի կատարելագործման, տեղական ռեսուրսների օպտիմալ օգտագործման, արտադրության արդյունավետությունը բարձրացնելու, կրթության զարգացման առումներով:

Էլեկտրոնային հաղորդակցության միջոցների օգտագործումն արմատապես կբարեփոխի կրթության համակարգը:

Տեղեկատվական հասարակության ընձեռած մեկ այլ հնարավորություն է պրոֆիլակտիկ բնույթի տեղեկատվություն տարածելու միջոցով առողջապահության համակարգի բարելավումը:

Ցանկացած ժողովրդավարական երկրում առանձնահատուկ արժեք է անհատի ազատությունն ու ապահովվածությունը: Տեղեկատվական հա-

սարակությունը իր մեջ մեծ հնարավորություններ է պարունակում նաև այդ բնագավառում:

Տեղեկատվական հասարակությունը բարենպաստ միջավայր է միջին դասի զարգացման համար: Այդ խավի գործունեության ավանդական ոլորտներն են գիտական հետազոտությունները, կրթությունը, մշակույթը, բարձր տեխնոլոգիական ու գիտատար արտադրությունները, որոնց տեսակարար կշիռը տեղեկատվական հասարակության ձևավորմանը զուգընթաց կաճի:

Գիտակցելով տեղեկատվական հասարակության բոլոր առավելությունները, միաժամանակ պետք է խոստովանել, որ տեղեկատվական հեղափոխությունը բերում է ոչ միայն նոր հնարավորություններ ու լուծումներ, այլև նոր հիմնախնդիրներ: Գլխավոր սպառնալիքը կայանում է նրանում, որ արտադրության գլոբալ տեմպերը, տրանսազգային կորպորացիաների շարժունակությունը կարող են բացասաբար անդրադառնալ բնապահպանական խնդիրների, ինչպես նաև աշխատանքի ու սոցիալական ապահովության իրավունքի վրա: Բացի դրանից, մինչ այժմ տեղեկատվական տեխնոլոգիաները դեռևս ոչ մի կերպ չեն ազդել քաղաքացիների, տարածաշրջանների ու պետությունների հավասարության խնդիրների լուծման վրա: Գլոբալ տեղեկատվական ցանցերի ինտենսիվ օգտագործման պայմաններում զարգացած երկրների կողմից զարգացող երկրների նկատմամբ ծագում են մշակութային ազդեցիկայի նոր ձևեր, հասարակությունների գլխին մշակութային և ազգային յուրօրինակությունը կորցնելու վտանգ է կախվում:

Այդ վտանգներին հակազդելու արդյունավետ մեթոդները գտնվում են ոչ թե գլոբալ տեղեկատվական տարածությունից ինքնամեկուսանալու, այլ այդ տարածության ձևավորման ակտիվ մասնակցության մեջ:

Տեղեկատվական հասարակության կառուցման հիմնական պայմաններն են.

- համաշխարհային միասնական տեղեկատվական տարածության ձևավորում, տարածաշրջանների, երկրների և ազգերի տեղեկատվական ու տնտեսական ինտեգրման գործընթացների խորացում,
- տնտեսության մեջ նոր տեխնոլոգիական ոլորտների ձևավորում և դրանց հետագա ամրապնդում,
- տեղեկատվության ու գիտելիքների՝ որպես արտադրության գործոն-

ների, շուկայի ձևավորում, տեղեկատվական ռեսուրսների կերպափոխում հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման ռեսուրսների, տեղեկատվական ապրանքների ու ծառայությունների նկատմամբ հասարակական պահանջմունքի բավարարում,

- հեռահաղորդակցության, տրանսպորտային, կազմակերպչական ենթակառուցվածքների զարգացում,
- միջազգային, ազգային ու տարածաշրջանային մակարդակներում տեղեկատվության փոխանակման համակարգերի հնարավորությունների ավելացման միջոցով կրթության, գիտա-տեխնիկական ու մշակութային առաջընթացի խթանում,
- անհատի, հասարակության ու պետության տեղեկատվական անվտանգության ապահովում,
- քաղաքացիների և սոցիալական ինստիտուտների կողմից տեղեկատվության ազատ ստացման ու տարածման իրավունքների ապահովման արդյունավետ համակարգի ձևավորում:

Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվական հասարակության ձևավորման հիմնախնդիրները որոշակի ընդհանրություն ունեն այլ երկրներում ընթացող նմանատիպ գործընթացների հետ, ինչը բացատրվում է նորագույն տեղեկատվական-հեռահաղորդակցության տեխնոլոգիաների արագ տարածմամբ ու համաշխարհային շուկաների գլոբալացմամբ: Տարբերությունները պայմանավորված են անցումային տնտեսության օրինաչափություններով, տեղեկատվական ենթակառուցվածքի թերզարգացմամբ, երկրի աշխարհագրական առանձնահատկություններով:

Վերջին տարիներին ընթացող գործընթացները թույլ են տալիս խոսել առանձին ճյուղերի՝ կապի, համակարգչայնացման, տեղեկատվայնացման, զարգացմանը նապատակաուղղված քաղաքականությունից համաշխարհային տեղեկատվական հասարակություն մուտք գործելու ընդհանուր ռազմավարությանն անցնելու նպատակահարմարության մասին: Ներկայումս առաջին պլան է մղվում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ռազմավարության իրագործումը, որը կնպաստի հանրապետությունում միասնական տեղեկատվական տարածության ձևավորմանը: Եթե նախկինում գլխավոր խնդիրը պետական կառավարման մարմիններին կապով, համակարգիչներով ու տեղեկատվությամբ ապահովումն էր,

ապա ներկայումս անհարժեշտ է դրան զուգահեռ ուշադրությունը բևեռել նաև ազգային տեղեկատվական ենթակառուցվածքի, տեղեկատվական ռեսուրսների ու տվյալների բազայի ձևավորմանը, որոնցից հավասարաչափ կկարողանան օգտվել և պետական իշխանությունը, և քաղաքացիական հասարակության ինստիտուտները: Այդ ամենը, բնականաբար, պահանջում է իրավական հիմքերի, տեխնոլոգիական բազայի և կազմակերպչական ապահովվածության կատարելագործում: Տեղեկատվական տարածության զարգացումը կբերի հասարակության ընդհանուր բարեկեցության բարձրացման, նոր տեղեկատվական-տեխնոլոգիական միջավայրում պետության ու քաղաքացիների փոխհարաբերություններում ժողովրդավարական գործընթացների ամրապնդման ու նրանց տեղեկատվական պահանջումների առավելագույնս բավարարման:

## 2. Տեղեկատվական համակարգի զարգացման ռազմավարությունը

### *2.1 Տեղեկատվական համակարգի զարգացման ռազմավարության նպատակը, տեղեկատվական հիմնական գործընթացները որպես պետական տեղեկատվական քաղաքականության օբյեկտներ*

Ներկայումս աշխարհի բոլոր առաջատար երկրներն արդեն մշակել և ընդունել են տեղեկատվական համակարգի զարգացման իրենց քաղաքականությունն ու ռազմավարությունը: Ազգային տեղեկատվական ենթակառուցվածքի ոլորտում ԱՄՆ վարչակազմի գործողությունների պլանը (The National Information infrastructure: Agenda for action, 1993) դարձավ Բլինթոն - Գոր վարչակազմի կարևորագույն նախաձեռնություններից մեկը: 1994թ. Եվրամիության հանձնաժողովի շրջանակներում ընդունվեց «Եվրոպական ճանապարհի դեպի տեղեկատվական հասարակություն» (Europe`s Way to the Information society. An action plan) գործողությունների պլանը: 1995թ. Ֆինլանդիան մշակեց իր «Ֆիննական ճանապարհի դեպի տեղեկատվական հասարակություն» (Finland`s Way to the Information Society. The national strategy) ծրագիրը, 1996թ. Գերմանիայում գործողության մեջ դրվեց «Գերմանական ճանապարհի դեպի տեղեկատվական հասարակություն» (Germani`s Way to the Information Society) ռազմավարական ծրագիրը:

Ռազմավարությունը սկսվում է նպատակների ձևակերպումից: Դրանցում արտացոլվում են տեղեկատվական ոլորտում առավել կարևոր ազգային շահերն ու ձգտումները: Տեղեկատվական համակարգի զարգացման ռազմավարության հիմնանպատակը պետք է լինի տեղեկատվական հասարակության ձևավորումը: Մի փոքր անդրադառնալով արտասահմանյան մի շարք երկրների ռազմավարական փաստաթղթերում «տեղեկատվական հասարակություն» տերմինի բացատրություններին: Դրանցում տեղեկատվական հասարակությունը դիտարկվում է տարբեր տեսանկյուններից.

- որպես հետինդուստրիալ զարգացման օրինաչափ և անխուսափելի

փուլ, հասարակական նոր տնտեսակարգ,

• որպես գլոբալ մարտահրավերներից մեկը, որը պահանջում է պետության, գործարար և գիտական շրջանակների, յուրաքանչյուր անհատի ակտիվ մասնակցություն կյանքի տարբեր ոլորտներում նոր տեղեկատվական տեխնոլոգիաների զանգվածային օգտագործման պայմաններին հարմարվելու գործընթացներին,

• որպես տնտեսական կատեգորիա, որը պայմանավորված է տեղեկատվական ոլորտում զբաղվածության աճով,

• որպես տեխնոլոգիական միտում՝ պայմանավորված հասարակության գործունեության տարաբնույթ ոլորտներում ցանցային տեխնոլոգիաների տարածվածությամբ:

Առանձնահատուկ գրավչություն ունեն ամերիկյան ազգային տեղեկատվական ենթակառուցվածքի զարգացման հեռանկարները: Դրա զարգացումը, ըստ ծրագրի հեղինակների, թույլ կտա ստեղծել պայմաններ, որոնց առկայության դեպքում

• բոլոր ամերիկացիների համար, անկախ աշխարհագրական պայմաններից, բնակավայրի հեռավորությունից, ռեսուրսների առկայությունից և աշխատունակությունից, կապահովվի սոցիալական ու մշակութային առավել սահմանափակ ռեսուրսներից (կրթություն, բուժում, մշակութային և գիտական ժառանգություն) օգտվելու իրավունք,

• կստեղծվեն հնարավորություններ, առանց բնակարանը լքելու՝ աշխատելու, հանգըստանալու, գնումներ կատարելու, բանկային և այլ ծառայություններից օգտվելու համար,

• յուրաքանչյուրն ի վիճակի կլինի հեշտությամբ հարաբերակցվել պետական իշխանության մարմինների և պետական ծառայողների հետ,

• պետական, գործարար և այլ կառույցները կկարողանան փոխանակել տեղեկատվություն էլեկտրոնային ճանապարհով:

Հետաքրքիր է տեղեկատվական հասարակության ֆինանսական պատկերացումները համեմատել ամերիկյանի հետ: Այն դիտվում է առավել սոցիալական և հակված է պահպանելու երկրի առանձնահատկությունները: Այդ հասարակությունում

• ազգային արտադրության և արտահանման ընդհանուր ծավալում տեղեկատվական ու հեռահաղորդակցության ինդուստրիան ունի զգալի

տեսակարար կշիռ,

• այդ ոլորտներում երկիրն ունի զարգացած գործարարություն,

• բոլոր քաղաքացիներն օգտվում են էլեկտրոնային տեղեկատվությունից ու հեռահաղորդակցության ծառայություններից և ունեն համապատասխան տեխնոլոգիաները շահագործելու հմտություններ,

• գործարար ու վարչական կառույցներն իրենց գործունեության ընթացքում օգտագործում են նոր տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաներ ու ցանցեր,

• ազգային տեղեկատվական ենթակառուցվածքը և SS ոլորտի մասնագետները մրցունակ են միջազգային շուկայում,

• օրենսդրությունը նպաստում է տեղեկատվական հասարակության զարգացմանը, խթանում է ցանցերի օգտագործումը և մրցակցությունը,

• հասարակական տեղեկատվությունը հասանելի է բոլորին ցանցերի ու գրադարանների միջոցով,

• արդարության սկզբունքի կիրառմամբ բավարարվում են մարդկանց բազմակողմանի պահանջումները,

• պահպանվում է ֆինանսական մշակույթի ու լեզվի յուրահատկությունը:

Ընդհանրացնելով տարբեր մոտեցումները, կարելի է ձևակերպել տեղեկատվական հասարակության ընդհանրացված հասկացությունը: Դա մի հասարակություն է, որտեղ

• տեսանկյունից գերակշռում են տարածական հաղորդակցության ձևերը ըստ մարդկանց կենսակերպի,

• մարդկանց միջև ձևավորվում են նոր հարաբերություններ,

• տնտեսությունում ՀՆԱ-ի զգալի մասն արտադրվում է տեղեկատվական սեկտորում, մարդկանց մեծամասնության աշխատանքային գործունեությունն իր բնույթով դառնում է տեղեկատվական,

• տեխնոլոգիական մակարդակում տեղի է ունենում է ինտերակտիվ տեղեկատվական -հեռահաղորդակցության տեխնոլոգիաների, գլոբալ համակարգչային ցանցերի զարգացում,

• հասարակության ու սոցիալական խմբերի քաղաքական կամքի արտահայտման և համագործակցության համար սկսնավորվում են հաղորդակցության նոր հնարավորություններ,

• աշխարհաքաղաքական մակարդակում աճում է հզոր տեղեկատվական ներուժ ունեցող երկրների դերն ու նշանակությունը:

Այսպիսով, տեղեկատվական հասարակություն ասելով հասկանում ենք այնպիսի հասարակություն, որտեղ տեղեկատվության արտադրությունն ու սպառումը հանդիսանում է մարդկային գործունեության կարևորագույն տեսակը, իսկ տեղեկատվությունն ունի առավել ծանրակշիռ ռեսուրսի դերակատարում: Համապատասխանաբար, նոր տեղեկատվական տեխնոլոգիաները, տեղեկատվական, հաշվողական և հեռահաղորդակցության տեխնիկան դառնում են բազային, իսկ տեղեկատվական միջավայրը սոցիալական ու բնապահպանական միջավայրի հետ համատեղ՝ մարդու բնակության հիմնական միջավայր:

Տեղեկատվական հասարակության և նոր ՏՏ-երի զարգացմամբ պայմանավորված հնարավորությունների օգտագործումը աշխարհի առաջատար երկրների կողմից դիտարկվում է որպես ներքին և արտաքին առավել սուր հիմնախնդիրների լուծման լավագույն միջոց:

ԱՄՆ-ի համար դա բարձր տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում լիդերության խնդիրն է: Ամերիկյան վարչակազմը գտնում է, որ ՏՀՏ-երը կարող են նպաստել երկրի տնտեսական աճին, որն էլ, իր հերթին, բոլոր ամերիկացիների համար պետք է ստեղծի բարեկեցության անընդհատ աճի նախադրյալներ: Ձարգացած տեղեկատվական ենթակառուցվածքը բոլոր ամերիկացիներին պետք է իրենց տաղանդին և ունակություններին համապատասխան ինքնադրսևորման հնարավորություն տա:

Տեղեկատվական հասարակության ձևավորման ֆիննական ծրագրում նշվում է, որ կառավարությունը դա մշակել է այն բանի համար, որպեսզի նպաստի տնտեսության բարգավաճմանը՝ չեզոքացնելով ապագա մարտահրավերները, համաշխարհային տնտեսությունում ապահովի ազգային տնտեսվարող սուբյեկտների մրցունակության համապատասխան մակարդակ և օգնի լուծելու ներքին տնտեսական հիմնախնդիրները:

Գերմանական կառավարությունը գտնում է, որ Գերմանիան միջազգային մրցակցության պայմաններում զարգացման նոր հնարավորությունները կարող է արդյունավետ օգտագործել միայն տեղեկատվական հասարակության զարգացման ուղուց խոչընդոտները վերացնելով: Գերմանացի մասնագետների կարծիքով դա թույլ կտա մինչև 2010թ. Գերմանիայում ստեղծել մոտ 1.5 մլն նոր աշխատատեղեր:

Եվրամիության հանձնաժողովի ծրագիրը մշակվել է ելակետ ունենալով այն համոզմունքը, որ ՏՀՏ-երը և դրանց հետ կապված ծառայություն-

ները հաստատուն ու կայուն տնտեսական աճի ապահովման, եվրոպական ֆիրմաների մրցունակության բարձրացմանը նպաստելու, աշխատանքային պայմանների բարելավման ու բոլոր եվրոպացիների կյանքի որակական առաջընթացն ապահովելու գործում նոր հնարավորությունների ստեղծման հսկայական ներուժ ունեն:

Տեղեկատվական հասարակության նկատմամբ եղած վերը բերված մոտեցումների նույնիսկ թռուցիկ անդրադարձը ցույց է տալիս, որ տեղեկատվական համակարգի զարգացման ռազմավարության հիմնանպատակը առանձին երկրների կողմից ընկալվում է տարբեր կերպ: Դա ունի իր բացատրությունը. յուրաքանչյուր ինքնիշխան պետություն ինքնուրույն է որոշում իր զարգացման ռազմավարությունը՝ առաջին պլան մղելով ազգային շահերն ու նպատակները:

Տեղեկատվայնացման նկատմամբ տարբեր երկրների ունեցած մոտեցումների միջև ընդհանուրը տեղեկատվայնացման օրինաչափությունների միասնականությունն է: Բացի դրանից, գոյություն ունի նաև երկրների զարգացման մոդելների մեծաքանակություն: Միայն այն դեպքում, երբ այս երկու պայմանները համընկնում են, ի հայտ են գալիս տեղեկատվայնացման նույնանման ռազմավարություն ունեցող երկրներ:

Պետական տեղեկատվական քաղաքականության հիմնական խնդիրներն են.

- Ժողովրդավարության զարգացումը,
- մրցունակ տնտեսության կառուցումը,
- միջազգային տեղեկատվական ընկերակցության հետ ինտեգրումը,
- տեղեկատվական անհավասարության վերացումը,
- մարդկային ներուժի զարգացումը և մշակութային ժառանգության պահպանումը,
- տեղեկատվական հասարակության իրավական հիմքերի զարգացումը
- տեղեկատվական-հեռահաղորդակցության ծառայությունների շուկայի զարգացմանը նպաստող պետական կարգավորման մեխանիզմի կատարելագործումը,
- տեղեկատվական շուկայի մասնակիցների հավասար իրավունքների ապահովումը և արդյունավետ աշխատանքի համար պայմանների ստեղծումը,
- ծառայությունների շուկայի մրցակցային միջավայրի հետագա զարգացումը,

- տեղեկատվական-հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի ներդրումային գրավչության բարձրացումը,

- նոր տեղեկատվական-հեռահաղորդակցության տեխնոլոգիաների զարգացումն ու ներդրումը:

Ներկայացնենք այն գործընթացները, որոնց վրա պետք է տարածվեն պետական տեղեկատվական քաղաքականության (ՊՏՔ) կարգավորող ու կառավարող գործառնությունները.

- ազգային տեղեկատվական-հեռահաղորդակցման ենթակառուցվածքների հիման վրա ՀՀ միասնական տեղեկատվական տարածության ձևավորում և դրա՝ որպես համաշխարհային տեղեկատվական համակարգի բաղադրիչի կայացում,

- տեղեկատվայնացման հայրենական գիտատեխնիկական և արտադրական ներուժի համակողմանի աջակցություն, տեղեկատվական տեխնոլոգիաների, միջոցների ու ծառայությունների շուկայի կարգավորում,

- հասարակական կարծիքի ձևավորման համակարգի զարգացում ու կատարելագործում, պետական իշխանության գործունեության վերաբերյալ հասարակությանը համակողմանի և օբյեկտիվ տեղեկատվության տրամադրում,

- հասարակության տեղեկատվական հարաբերությունների իրավական կարգավորում, տեղեկատվական օրենսդրության համակարգի ձևավորում, քաղաքացիների ու սոցիալական ինստիտուտների կողմից տեղեկատվության ազատ ստացման, տարածման և օգտագործման արդյունավետ համակարգի ստեղծում, որը կհանդիսանա հասարակության հետագա ժողովրդավարացման կարևորագույն նախապայմաններից մեկը,

- հասարակության տեղեկատվական միջավայրի զարգացման անվտանգության՝ որպես ազգային անվտանգության կարևորագույն բաղադրատարրի, ապահովում:

## *2.2 Միասնական տեղեկատվական տարածություն ու տեղեկատվական-հեռահաղորդակցության ենթակառուցվածք*

Տեղեկատվական տարածությունն այն տարածությունն է, որտեղ ստեղծվում, տեղաշարժվում և օգտագործվում է տեղեկատվությունը: Տե-

ղեկատվական հոսքերի ուղղությունն ու փոփոխման արագությունը, տեղեկատվության ստեղծման ու օգտագործման եղանակները կանխորոշում են տեղեկատվական տարածության կառուցվածքը: Եթե նկատի ունենանք, որ տեղեկատվական ու դրամական հոսքերը պետք է ոչ միայն ստեղծվեն, տեղաշարժվեն ու օգտագործվեն, այլ նաև որոշակի վերաբերմունքի արժանանան անհատների, խմբերի ու հասարակության կողմից, ապա կստանանք սոցիոտեղեկատվական տարածություն: Նման տարածության մեջ տեղեկատվական ենթակառուցվածքը փոխհարաբերությունների մեջ է մտնում տնտեսական, սոցիալական, քաղաքական, իրավական ու մշակութային ենթակառուցվածքների հետ:

Հայաստանի Հանրապետությունում միասնական տեղեկատվական տարածության ձևավորման ու զարգացման հիմնական նպատակներն են.

- տեղեկատվությունից օգտվելու քաղաքացիների իրավունքի ապահովումը,

- հասարակության կայուն զարգացման համար անհրաժեշտ տեղեկատվական ներուժի ստեղծումն ու պահպանումը,

- պետական իշխանության մարմինների կողմից ընդունվող որոշումները միմյանց հետ համաձայնեցնելու գործուն մեխանիզմի ձևավորումը,

- քաղաքացիների իրավագիտակցության բարձրացումը,

- քաղաքացիների կողմից պետական կառավարման մարմինների նկատմամբ վերահսկողության ապահովումը,

- քաղաքացիների գործնական ու հասարակական ակտիվության բարձրացումը,

- միջազգային տեղեկատվական տարածության հետ ինտեգրումը:

Գլոբալ տեղեկատվական ենթակառուցվածքի ստեղծումը և դրա կիրառությունը պետք է լինեն մոտ ապագայի կարևորագույն նախաձեռնություններից մեկը: Դրանից բխող պոտենցիալ առավելություններն են. սոցիալական ինտեգրման ավելի բարձր մակարդակ, ժողովրդավարական արժեքների զարգացման խթանում, աշխատանքային տեղերի ստեղծում, ավելի բարձր տնտեսական արդյունավետություն, տնտեսական ու սոցիալական առաջընթացում ազգերի զարգացման միջև հավասարակշռության հաստատում, գլոբալ տնտեսության հետ զարգացող երկրների օրգանական ինտեգրում:

Քանի որ ստեղծվում են ազգային տեղեկատվական ենթակառուցվածքներ, անհրաժեշտ է, որ դրանք միասին տրանսֆորմացվեն գլոբալ տեղեկատվական ենթակառուցվածքի: Այդ խնդրի լուծումը պահանջում է անմախաղեպ միջազգային համագործակցություն, որի հիմնանպատակն է գլոբալ տեղեկատվական ենթակառուցվածքից յուրաքանչյուր քաղաքացու օգտվելու իրավունքի երաշխավորումը:

ԱՄՆ կառավարությունը ազգային և գլոբալ տեղեկատվական ենթակառուցվածքների զարգացումը դարձրել է իր քաղաքականության գերակայություններից մեկը: Տեղեկատվական ենթակառուցվածքը գլխավորապես ստեղծվում է մասնավոր սեկտորի կողմից: Սակայն այդ գործընթացում կարևոր դերակատարում ունի պետությունը: Ազգային տեղեկատվական ենթակառուցվածքը իր մեջ ընդգրկում է ոչ միայն տվյալների պահպանման, մշակման և փոխանակման սարքավորումները: Այն պարունակում է սարքավորումների լայն սպեկտր՝ ստեղծաշարեր, հեռախոսներ, համակարգիչներ, անջատիչներ, տեսա և ձայնաժապավեններ, հաղորդակներ, օպտիկական կաբելներ, էկրաններ և այլն: Ազգային տեղեկատվական ենթակառուցվածքը միավորում է տարբեր բաղադրիչներ: Դրա արժեքը որոշվում է այնպիսի բաղադրիչներով, ինչպիսիք են.

- տեղեկատվությունը, որը կարող է ստանալ տարաբնույթ տվյալների բազայի տեսք,
- ծրագրային ապահովումը, որը թույլ է տալիս օգտվողներին մանիպուլյացիայի ենթարկել տվյալները, հասանելի դարձնել տեղեկատվության մեծ պաշարները,
- ցանցի ստանդարտները, որոնք հեշտացնում են փոխադարձ կապերի հաստատումը ցանցերի միջև և ապահովում են տեղեկատվության պաշտպանությունն ու ցանցերի հուսալիությունը,
- մարդիկ, որոնք ստեղծում են տեղեկատվություն, ծրագրային արտադրանք, սարքավորումներ և այլն:

Հայաստանի կայուն զարգացման կարևոր գործոններից է ազգային տեղեկատվական-հեռահաղորդակցության ենթակառուցվածքի (ՏՀԵ) զարգացումը: Այդ ենթակառուցվածքը հանդիսանում է այն տեխնոլոգիական հիմնաքարը, որի օգնությամբ ապահովվելու է ՀՀ վարչատարածքային միավորների ինտեգրումը համապետական սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքին, ՀՀ աստիճանական մուտքը գլոբալ

տեղեկատվական համակարգ:

Համակարգչային և հեռահաղորդակցության ցանցերի ու համակարգերի օգնությամբ ՏՀԵ միասնական ամբողջության մեջ է պարփակում երկրի տեղեկատվական ողջ ռեսուրսները:

Տեղեկատվական-հեռահաղորդակցության համակարգերը կազմելու են նաև պետական իշխանության մարմինների միասնական տեղեկատվական տարածության հիմքը, որն ընդունակ է ապահովելու ինչպես տնտեսության կառավարման, այնպես էլ քաղաքացիների, հասարակության ու պետության անվտանգության ոլորտներում ընդունվելիք որոշումների տեղեկատվական անխափան մատակարարումը:

Այսօր Հայաստանը չունի անհրաժեշտ միջոցներ և արտադրական հնարավորություններ ազգային ՏՀԵ-ի ինքնուրույն ստեղծման ու զարգացման համար և ստիպված դրա համար ներգրավում է զարգացած երկրների կապիտալն ու տեխնոլոգիական միջոցները: ՀՀ առջև ծառայած է ազգային և կորպորատիվ տեղեկատվական ու հեռահաղորդակցության ցանցերը համաշխարհային հեռահաղորդակցության հիմնական զարկերակին: Ինտերնետին, միացնելու հիմնախնդիրը: Խնդրի էությունը կայանում է միջազգային տեղեկատվական փոխանակության պայմաններում ՀՀ ազգային շահերի պաշտպանության և ազգային տեղեկատվական ռեսուրսների ու ՏՀԵ-ի անվտանգության ապահովման անհրաժեշտության մեջ:

Համաշխարհային բաց տեղեկատվական ցանցերին երկրի մասնակցության քաղաքականությունը պետք է նախատեսնի.

- համաշխարհային տեղեկատվական ցանցերի զարգացման նախագծերին ու դրանց հետ կապված միջազգային կազմակերպությունների աշխատանքներին Հայաստանի Հանրապետության պարտադիր աշխույժ մասնակցություն,
- երկրի պահանջմունքներին համապատասխան միջազգային ցանցերին միանալուն զուգընթաց տեղեկատվական անվտանգության պահանջվող մակարդակի ապահովում:

### 2.3 Տեղեկատվայնացման միջոցների, տեղեկատվական արտադրանքի ու ծառայությունների արտադրություն և սպառում

Միասնական տեղեկատվական տարածության ստեղծումը պահանջում է գիտատեխնիկական և արտադրական բարձրակարգ ներուժի առկայություն, որը հայրենական արդյունաբերության համար կապահովի ներկա պայմաններին համահունչ առավելագույն տեխնոլոգիական անկախություն: Դա նշանակում է, որ պետք է աջակցել գիտական հետազոտությունների այն ուղղություններին, որոնք կողմնորոշված են միջազգային մակարդակի պրակտիկ արդյունքների ստացմանը: ՊՏՔ միջոցառումները պետք է ուղղված լինեն նաև բարձր տեխնոլոգիական ճյուղերի ձեռնարկությունների արտադրական ու տնտեսական գործունեության վերակառուցման աջակցմանը ու շուկայական տնտեսության պայմաններին դրանց հարմարմանը:

Այդ պայմաններում ՊՏՔ խնդիրը պետք է լինի տեղեկատվայնացման ոլորտը սպասարկող ճյուղերում ներդրումների հոսքի համար նպաստավոր պայմանների ստեղծումը:

Ասվածը թույլ է տալիս ձևակերպել ՊՏՔ հետևյալ հիմնական ուղղությունները.

- տեղեկատվության ու կապի բնագավառներում հիմնարար գիտական արդյունքներ ապահովող ազգային կենտրոններին ըստ ամենայնի աջակցում,
- տեղեկատվական-հեռահաղորդակցության համակարգերի ստեղծման և արդիականացման նպատակ հետապնդող պետական պատվերների կատարման բաց մրցույթների անցկացում,
- հայրենական գիտաշխատողների և արտադրողների արտադրանքի սերտիֆիկացում,
- տեղեկատվայնացման տարբեր միջոցների արտադրության ու նախագծման գծով գիտական կադրերի պատրաստման պետական համակարգի զարգացում:

### 2.4 Տեղեկատվական շուկա

Տեղեկատվական շուկայի սեզնեմներն են՝ հեռահաղորդակցության միջոցների, համակարգչային, տեղեկատվական տեխնոլոգիաների, ֆինանսական ոլորտի տեղեկատվական ծառայությունների, տեղեկատվական այլ ծառայությունների շուկաները: Հեռահաղորդակցության միջազգային շուկայի տարեկան ապրանքաշրջանառությունն անցնում է 500 մլրդ դոլարից: ՏՀՏ-երի ճյուղը հատկանշական է իր ապշեցուցիչ աճով, ինչպես տեխնոլոգիաների, այնպես էլ շուկայի զարգացման առումով: Այս ճյուղը աճի ահռելի ներուժ ունի և այդ պատճառով էլ աշխատուժի ու տնտեսական աճի կարևորագույն աղբյուր է: Կարևորն այն է, որ ՏՀՏ-երի ճյուղը լայնորեն աջակցում է տնտեսական աճին և մրցունակությանը, որը հսկայական ներուժ ունի ձևափոխելու ոչ միայն բիզնես մոդելները, այլ նաև հասարակական կառույցները, և այս բոլոր աղեցություններով հանդերձ՝ ընդգրկված է տեղեկատվական հասարակության հայեցակարգում:

Հատկապես արագ է զարգանում անհատական համակարգիչների շուկան: 1994թ. ԱՄՆ ընտանիքների 40 և Արևմտյան Եվրոպայի ընտանիքների 15%-ը տանն արդեն ունեին համակարգիչ: 1999թ. այդ ցուցանիշը դարձավ համապատասխանաբար 60% և 40%: 1995թ. ԱՄՆ-ում վաճառված 20 մլն համակարգիչների կեսը անհատական համակարգիչներն են:

Տեղեկատվական տեխնոլոգիաների շուկան աչքի է ընկնում նորամուծությունների բարձր մակարդակով, որոնք առաջարկում են նորագույն տեխնոլոգիական լուծումներ: Ընդ որում, ակնհայտորեն երևում է ցանցային լուծումների մախապատվության միտումը: Մասնավորապես, առաջարկվում է ավանդական, ավելի թանկ ու բարդ կառուցվածքի անհատական համակարգիչների փոխարեն օգտագործել ընդամենը 500 դոլար արժեքով ցանցային համակարգիչներ: Դրանք չեն պարունակում կոշտ սկավառակ և իրենցից ներկայացնում են տերմինալներ, որոնց օգնությամբ շահագործողները կարող են միանալ Ինտերնետի կամ կորպորատիվ այլ ցանցերի տվյալների բազաներին ու ծրագրերին:

ՏՏ-երի արագ զարգացումը և տնտեսական գործունեության տարբեր ոլորտներում դրանց կիրառման անփոխարինելիությունը ՏՏ-երին դարձնում են արդյունաբերության առանձնակի կարևոր ճյուղ, շատ անգամ նույնիսկ ավելի, քան էներգետիկան: ՏՏ-երը աներկբայորեն ձեռք են բե-



րում ռազմավարական կարևորություն, եթե դիտարկենք, նախ՝ նեղ իմաստով, որպես զարգացած պաշտպանության համակարգի որոշիչ տարր, ապա՝ ավելի լայն իմաստով, որպես ազգային տնտեսության ամրապնդման և միջազգային շուկայում մրցունակության բարձրացման համար որոշիչ հիմք:

Մյուս ցանցային տեխնոլոգիական նորույթը Ինտրանետն է, որը Ինտերնետի ենթահամակարգ է՝ կոչված լուծելու ներֆիրմային տեղեկատվական խնդիրներ: Այդ ենթահամակարգը դյուրինացնում է տեղեկատվական ռեսուրսներից օգտվելը և իջեցնում դրանց ինքնարժեքը, նպաստում աշխատանքի կոլեգիալության մակարդակի բարձրացմանը և բացառում գործընթացների կրկնօրինակումը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների (SS-երի) արտադրանքի համաշխարհային շուկան 1996թ. գնահատվել է 1.188,14 միլիարդ ԱՄՆ դոլար և սպասվում էր, որ այն 2000թ. կհասնի 1.815,5 միլիարդ ԱՄՆ դոլարի՝ ցուցաբերելով միջինը 12-15% տարեկան արագացված աճ: Համաձայն Համաշխարհային Բանկի կատարած ուսումնասիրության, տեղեկատվություն կրող արտադրությունները 2000թ. պետք է կազմեին համաշխարհային ՀՆԱ-ի մոտ 60%-ը:

Հիմնական շարժիչ ուժը, որը զարգացնում և ընդլայնում է այս շուկան համակարգչային սարքավորումներն ու SS ծառայություններն են (ծրագրային ապահովում և այլ SS ծառայություններ): SS ծառայությունների բաժինը այդ շուկայում 2000թ. կազմում էր 25% (450,85 միլիարդ ԱՄՆ դոլար), իսկ համակարգչային սարքավորումների հետ միասին այն հասնում էր 936,75 միլիարդ ԱՄՆ դոլարի, որոնք ներկայացնում էին SS համաշխարհային շուկայի գրեթե կեսը՝ 49%:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի արտադրանքի միջազգային առևտրի ծավալները ավելի մեծ են, քան գյուղատնտեսական ապրանքների, ավտոմեքենաների և տեքստիլի արտադրանքի գծով համաշխարհային առևտրի ծավալները միասին վերցրած: 1997թ. SS արտադրանքի համաշխարհային արտահանումը կազմել է 681 միլիարդ ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 618 միլիարդ ԱՄՆ դոլար: Երկրները (տարածաշրջանները), որոնք 1997թ. տվել են արտահանման և ներմուծման ծավալների 90%-ից ավելին, հետևյալն են (հերթականությունը ներկայացված է ըստ ծավալների մեծության)՝ ԱՄՆ, ճապոնիա, Եվրոպական Միություն,

Սինգապուր, Մալազիա, Կորեայի Հանրապետություն, Չինաստան, Թայլանդ, Կանադա և Հոնկոնգ (Չինաստան): Այս ցանկում Սինգապուրի և Հոնկոնգի գտնվելը չի նշանակում, որ այս երկրներն ունեն արտադրական հզոր կարողություններ կամ բարձր պահանջարկ, այլ պարզապես այս երկրները տարածաշրջանային առևտրի կարևոր կենտրոններ են:

SS համաշխարհային շուկան արագ աճում է: Վերջին տասնամյակի ընթացքում SS ծառայությունների շուկայի միջին տարեկան աճը կազմել է 8%՝ մեծ հնարավորություններ ստեղծելով անցումային և զարգացող երկրների ընկերությունների համար:

Ներկայումս հատուկ նշանակություն է տրվում տնտեսական գործընթացներում մեծ դերակատարում ունեցող տեղեկատվական ու դրամական հոսքերի փոխներգործությանը: Այդ փոխներգործության օրինակ է բանկային էլեկտրոնային ծառայությունների ի հայտ գալը: Բանկային էլեկտրոնային ծառայությունների շուկան զանգվածային բնույթ է ստանում: Հնարավոր է դարձել մեկ տերմինալի (անհատական համակարգիչ և մոդեմ) միջոցով ընտրել, գնել և վաճառել ապրանքներ ու ծառայություններ, կառավարել բանկային հաշիվներ և վարել անհատական ֆինանսական հաշվառում: Այդ գործընթացն արագացել է միկրոպրոցեսորային պլաստիկ քարտերի ի հայտ գալու և Ինտերնետի արագ աճի շնորհիվ: Աստիճանաբար հաղթահարվում է Ինտերնետի գլխավոր թերությունը, որը դժվարացնում էր այդ ցանցի օգտագործումը ֆինանսական ծառայություններ մատակարարելու համար՝ ֆինանսական չարաշահումներից դրա անպաշտպանվածությունը:

Տեղեկատվական շուկայի զարգացումն առաջադրում է երկու հիմնախնդիրներ: Որպեսզի այդ շուկան լինի արդյունավետ, այն պետք է լինի բարձր մրցակցային: Տեղեկատվական շուկայի մրցակցության մակարդակը բարձրացնելու համար խիստ կարևորվում է հեռահաղորդակցության շուկայի ազատականացումը այն երկրներում, որտեղ գերիշխում են մենաշնորհային ֆիրմաները: Մասնավորապես, անհրաժեշտ է թույլ տալ ստեղծել այլընտրանքային հեռահաղորդակցության ցանցեր: Ավելի ցածր տարիֆների, բարձրորակ սերվիսի և ավելի արտադրողական տեխնոլոգիաների շնորհիվ այդ շուկայի ազատականացումը թույլ կտա տնտեսել հսկայական միջոցներ:

Տեղեկատվության տնօրինման ու տարածման գործընթացների ապա-

մենաշնորհացունը էական է ոչ միայն մրցակցության բարձր աստիճան ապահովելու տեսակետից, այլ նաև այն բանի համար, որ տեղեկատվության տնօրինման ու տարածման մենաշնորհը կհանգեցնի դրա աղճատմանը՝ ի շահ նեղ շրջանակի մարդկանց: Տեղեկատվության հավաստիության խնդիրը հատկապես սուր է դրված կապված գովազդի հետ, քանի որ տեղեկատվության դերի աճը հանգեցնում է մարդկանց կյանքում գովազդի նշանակության աճին: Այդ հիմնախնդրի մյուս կողմը կապված է ֆինանսական շուկայի տարբեր սեկտորների ոչ թափանցիկության հետ: Յուրահատուկ նշանակություն ունի տեղեկատվական ծառայությունների սև շուկան, որտեղ վաճառքի օբյեկտ է կոնֆիդենցիալ տեղեկատվությունը:

Այսօր արդեն կարելի է խոսել հայրենական տեղեկատվական շուկայի զարգացման բավականին կայուն միտումների ու հեռանկարների մասին, սակայն ստացված արդյունքների իրացումը շատ դեպքերում կախված է պետական կարգավորման ակտիվ քաղաքականությունից:

ՀՀ տեղեկատվական շուկայի զարգացման գործում ՊՏՔ պետք է ապահովի.

- շուկայի բոլոր մասնակիցների վարքը կարգավորող նորմատիվային-իրավական հիմնադրույթների մշակում,
- հայրենական արտադրողների նկատմամբ հովանավորչական քաղաքականության իրականացում,
- դեպի համաշխարհային տեղեկատվական շուկաներ մրցունակ արտադրանքի առաջխաղացման նպաստում:

### *2.5 Բնակչությանը տեղեկատվությամբ ապահովող ու հասարակական կարծիք ձևավորող համակարգ*

Տեղեկատվական հասարակության ձևավորումը անշեղորեն կապված է հասարակական ու քաղաքական կյանքի հետագա ժողովրդավարացման հետ: Տեղեկատվական քաղաքականության ենթատեքստում դա նշանակում է քաղաքացիների համար տեղեկատվության թափանցիկության ու նրանց տեղեկատվական իրավունքների ապահովման գերակայություն: Սա իր հերթին նշանակում է նաև տեղեկատվական ռեսուրսների ձևավոր-

ման, տարածման և օգտագործման համակարգի ու ՏՀԵ-ի կողմնորոշում դեպի տեղեկատվության ազատ շրջանառության ապահովում, տեղեկատվության հավաքման, ստացման և տարածման սահմանադրական իրավունքի կենսագործում:

Լուրջ վտանգ է ներկայացնում զանգվածային լրատվության միջոցների և հասարակայնության հետ կապերի ստորաբաժանումների օգնությամբ պետական իշխանության ու կառավարման մարմինների կողմից բնակչությանը տեղեկատվության կանոնավոր տրամադրման բացակայությունը:

Այդ կապակցությամբ, որպես ՊՏՔ կարևորագույն խնդիրներ պետք է դիտարկվեն.

- տեղեկատվության շրջանառություն իրականացնելիս քաղաքական կյանքի բոլոր սուբյեկտների փոխհարաբերությունները կարգավորող օրենսդրության, իրավական ու կազմակերպական մեխանիզմների մշակումն ու դրանց անընդհատ կատարելագործումը,
- պետական ՁԼՄ-երի, հասարակական կարծիքն ուսումնասիրող ծառայությունների, կենտրոնների ու բնակչության հետ կապերն ապահովող պետական մյուս կառույցների գործունեության նկատմամբ հրապարակային և անկախ վերահսկողություն իրականացնող համակարգի ստեղծումը:

Գլխավորն այստեղ հանդիսանում է երկրի ազգային շահերին և պատմա-մշակութային ավանդույթներին համահունչ հոգևոր արժեքների ձևավորման ու տարածման նպատակով ՁԼՄ-երի վրա ներգործության քաղաքակիրթ, ժողովրդավարական ձևերի և մեթոդների մշակումն ու կիրառումը:

Պետության տեղեկատվական քաղաքականությունը պետք է նախատեսվի.

- ՁԼՄ-երի նկատմամբ իշխանության ու բիզնեսի ներկայացուցիչների ազդեցության ուժեղացման, իշխանական կառույցների, բիզնեսի ու մամուլի միջոցների սերտաճման անթույլատրելիություն,
- ՁԼՄ-երի նկատմամբ մենաշնորհային քաղաքականության բացառում,
- զանգվածային լրատվության տարածաշրջանային շահերի պաշտպանություն ու տեղական ՁԼՄ-երի զարգացման աջակցում:

## 2.6 Տեղեկատվական իրավունք

Ցանկացած պետության ներսում քաղաքացիների, սոցիալական ինստիտուտների, հասարակական ու քաղաքական կազմակերպությունների ու պետության շահերի հաշվեկշիռն ապահովվում է իրավական համակարգի միջոցով:

Տեղեկատվական հասարակության իրավական հիմքը պետք է նպաստի տեղեկատվական ռեսուրսների, տեղեկատվական ծառայությունների և տեղեկատվական արտադրության միջոցների ներդաշնակ զարգացմանը: Պետական տեղեկատվական քաղաքականության հիմքը կազմում են իրավական նորմերի ամբողջությունը և դրանց իրագործման մեխանիզմները:

Համակարգչային ու հեռահաղորդակցության ցանցերի գլոբալացումը, տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային շուկայի արագ զարգացումը, միջազգային տեղեկատվական տարածության ձևավորումը լրջորեն ներազդում են պետականության և ազգային իրավական համակարգերի բաղադրիչների վրա: ՊՏՔ իրավական խնդիրների որոշման ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ նաև վերոնշյալը:

Երբ խոսք է գնում տեղեկատվության ազատ ստացման, տարածման և օգտագործման նկատմամբ քաղաքացիների, իրավաբանական անձանց ու պետության իրավունքների, գաղտնի տեղեկատվության ու մտավոր սեփականության պաշտպանության մասին, պետությունը պետք է առաջնորդվի տեղեկատվական հարաբերությունների բոլոր մասնակիցների իրավական հավասարության սկզբունքով՝ անկախ նրանց քաղաքական, սոցիալական ու տնտեսական կարգավիճակից:

ՊՏՔ իրավական բաղադրիչով պետք է իրականացվեն հետևյալ գործընթացները.

- տեղեկատվության ոլորտը կարգավորող օրենսդրությամբ լրացնող նոր օրենքների մշակում,
- այդ ոլորտի իրավական ակտերի համապատասխանեցում երկրի Սահմանադրությանն ու օրենսդրությանը,
- ակտիվ մասնակցություն տեղեկատվական հարաբերությունները կարգավորող միջազգային իրավունքի նորմերի մշակմանն ու կատարելագործմանը:

## 2.7 Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման միտումները Հայաստանի Հանրապետությունում

Համաշխարհային տնտեսության մեջ հատկապես վերջին տասնամյակում կատարվող տեղաշարժերը պայմանավորված են, այսպես կոչված, «բարձր տեխնոլոգիաների» և հատկապես տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն զարգացմամբ: Փաստորեն, տեխնոլոգիական առաջընթացը հանգուցային այն ռեսուրսն է, որն ի վիճակի է ոչ միայն հեղափոխական ազդեցություն գործել զարգացած երկրների տնտեսությունների վրա, այլև նպաստել համակարգային կերպափոխման փուլում գտնվող նախկին սոցիալիստական ճամբարի երկրների, այդ թվում՝ Հայաստանի, տնտեսությունների արդիականացմանը:

Հայաստանում ՏՏ-երի արդյունաբերությունը կարելի է դիտարկել որպես ամենահեռանկարային ճյուղ, որը կարող է առաջատար դեր խաղալ երկրի երկարաժամկետ տնտեսական զարգացման մեջ և մեծ ազդեցություն ունենալ տնտեսության այլ ճյուղերի ու ոլորտների վրա: Ցանկացած պետությունում ՏՏ-երը և դրանց ենթակառուցվածքները վճռորոշ են համաշխարհային շուկայում հաջող գործելու համար: Միաժամանակ, ՏՏ-երի արդյունաբերության ենթակառուցվածքների բացառիկ անհրաժեշտությունը տնտեսության մյուս ճյուղերի զարգացման համար ՏՏ-երի բոլոր տարրերը դարձնում են կարևորագույն գործոն թե՛ ներքին, թե՛ օտարերկրյա ներդրումների համար: Այսպիսով, ՏՏ-երի արդյունաբերության զարգացումը եռակի դեր է խաղալու Հայաստանի տնտեսական զարգացման մեջ, նախ՝ որպես արդյունաբերության ինքնին հեռանկարային ճյուղ, երկրորդ՝ որպես անհրաժեշտ արտադրական արդիական հենք այլ ճյուղերի զարգացման համար, և երրորդ՝ որպես ենթակառուցվածք ներդրումների ներգրավման համար: Բացի այդ, որպես ՏՏ-երի արդյունաբերության զարգացման մեկ այլ գործոն կարելի է նշել ՏՏ-երի դերը տնտեսության արդյունաբերականից դեպի տեղեկատվական վերափոխման առումով:

Հետևողական քաղաքականության իրագործման պարագայում նորագույն տեխնոլոգիաների յուրացումը թույլ կտա լուծել ինստիտուցիոնալ վերափոխումների, արտադրության տեխնիկա-տեխնոլոգիական հիմքերի նորացման ու զանգվածային գործազրկության հաղթահարման խնդիրները:

Ավելին, տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնված տնտեսական զարգացած համակարգի ստեղծումն ընդհանարապես կարող է դառնալ բարձր զարգացած տեղեկատվական հասարակության ձևավորման վճռորոշ պայման: Չարգացման նման սցենարի շահեկանությունն այսօր գիտակցվում է պետական մակարդակով:

Նկատենք նաև, որ Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումն ինքնին լոկոմոտիվի դեր կխաղա տնտեսության մյուս ճյուղերի առաջընթացի համար: Հայաստանը նախկինում ունեցել է և ներկայումս էլ հիմնավոր նախադրյալներ է ստեղծում աշխարհի SS-երի արդյունաբերության զարգացման գործընթացին միանալու համար:

Հայաստանը նախկին ԽՍՀՄ տեխնոլոգիապես ամենազարգացած երկրներից էր՝ տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունաբերության զարգացման հատուկ ուղղվածությամբ: Հայաստանում կար այս ոլորտում գործող մոտ 40 գիտահետազոտական կենտրոն: Հետևաբար, երկրում կային մեծ թվով ծրագրավորողներ: Ծրագրավորողներից շատերն անցյալում աշխատել են պաշտպանության ոլորտում: 1961թ-ից ավելի քան 13.000 ՏՀՏ-երի մասնագետներ ավարտել են Երևանի պետական ու ճարտարագիտական համալսարանները:

Այսօր Հայաստանում գործում են տեղեկատվական տեխնոլոգիաներով զբաղվող ավելի քան 200 ընկերություններ, որոնցից շուրջ 50-ը թողարկում են ծրագրային ապահովման արտադրանք: Այդ ընկերություններից 15-ը արտասահմանյան ընկերությունների մասնաճյուղեր են: Պաշտոնական տվյալներով տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում այսօր զբաղված են բարձր որակավորում ունեցող ավելի քան 2500 ծրագրավորողներ: Բացի այդ, Հայաստանում կան համակարգչային ծրագրավորման ևս 6000 մասնագետներ, որոնք վերաորակավորման դասընթացներ անցնելու դեպքում կարող են միջազգային չափանիշներին համապատասխան արդյունք ապահովել:

Հատկապես ուշադրության է արժանացել արտահանման ուղղվածությունը (ծրագրավորման ոլորտում գործող ձեռնարկությունների 43%-ը արտերկրյա կազմակերպությունների դուստր ձեռնարկություններ են): Սա առավել խթանել է SS-երի արդյունաբերության վերջերս առաջացած ենթաճյուղերի (Ինտերնետ ծառայությունների մատուցում, SS ծառայություններ, տվյալների էլեկտրոնային մշակման (ՏԷՄ) սարքավորումներ,

SS կրթություն) զարգացումը:

Համաձայն 1998թ.-ից ի վեր անկախ դիտորդների կատարած բազմաթիվ ուսումնասիրությունների և գնահատումների՝ Հայաստանը զգալի ներուժ ունի իր ներկայությունը աշխարհի տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների արդյունաբերությունում, հատկապես՝ ծրագրային ապահովման ոլորտում ամրապնդելու համար, շնորհիվ նախկին ԽՍՀՄ ժառանգության, երբ Հայաստանը մասնագիտացված էր տեղեկատվական տեխնոլոգիաների և էլեկտրոնիկայի բնագավառներում:

Ունենալով շուրջ 3 մլն բնակչություն՝ Հայաստանը տնօրինում է կրթական եւ մշակութային ենթակառուցվածքի, որի օգնությամբ պատրաստվել են ՏՀՏ-երի մեծ թվով որակյալ մասնագետներ, հիմնականում ծրագրավորողներ, որոնք աշխատում են մի շարք փոքր ձեռնարկություններում:

ՀՀ կառավարությունը, նպատակ ունենալով խթանել SS-երի արդյունաբերության զարգացումը, 2000թ. դեկտեմբերին SS-երի արդյունաբերությունը հայտարարեց որպես Հայաստանի տնտեսության զարգացման գերակա ճյուղերից մեկը և ապրիլի 1-ին ընդունեց ճյուղի զարգացման հայեցակարգը: Միջազգային դոնոր կազմակերպությունների մեծամասնությունը նույնպես ճանաչել է SS-երի արդյունաբերության զարգացումը որպես աջակցության գերակայող դաշտ, և որոշ կազմակերպություններ արդեն այն իրականացնում են կամ ներկայումս մշակում են աջակցության ծրագրեր ու նախագծեր:

Աճի առավել արագ դինամիկա ցուցաբերում են հիմնականում ծրագրային ապահովման, SS կրթության և SS ծառայությունների ենթաճյուղերը: Ինտերնետ ծառայություն մատուցող ձեռնարկությունները և ՏԷՄ սարքավորումների ենթաճյուղը ցուցաբերում են չափավոր աճ, իսկ SS սարքավորումների ենթաճյուղում շոշափելի աճ չի նկատվում:

SS-երի արդյունաբերությունը իր վերափոխման ընթացքում շարունակում է գրավել առավել արհեստավարժ և բարձր որակավորում ունեցող մասնագետներին: Համաձայն հարցմանը, SS-երի հատվածում զբաղված են մոտ 3.850 մասնագետ, որոնց թվում՝ համակարգչային ծրագրավորողներ և համակարգչային ճարտարագետներ (67%), համակարգերի վերլուծաբաններ (6.57%), համակարգչային սարքավորումներ մասնագետներ (20%), SS-երի կրթական հաստատություններում աշխատող ուսուցիչներ (6.43%): Չնայած տնտեսության ներկա դանդաղ զարգացմանը, SS-երի

հատվածը շարունակում է աշխատանքի ընդունել համակարգչային ծրագրավորողների և ճարտարագետների: Ջբաղվածության պահանջարկի մոտավոր թիվը ծրագրային ապահովման հատվածում կազմում է 1.600 մասնագետ (համակարգչային ծրագրավորողներ, համակարգչային ճարտարագետներ): Ծրագրային ապահովման հատվածում այս մասնագետների հանդեպ էքստրապոլացված պահանջարկը կազմում է մոտ 700 մասնագետ: Համակարգերի վերլուծաբանների պահանջարկը տեղեկատվական ծառայության մատուցման ենթաճյուղում հասնում է ներկայումս աշխատող վերոհիշյալ մասնագետների 237%-ին: Ամբողջ SS-երի արդյունաբերության պահանջարկի էքստրապոլացիան թափուր աշխատատեղերի թիվը հասցնում է 1.800-ի:

Մասնագետները շարունակում են արտագաղթել Հայաստանից, սակայն փոփոխվել է արտագաղթի միտումների բնույթը: Այսինքն, եթե մինչև 1995թ. արտագաղթող մասնագետների մեծամասնությունը բարձր որակավորում ունեցող համակարգչային ծրագրավորողներն էին, ապա օտարերկրյա ընկերությունների կողմից SS-երի մասնագետներ պատրաստող կադրերի նկատմամբ աճող հետաքրքրության հետևանքով 1995թ.-ից հետո երկրից մեկնած մասնագետների 70%-ը կազմում են նրանք: Հայկական կրթական համակարգը ևս մեկ անգամ ապացուցեց նախկինում իր ձեռք բերած բարձր մակարդակը, որի հետևանքով այսօր թանկ ենք վճարում մասնագետներին երկրում պահելու անկարողության համար: Արտագաղթած մասնագետների 69%-ը կապ է պահում հայրենիքի հետ, իսկ 16%-ը՝ նաև բերում է պատվերներ:

Հայկական ձեռնարկությունների առանձնահատուկ ուշադրության կենտրոնում պետք է գտնվեն տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման, կորպորատիվ կուլտուրայի ու տեղեկատվության փոխանակման համակարգի զարգացման հարցերը:

Հայաստանում տեղեկատվական հասարակության ձևավորման գործընթացի հակասականությունը խորանում է հայոց պետականության անբաժանելի և անցումային ժամանակաշրջանի բարդագույն պայմաններով, սոցիալ-տնտեսական դժվարություններով, մեկուսացված փակ հասարակությունից բաց հասարակություն անցման գործընթացների սրընթացությամբ:

Հայ հասարակության տեղեկատվայնացման ներկա իրավիճակը չի

համապատասխանում այդ նոր սոցիալ-տնտեսական ու տեխնոլոգիական երևույթի պահանջներին: Ակնհայտ է, որ Հայաստանը գտնվում է տեղեկատվական հասարակություն տանող ճանապարհի սկզբում և դրա ձևավորման տեմպերով բավականաչափ ետ է մնում աշխարհի բազմաթիվ երկրներից:

Մեզ մոտ ավանդաբար անհավասարաչափ էին զարգանում գիտությունն ու զանգվածային արտադրության մեջ գիտական արդյունքների գործնական կիրառումը: Եթե գիտության մի շարք հիմնարար ուղղություններում (մաթեմատիկա, ֆիզիկա, նյութագիտություն, լազերային տեխնիկա և այլն), որոնք կազմում են տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հիմնաքարը, մեր մասնագետները գտնվում էին բարձր մակարդակի վրա, իսկ մի շարք դեպքերում նույնիսկ գերազանցում էին աշխարհի այլ երկրներին, ապա հաշվողական ու հեռահաղորդակցության տեխնիկայի արտադրության բնագավառում դրանց արդյունքների ներդրման հարցում մեր երկիրը լրջորեն ետ էր մնում:

Հայաստանյան տեղեկատվական շուկայում գերիշխում են արտասահմանյան երկրների առաջատար ֆիրմաների արտադրանքն ու ծառայությունները, որոնք իրենց առավելություններն օգտագործում են միակողմանի շահույթ ստանալու համար: Տեղեկատվական ռեսուրսների և արտադրանքի մուտքը շուկայական ապրանքափոխանակության մեջ ուղեկցվում է տեղեկատվական հարաբերությունները կարգավորող օրենսդրության ու նորմատիվային բազայի թերզարգացմամբ, ինչը հանգեցնում է տեղեկատվական ռեսուրսների, քաղաքացիների անհատական տվյալների ու մտավոր սեփականության նկատմամբ իրավունքների անպաշտպանվածությանը: Նման պայմաններում պրոգրեսիվ աճի մեծ հավանակություն ունեն համակարգչային հանցագործությունները:

Ինտերնետի ու հեռահաղորդակցման ենթակառուցվածքը ներկայումս մեծագույն և ամենալուրջ խոչընդոտներից մեկն է Հայաստանում SS-երի արդյունաբերության զարգացման համար: Ակնհայտ է, որ «Արմենտել» ընկերությունը շահագրգռված չէ Ինտերնետի զարգացման գործընթացում և ներկայումս այս իրավիճակը փոխելու դրդապատճառներ չունի:

Ինտերնետ ցանցին միացված ընկերությունների թիվը, բացի SS-երի սարքավորումների ենթաճյուղի, հասնում է 92%-ի: Չնայած Ինտերնետ ցանցին միացվածների նման բարձր տոկոսի, պետք է նշել, որ ձեռնար-

կությունների ավելի քան 50%-ը միացված են հեռախոսային կապի միջոցով, և ընկերություններից միայն 20%-ն ունեն առանձին հատկացված գիծ: Իսկ առանց հաղորդակարի և արբանյակի միջոցով ցանցին միացած ձեռնարկությունների թիվն ավելի փոքր է՝ 10%:

Մեկ այլ կարևորագույն հիմնահարց է երկրում Ինտերնետի և հեռահաղորդակցման ցածր որակն ու բարձր գինը: Ընկերությունները նշում են այնպիսի թերություններ, ինչպիսիք են ծառայությունների բարձր սակագները, ցածր հզորությունը և միացման անբավարար արագությունը: Կառավարիչների 87%-ը նշում է, որ հեռահաղորդակցման և, մասնավորապես, Ինտերնետի ներկա իրավիճակն ու զարգացման տեմպերը իրենց ձեռնարկությունների գործունեության ամենալուրջ խոչընդոտներն են: Տպավորությունն այնպիսին է, որ Ինտերնետի ներկա վիճակը և դրա աճին խոչընդոտող գործոնները կան և մոտ ապագայում կարող են լինել Հայաստանում SS-երի զարգացման հիմնական արգելք, եթե չներմուծվեն նոր տեխնոլոգիաներ:

Չնայած որակյալ աշխատուժի առկայությանը և զարգացման ներուժին, ՀՀ ձեռնարկությունների մեծամասնությունը SS-երի մարքեթինգի և կառավարման տարրական գիտելիքներից զուրկ են: Կառավարիչների կողմից նշված կարևորագույն խնդիրներն են՝ մարքեթինգի մասնագետների բացակայությունը, շուկայի մրցակցության անտեղյակությունը, մարքեթինգ պլանի, արտադրանքի խթանման և գովազդի բացակայությունը: Սրանք լրջորեն արգելակում են ձեռնարկությունների ընդլայնման ու արտահանման հնարավորությունները և աճի ներուժը, սահմանափակելով նրանց գործունեությունը Հայաստանի սահմաններում:

Ձեռնարկությունների գործունեությունը զգալիորեն կախված է այն գործարար միջավայրից, որտեղ դրանք ծավալում են իրենց գործունեությունը: SS-երի արդյունաբերության դինամիկ էությունը պահանջում է առավել ճկունություն և ազատություն: Դժբախտաբար, որոշ պետական մարմիններ և պաշտոնյաներ լրջորեն խոչընդոտում են ձեռնարկությունների գործունեությանը:

SS-երի ոլորտի ձեռնարկությունների կարևորագույն հիմնախնդիրներից է նաև ֆինանսական ռեսուրսների սակավությունը:

Գլոբալ տեղեկատվական ցանցերի արագընթաց զարգացումը և դրա արդյունքում ի հայտ եկող հիմնախնդիրները պահանջում են արդյունա-

վետ կարագավորիչ միջոցառումների իրականացում պետության կողմից: Անհանգստություն է առաջացնում նաև գերատեսչական տեղեկատվական ռեսուրսների և համակարգերի ստեղծման ու շահագործման նպատակով օգտագործվող բյուջետային միջոցների աճն այն դեպքում, երբ պատշաճ ձևով չեն ապահովվում դրանց որակը, հուսալիությունը, փոխգործողությունը և համատեղելիությունը: Բացակայում են ՀՀ քաղաքացիների կողմից պետական տեղեկատվական ռեսուրսներից և ծառայություններից օգտվելու արդյունավետ լծակներն ու մեխանիզմները: Տեղեկատվայնացման ոլորտի այս ոչ հասարակ հիմնախնդիրների համալիրը հրամայական են դարձնում միասնական ռազմավարության իրականացումը տեղեկատվական հասարակության ձևավորման բնագավառում:

Անկասկած, տեղեկատվական հարաբերությունների բնագավառում առկա են նաև դրական քայլեր: Դրանք պայմանավորված են որոշակի տնտեսական աճով: Շուկայի առանձին սեկտորներում նկատվող աճի տեմպերի նվազումը փոխհատուցվում է դրանց որոշակի աճով այլ սեկտորներում: Իսկ դա արդեն շուկայական հարաբերությունների ու ուժերի աշխատանքի իրական արդյունքն է:

Ստեղծված իրավիճակի հիմնական պատճառներն են.

- երկրի ընդհանուր տնտեսական, սոցիալական ու գիտատեխնիկական զարգացման պայմաններն այսօր թույլ չեն տալիս արդյունավետ լուծել տեղեկատվայնացման հիմնախնդիրները,
- տեղեկատվայնացման գործընթացներին հայաստանյան հասարակության անպատրաստվածությունը, հասարակության ու տնտեսության կողմից տեղեկատվական արտադրանքի և ծառայությունների նկատմամբ իրական պահանջարկի թերձևավորումը,
- քաղաքացիների տեղեկատվական իրավունքների անպաշտպանվածությունը՝ պայմանավորված տեղեկատվական ծառայությունների բարձր գնով,
- հայաստանյան տեղեկատվական շուկայում ձևավորված գնային պատկերը. ներկայումս տեղեկատվական արտադրանքի բազմաթիվ տեսակներ ավելի հեշտ և անհամեմատ էժան է ձեռք բերել արտերկրում, քան Հայաստանում,
- միջազգային տեղեկատվական շուկաներում մրցակցության աննախադեպ սրացումը, հատկապես տեղեկատվական բարձր տեխնոլոգիա-

ների ոլորտում, ԱՊՀ շուկաներում արտասահմանյան ֆիրմաների էքսպանսիան, շուկայի ընդլայնման համար հայրենական և արտասահմանյան ֆիրմաների միջև ծավալվող պայքարի սրացումը,

• գլոբալ տեղեկատվական ցանցերում տեղեկատվության փոխանակման անհավասարակշռությունը և անհամարժեքությունը, այդ ցանցերում անգլերեն լեզվով գրականության և այլ նյութերի գերակշռությունը, հայրենական տեղեկատվական ռեսուրսների վատ հասանելիությունը:

Ելնելով մի շարք օբյեկտիվ հանգամանքներից, պետությունն այսօր չի կարողանում բավականաչափ ուշադրություն դարձնել ՀՀ-ում տեղեկատվական հասարակության ձևավորմանը նպաստող գործընթացների վրա: Հեռանկարային տեղեկատվական տեխնոլոգիաների գիտատար ուղղությունների ֆինանսավորումն իրականացվում է խիստ անբավարար, ոչ լրիվ չափով են իրականացվում տեղեկատվայնացման ոլորտի օրենսդրական դաշտի ձևավորման աշխատանքներն ու հասարակական-պետական կարիքների համար տեղեկատվայնացման միջոցների և տեղեկատվական ռեսուրսների զարգացման ու ձեռք բերման գործընթացները:

Տեղեկատվական տեխնոլոգիաների նկատմամբ օրեցօր աճող հետաքրքրության կարելիորագույն պատճառներից մեկն էլ տնտեսական ավելի կոշտ պայմաններն են, որոնցում հատկապես հարկ է լինում գործել արտահանմամբ զբաղվող սուբյեկտներին: Համաշխարհային գների անկայունության պայմաններում արդյունավետ մենեջմենթի՝ որպես տնտեսական աճի գործոնի, դերն անհնար է գերազնահատել: Ինքնարժեքի կառավարում, փոխշահավետ հարաբերություններ մատակարարների ու պատվիրատուների հետ, եկամուտների ու ծախսերի նկատմամբ օպերատիվ վերահսկողություն. սրանք այն ոլորտներն են, որտեղ գլխավոր «գործող անձ» է հանդիսանում արդիական եւ օպերատիվ բիզնես տեղեկատվությունը:

Համաշխարհային մասշտաբով ՀՀ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտն ունի մրցակցային մի շարք յուրահատկություններ.

- բարձր որակավորում ունեցող մարդկային ռեսուրսների առկայություն,
- աշխատավարձի համեմատաբար ցածր մակարդակ,
- հայկական մեծ Սփյուռքի առկայություն,
- կապի միջոցների և Ինտերնետ տեխնոլոգիաների ոչ բավարար զար-

գացում,

- տնտեսության իրական հատվածի ճգնաժամային իրավիճակ,
- ֆինանսական միջոցների սղություն,
- մտավոր սեփականության պաշտպանության համակարգի անկատարություն,
- կորպորատիվ կառավարման ցածր կուլտուրա,
- պետության դեռևս թույլ աջակցություն:

Ներկայումս տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն ծավալող Հայաստանի ձեռնարկությունների առջև ծառայած են որոշակի խնդիրներ, քանի որ, փորձի բացակայության պատճառով դրանց կողմից պատշաճ կերպով չեն կատարվում արտաքին և ներքին շուկաների անհրաժեշտ ուսումնասիրություններ:

Դրա համար էլ մարքեթինգային համակարգի մշակումը և ներդրումը ձեռնարկությունների վերոհիշյալ խնդիրների լուծման համար խիստ կարևոր նշանակություն ունի:

## *2.8 Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվական հասարակության ձևավորման ռազմավարության հայեցակարգային դրույթները*

1. Ինչպես ցույց է տալիս զարգացած երկրների փորձը, տեղեկատվական հասարակության ձևավորման ոլորտում աննախադեպ հաջողությունների են հասնում այն երկրները, որոնցում պետությունը մշակում և իրականացնում է համապատասխան նպատակադրված քաղաքականություն: Պետության դերը հատկապես կարևորվում է այդ գործընթացների արդյունավետ ծավալման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու, տեղեկատվական արտադրության ոլորտ համապատասխան կադրային, ֆինանսական, նյութական և այլ ռեսուրսներ ներգրավելու գործում: Դրա համար անհրաժեշտ է պետական ռեսուրսների կենտրոնացումը իրավական-նորմատիվային ու նորմատիվային-տեխնիկական կարգավորման, տեղեկատվական հասարակության առավելությունները բացահայտող ծրագրերի ու նախագծերի իրականացման, միջազգային տեղեկատվական փոխանակության և համագործակցության զարգացման վրա:

Այդ ենթատեքստում խիստ հետաքրքրական է Հարավ-Արևելյան Ասիայի բուռն զարգացող երկրներից մեկի՝ Մալազիայի օրինակը, որտեղ երկրի կառավարության ղեկավարի անմիջական հսկողությամբ իրագործվում է «մուլտիմեդիային միջանցքի» ստեղծման նախագիծը: Այդ նախագծի նպատակն է ստեղծել գերժամանակակից էլեկտրոնային ու համակարգչային տեխնոլոգիաների արտադրությամբ և համապատասխան ծառայությունների մատակարարմամբ զբաղվող հատուկ տնտեսական տարածք, որի ներդրումային գործընթացներում ներգրավված են ամենահայտնի էլեկտրոնային (Sony), համակարգչային (Hewlett Packard, Oracle, Microsoft) և հեռահաղորդակցության ոլորտների ֆիրմաները: Նախագծի ընդհանուր արժեքը 20 մլրդ ԱՄՆ դոլար է:

2. Տեղեկատվական հասարակության գաղափարն իր մեջ հսկայական ինտեգրող ներուժ է պարունակում տեղեկատվական ենթակառուցվածքների ու տեղեկատվական արտադրության զարգացման համար: Այն ընդգրկում է տեղեկատվական ենթակառուցվածքի զարգացման նոր փուլի կարևորագույն տարրերը՝ համակարգչային ցանցերի միջոցով ազդանշանների հաղորդումից անցում տեղեկատվական բովանդակության հաղորդման, էլեկտրոնային կրիչներում կուտակված տեղեկատվությունից անցում գլոբալ ցանցերի միջոցով հասանելի տեղեկատվության: Այն նույնպես թույլ է տալիս համակարգված մոտեցում ցուցաբերել տեղեկատվական արտադրության տնտեսական, տեխնոլոգիական, քաղաքական և այլ հիմնախնդիրների համալիրի նկատմամբ:

3. Այսօր Հայաստանում ոչ պետությունը և ոչ էլ մասնավոր հատվածը դեռևս չեն ձևավորել իրենց դիրքորոշումն ու ռազմավարական նպատակները տեղեկատվական հասարակության նկատմամբ: Գոյություն ունեցող առանձին հայեցակարգերն ու ծրագրերը լուծում են այդ բնագավառի թեկուզ և կարևոր, բայց մասնավոր խնդիրներ: Հայաստանի միասնական տեղեկատվական տարածության ձևավորման և զարգացման հայեցակարգը կոչված է ստեղծելու տեղեկատվական համակարգերի փոխգործողությունն ապահովող բազիս այնպիսի պայմաններում, երբ տեղեկատվական - հեռահաղորդակցության ողջ ենթակառուցվածքի միասնական կենտրոնացված կառավարումը և նույնականացումը ապահովող կոշտ մեխանիզմները քայքայված են, իսկ նոր տնտեսական ու հասարակական անհրաժեշտության վրա հիմնված և շուկայական խթանիչներով կարգա-

վորվող մեխանիզմները դեռևս լիարժեքորեն չեն գործում:

Տեղեկատվական հասարակության ձևավորման հետ առնչվող բոլոր կողմերի (պետական կառավարման մարմիններ, գործարար կառույցներ, հասարակություն) արդյունավետ համագործակցությունն ապահովելու համար նպատակահարմար է մշակել տեղեկատվական հասարակության ձևավորման ՀՀ ռազմավարությունը:

4. Տեղեկատվական արտադրանքի և ծառայությունների հայաստանյան շուկան անհամեմատելի է արևմտյան երկրների շուկաների հետ: Այն անհրաժեշտ է ենթարկել կառուցվածքային վերակազմավորման և մոդեռնացման, ինչի համար զգալի ֆինանսական ներդրումներ կպահանջվեն: Ներկայումս շուկայական հիմնախնդիրների զգալի մասի լուծման բեռը դեռևս ընկած է տարբեր մակարդակների բյուջեների վրա: Արդյունքում բյուջեները գերժանրաբեռնված են, իսկ իրական ֆինանսավորում չկա:

Անհրաժեշտ է առավել հստակեցնել, թե այդ բնագավառում ինչ պետք է անի պետությունը և ինչ՝ շուկայական կառույցները: Տեղեկատվայնացման ոլորտում պետության ու շուկայի միջև պատասխանատվության և սեփականության վերաբաշխման գործընթացները դեռևս չեն ստացել իրենց կայուն ուրվագծերը: Այդ հարաբերակցությունը Հայաստանի համար այլ է, քան բաց շուկայական տնտեսության ավանդույթներ ունեցող երկրներում:

Չնայած ՀՀ-ում ՏՀՏ-երի շուկայի զարգացման որոշակի հաջողություններին, շուկայական խթանիչներն այսօր ոչ ամբողջապես են ապահովում տեղեկատվական տեխնոլոգիաների և ռեսուրսների վերարտադրությունը: Հայաստանում տեղեկատվական հասարակության ձևավորման ռազմավարությունը պետք է էլակետ ընդունի հենց այս գործոնը, և ոչ թե կրկնօրինակի արտասահմանյան երկրների այն մոտեցումները, որոնք ուղղված են ՏՀՏ-երի ստեղծման և օգտագործման ոլորտում հաստատված շուկայական հարաբերությունների և մեխանիզմների կատարելագործմանը:

Դեպի տեղեկատվական հասարակություն Հայաստանի ուղին պետք է ամրագրվի տեղեկատվական ոլորտում սեփականատիրական հարաբերությունների կայունացմամբ, տեղեկատվական արտադրանք և ծառայություններ արտադրողների ու սպառողների շահերն ապահովող կարգավորիչ մեխանիզմների ձևավորմամբ: Այս գործընթացներում պետության դե-



րը առանցքային է: Տեղեկատվական հասարակության ձևավորման ռազմավարությունը սեփականատիրական հարաբերությունների նոր համակարգին անցման պայմաններում պետք է հաշվի առնի պետության առանձնահատուկ դերն ու պատասխանատվությունը:

5. Տեղեկատվական հասարակության ձևավորման ռազմավարությունը պետք է հաշվի առնի նաև Հայաստանի Հանրապետության առավելությունները. Արևմուտքի և Արևելքի առևտրային և տեղեկատվական-հեռահաղորդակցության հոսքերի միջև ունեցած բարենպաստ աշխարհագրական դիրքը, տեղեկատվայնացման ոլորտում զբաղված անձնակազմի կրթական բարձր մակարդակը: Համապատասխանաբար, ռազմավարության վրա ազդող որպես բացասական գործոններ նշենք.

- տեղեկատվական սպասարկման ոլորտում գործող ձեռնարկությունների ու կազմակերպությունների հիմնական ֆոնդերում ֆիզիկապես և բարոյապես մաշված սարքավորումների մեծ տեսակարար կշիռը,

- երկրի տարածքում տեղեկատվական ներուժի ու գիտական կենտրոնների անհավասարաչափ բաշխվածությունը,

- գիտական դպրոցների անմխիթար վիճակը և գիտության ֆինանսավորման բարդությունները,

- տեղեկատվայնացման բազային միջոցների (համակարգիչների և հեռահաղորդակցության սարքավորումների) արտադրության ամբողջական ցիկլի բացակայությունը:

6. Ռազմավարության մշակման ժամանակ անհրաժեշտ է տեսադաշտում պահել նպատակների երկու տարատեսակներ՝ հեռահար և մոտակա: Հեռահար նպատակների ձևավորման գործում կարելի է համաձայնվել տեղեկատվական հասարակության ձևավորման արևմտյան ռազմավարություններում արդեն ձևակերպված տեսակետների հետ. մասնավոր սեկտորի դերի բարձրացում, շուկայի ազատականացում և այլն: Մոտակա նպատակների նախանշման ժամանակ անհրաժեշտ է առաջնորդվել սեփական գերակայություններով:

Առաջին փուլում գլխավոր խնդիրը հանդիսանում է Հայաստանի հասարակության, քաղաքացիների, տնտեսության ու մշակույթի նախապատրաստումը տեղեկատվական հասարակության մարտահրավերներին, մոդեռնացման հիման վրա ՏՀՏ-երի շուկայի աճի ապահովումը: Որպես այս փուլի հիմնական խնդիրներ անհրաժեշտ է դիտարկել.

- ձեռնարկությունների և կազմակերպությունների արտադրական բազայի մոդեռնացման, բազային հեռահաղորդակցության և գլոբալ տեղեկատվական ցանցերի հայաստանյան հատվածի զարգացման, տեղեկատվայնացման նկատմամբ զանգվածային պահանջարկի ավելացման նպատակով իրականացվող ներդրումների միջոցով ՏՀՏ-երի հայաստանյան շուկայի ընդլայնումը,

- ՏՀՏ-երի ստեղծման և օգտագործման բնագավառում (էլեկտրոնիկա, համակարգչային և հեռահաղորդակցության տեխնիկա, ծրագրային և տեղեկատվական համակարգեր ու ցանցեր) տեխնոպարկերի և ազատ առևտրի գոտիների կազմակերպումը,

- պետական աջակցությունը ՏՀՏ-երի ոլորտի այն ծրագրերի ու նախագծերի նկատմամբ, որոնք կողմնորոշված են հայրենական տեղեկատվական արտադրանքի, ծառայությունների ու տեղեկատվայնացման միջոցների արտադրության բարձրորակ տեխնոլոգիական օղակների ստեղծմանը,

- տեղեկատվական և ցանցային ռեսուրսների արդար բաշխման համար պայմանների ապահովումը,

- կրթության բոլոր մակարդակներում ՏՀՏ-երի օգտագործմամբ շարունակական ուսուցման համակարգի ձևավորումը:

Վերոշարադրյալ խնդիրների լուծումը պետք է իրականացվի տեղեկատվական ոլորտում սեփականության վերաբաշխման ավարտման ու պետության և կոմերցիոն սեկտորի միջև պատասխանատվության շրջանակների ամրագրման, տեղեկատվական արտադրանքի ու ծառայությունների շուկայի աճի և ինքնազարգացման շուկայական խթանիչների կատարելագործման, տեղեկատվական-հեռահաղորդակցության ենթակառուցվածքների աջակցության պետական ինստիտուտների ու մեխանիզմների վերակազմավորման, բարձր տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում առկա գիտատեխնիկական ներուժի օգտագործման պայմաններում:

Հաջորդ փուլում գլխավոր խնդիրը պետք է հանդիսանա երկրի տեղեկատվական ներուժի ամրապնդումը և ՏՀՏ-երի շուկայի առանձին սեկտորներում հայրենական արտադրողների լիդերության ապահովումը: Այդ ժամանակաշրջանի հիմնական խնդիրներն են.

- ՏՀՏ-երի ոլորտի գիտատեխնիկական առաջընթացն ապահովող ճյու-

ղերում հայրենական արտադրողների մրցունակության բարձր մակարդակի ապահովումը,

- տարածաշրջանի ՏՀՏ-երի շուկայի առանձին սեկտորներում հայրենական արտադրողների առաջանցիկ դիրքերի ապահովումը (կիրառական ծրագրային միջոցներ, տեղեկատվական ծառայություններ, ցանցային լուծումներ, տեղեկատվական համակարգերի ինտեգրում և այլն),

- ցանցային տեխնոլոգիաների օգտագործման հիման վրա գործունեության բոլոր հիմնական տեսակների վերանախագծում:

## *2.9 Տեղեկատվական հասարակության ձևավորման գերակա ուղղությունները*

Տեղեկատվական հասարակության ձևավորման վերոնշյալ ռազմավարական նպատակների իրականացման համար անհրաժեշտ է մշակել նոր հայեցակարգային մոտեցումներ ՏՀՏ-երի և ՁԼՄ-երի շուկայի կարգավորման, տեղեկատվական ու ներդրումային քաղաքականության, տեղեկատվական ոլորտը կարգավորող օրենսդրության ու տեղեկատվական անվտանգության վերաբերյալ: Տեղեկատվական հասարակության ձևավորման պետական ռազմավարությունը առաջիկա 4-5 տարիների ընթացքում պետք է ապահովի տեղեկատվայնացման ոլորտի առանցքային գործընթացների իրականացումը: Այդ գործընթացներն են.

1. Տեղեկատվական ինդուստրիայի աճի համար անհրաժեշտ պայմանների ստեղծում, ներառյալ տեղեկատվական տեխնոլոգիաները, հեռահաղորդակցությունը և զանգվածային լրատվության միջոցները: Տեղեկատվական տնտեսությունը պետք է դիտարկվի որպես տնտեսական ակտիվության կարևորագույն սեկտոր: Անհրաժեշտ է տեղեկատվական ծառայություններից օգտվողների համար ստեղծել ընդունելի պայմաններ գնային քաղաքականության բնագավառում, նոր ՏՀՏ-երի օգտագործման հնարավորությունները մեծացնելու նպատակով բարձրացնել քաղաքացիների կողմից դրանց ընկալելիության աստիճանը, կատարելագործել կառավարման արդյունավետության բարձրացման, մարդկանց կենսակերպի ու գործունեության բարելավման ուղղությամբ ՏՀՏ-երի ունեցած ազդեցության, ինչպես նաև տեղեկատվական հասարակության ձևավոր-

ման ընթացքում ի հայտ եկող հիմնախնդիրների վերաբերյալ ազգաբնակչությանը տեղեկատվություն հաղորդող համակարգը, առավել մեծ ուշադրություն դարձնել տեղեկատվական հասարակության ձևավորման հունանիտար և էթիկական ասպեկտներին:

2. Տեղեկատվական ենթակառուցվածքների բոլոր սեկտորներում բարձր մրցունակ միջավայրի ստեղծման և ՏՀՏ-երի շուկա մուտքի ազատականացման ճանապարհով մասնավոր հատվածի կողմից ներդրումային ակտիվության խթանում: Հաշվի առնելով տեղեկատվական հասարակության զարգացման հնարավորությունները, անհրաժեշտ է վերանայել մրցակցության կանոնները: Պահանջվում է կատարելագործել տեղեկատվայնացման նախագծերի ներդրումային քաղաքականության մեխանիզմները:

ՏՀՏ-երի շուկայում մրցակցային միջավայրի պաշտպանության առավել արդյունավետ միջոց է փոքր ու միջին ձեռնարկությունների համար հարկային բարենպաստ դաշտի պայմանների ստեղծումը, ցանցային ռեսուրսներից և գիտատեխնիկական ու տնտեսական տեղեկատվությունից դրանց օգտվելու պայմանների դյուրինացումը:

Անհրաժեշտ է միջազգային և ազգային մակարդակներում աջակցել մասնավոր հատվածի կողմից իրականացվող ՏՀՏ-երի ստանդարտացման գործընթացներին: Ընդ որում, այդ դեպքում պետությունը ինքը պետք է ստանձնի ստանդարտների մշակման և դրանց առաջնահերթության որոշման աշխատանքների ֆինանսավորումը այն ոլորտներում, որոնք անմիջականորեն առնչվում են պետական գործառույթների իրականացմանը:

3. Տեղեկատվական-հեռահաղորդակցության համակարգերի շուկայի ու էլեկտրոնային առևտրի ենթակառուցվածքի ծառայությունների զարգացում: Այդ ուղղության կարևորագույն խնդիրը շուկայի տեղեկատվական թափանցիկության ապահովումն է և արժեթղթերի շուկայի տեղեկատվական ենթակառուցվածքի զարգացումը: Անհրաժեշտ է խթանել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ներդրումը արժեթղթերով իրականացվող գործարքներում, ընդունել միասնական ստանդարտներ էլեկտրոնային թվային ստորագրության և տվյալների վերծանման բնագավառում:

4. Ստեղծել պայմաններ, որոնց առկայության դեպքում յուրաքանչյուրը

հնարավորություն ու բազային հմտություններ կունենա օգտվելու տեղեկատվական հասարակության կողմից տրամադրվող ծառայություններից: Անհրաժեշտ է խթանել ՏՀՏ-երի օգտագործումը կրթության ու հեռահար ուսուցման ոլորտում, կրթական բոլոր մակարդակների ուսումնական ծրագրերում ընդգրկել ՏՀՏ-երի օգտագործման ու տեղեկատվության կառավարման հարցեր, մեծացնել ՏՀՏ-երի ոլորտի պրոֆեսիոնալ բազային կրթության ծավալները:

**5.** Աջակցություն գիտական հետազոտություններին, հատկապես հիմնարար ուղղություններին:

Նշյալ ուղղության շրջանակներում առաջին հերթին անհրաժեշտ է պայմաններ ստեղծել տեղեկատվական համակարգերի ու ցանցերի մշակման և ինտեգրման ոլորտի աշխատանքների իրականացման համար:

**6.** Պետական կառավարման տեղեկատվական ռեսուրսների ձևավորում և տեղեկատվական - հեռահաղորդակցության համակարգերի զարգացում: Անհրաժեշտ է պետական տեղեկատվական կենտրոնների կողմից տեղեկատվական ծառայությունների որակի բարելավման ճանապարհով բարձրացնել պետական տեղեկատվական ռեսուրսների ու համակարգերի օգտագործման արդյունավետությունը: Այդ բնագավառում իրավիճակի կարգավորման կարևորագույն ռեզերվ է տարբեր մակարդակների իշխանության մարմինների միջև էլեկտրոնային տեղեկատվական փոխներգործության զարգացումը:

**7.** Տեղեկատվության ու տեղեկատվայնացման ոլորտի կարգավորման և օրենսդրության կատարելագործում: Տեղեկատվական հասարակության ձևավորման պայմաններում պահանջվում է տեղեկատվական ռեսուրսների ու տեխնոլոգիաների ստեղծման և օգտագործման բնագավառի իրավական կարգավորման մեխանիզմների կատարելագործում, քաղաքացիների տեղեկատվական իրավունքի և մտավոր սեփականության պաշտպանության ամրապնդում: Հարկավոր է ընդգծել տեղեկատվական արտադրանքն ու ծառայությունները սպառողների իրավունքների և տեղեկատվության ու ծառայությունների որոշակի տարատեսակների վնասակար ազդեցությունից աճող սերնդի պաշտպանության կարևորությունը: Օրենսդրական կարգավորում պահանջող խնդիրների շարքում կարելի է նշել նաև գործունեության տարբեր ոլորտներում (հեռաուսուցում, զբաղվածություն, բժշկություն և այլն) նոր ՏՀՏ-երի կիրառման հարցերը:

**8.** Տեղեկատվական անվտանգության ապահովում և տեղեկատվության պաշտպանություն: Այս ուղղության առաջնահերթ խնդիրներն են. հեռահաղորդակցության ցանցերում տվյալների պաշտպանության ոլորտի նորմատիվային կարգավորում, պետական կամ հասարակական առանցքային գործառույթներ իրականացնելիս անվտանգության ստանդարտների կիրառում, հուսալի հեռահաղորդակցություն ապահովելու համար տեխնիկական միջոցառումների մշակում: Բացի դրանից անհրաժեշտ է խթանել տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրների վերաբերյալ ազգաբնակչության տեղեկատվայնացումը, այդ ոլորտում աջակցել միջազգային կազմակերպություններին:

**9.** ՏՀՏ-երի բնագավառում միջազգային համագործակցության և առևտրի ընդլայնում: Հայաստանում տեղեկատվական հասարակության ձևավորումը պետք է ուղեկցվի միջազգային տեղեկատվական հասարակության հետ երկրի ինտեգրմանը նպաստող քայլերի իրագործմամբ: Անհրաժեշտ է տեղեկատվության, ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ընդհանուր շուկայի հիման վրա ԱՊՀ անդամ-երկրների հետ ստեղծել ընդհանուր տեղեկատվական տարածություն:

Ռազմավարության մշակումը և իրագործումը կապահանջի պետության, կոմերցիոն կառույցների, կիրառական և հիմնարար գիտության, տարաբնույթ սոցիալական խմբերի շահերի հաշվառում ու համաձայնեցված լուծումների ընդունում:

### 3. Տեղեկատվական համակարգում ու պետական կառավարումը

#### 3.1 Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման արդյունավետությունը պետական կառավարման համակարգում

Ձարգացած երկրներում պետական կառավարման մարմինների կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը դիտվում է որպես պետական իշխանության արդյունավետության բարձրացման ռազմավարական ուղղություն: Ինտերնետ-համագործակցությունում հանրահայտ “B” և “C” նշանակումներին (“B”-նշանակում է բիզնես, “C”-սպառող) վերջին ժամանակներս ավելացել է նոր ինդեքս՝ “G” (Government-պետություն, կառավարում):

E- Government-ի առաջացման նախադրյալներն են.

- պետության կառավարման համար պահանջվող ծախսերի կրճատման անհրաժեշտությունը (տնտեսական նախադրյալ),
- տեղեկատվական – հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ի հայտ գալը (տեխնոլոգիական նախադրյալ),
- զարգացած երկրների ազգաբնակչության հիմնական զանգվածի սոցիալական ու տեխնոլոգիական զրագիտության և պատասխանատվության մակարդակի բարձրացումը (սոցիալական նախադրյալ):

Ժամանակակից քաղաքագետների ու ՏՏ-երի մասնագետների պլաններում «էլեկտրոնային կառավարություն» (e- Government) ստեղծելու գաղափարն ավելի ու ավելի հաստատուն տեղ է զբաղեցնում: «էլեկտրոնային կառավարության» թեմայի նկատմամբ աճող հետաքրքրությունը հասարակության զլոբալ տեղեկատվայնացման պայմաններում ստիպում է ավելի ուշադրությամբ և նոր լույսի ներքո դիտարկել պետության դերն ու նշանակությունը: Ընդհանրապես, ի՞նչ է իրենից ներկայացնում «էլեկտրոնային կառավարությունը»: Առաջին հայացքից դա կնշանակի կառավարչական խնդիրներ լուծելու նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործում պետական կառավարման մարմիններում: Իրականում դա խորքային այնպիսի գործընթացների նկարագիր է, որոնք հանդիսանում են նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվ կիրառմամբ պետության ու հասարակության փոխհարաբերությունների փոփոխության բովանդակությունը:

րառմամբ պետության ու հասարակության փոխհարաբերությունների փոփոխության բովանդակությունը:

Պետական իշխանության մարմիններում նոր տեխնոլոգիաների ներդրումը պետք է ուղղված լինի.

1. քաղաքացիների կողմից տեղեկատվություն ստանալու գործընթացի պարզեցմանը,
2. հասարակության կողմից իշխանության վերահսկելիության ու նրա գործունեության թափանցիկության աստիճանի բարձրացմանը,
3. պետական ապարատի գործառնություններում մարդկային գործունի ազդեցության կրճատմանը,
4. պետական կառավարման ոլորտ քաղաքացիների լայն շերտերի ընդգրկմանը:

Տեխնոլոգիական ենթատեքստում «էլեկտրոնային կառավարություն» իրենից ներկայացնում է հասարակության մեջ պետական իշխանության մարմինների կողմից իրենց գործառնությունների իրականացմանը նպաստող ցանցային տեղեկատվական-հեռահաղորդակցության ենթակառուցվածք: Կառուցվածքային առումով «էլեկտրոնային կառավարությունը» բաղկացած է երկու փոխկապակցված ենթահամակարգերից.

- ներքին կառավարական տեղեկատվական ենթակառուցվածք, որի միջոցով արդյունավետ կապ է ապահովվում տարբեր մակարդակների իշխանության մարմինների միջև,
- արտաքին տեղեկատվական ենթակառուցվածք, որի օգնությամբ կառավարման մարմինները հարաբերակցվում են հասարակության ու քաղաքացիների հետ:

Լուրջ ուշադրության է արժանի ևս մեկ կարևոր հանգամանք: Վիճակագրական տվյալներից և գործարար տեղեկատվությունից օգտվելու միջև վերջերս եղած սահմանափակումները ոչ միայն վնաս էին հասցնում բիզնեսին, այլ նաև խանգարում էին հասարակայնության տեղեկատվայնացմանն ուղղված երկրորդական ծառայությունների մասնավոր հատվածի զարգացմանը: Այդ կապակցությամբ առաջնահերթ է դառնում «էլեկտրոնային կառավարության» ստեղծման միջոցով պետական տեղեկատվության ողջ ծավալի նկատմամբ հասանելիության ապահովումը, որն էլ իր հերթին կնպաստի ծառայությունների մասնավոր հատվածի զարգացմանը: Տվյալ խնդրի լուծման արդյունքում

- կառավարությունն ավելի «կմոտենա» շարքային քաղաքացիներին,
- պետական պաշտոնյաների վրա կատարվող ծախսերի կրճատման հնարավորություններ կստեղծվեն,
- երկրորդական ծառայությունների մատուցման հատվածում կստեղծվեն լրացուցիչ աշխատատեղեր,
- կստեղծվի պետական տեղեկատվական ռեսուրսների համապետական շուկա:

Տեղեկատվական նոր տեխնոլոգիաների և ավանդական ՁԼՄ -երի փոխհարաբերությունները լուրջ վերլուծություն են պահանջում: Թվում է, թե նոր տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն զարգացումը հարցականի տակ է դնում ավանդական ՁԼՄ-երի գոյությունն ընդհանրապես: Այստեղ հարկ է նշել, որ ռադիոյի ու հեռուստատեսության առաջացման ժամանակ նման ենթադրությունը դարձյալ տիրապետող էր: Բայց այդ կանխատեսումները չիրականացան. ավանդական ՁԼՄ-երը պահպանվեցին ու ներկայումս զարգանում են տեղեկատվական բազմակարծության պայմաններում: Խիստ հավանական է, որ Ինտերնետը ոչ թե կկործանի ավանդական ՁԼՄ-երը, այլ կնպաստի դրանց վերափոխմանն ու էվոլյուցիային:

Պետական կառավարման մարմիններում ՏՂՏ-երի օգտագործումը հետապնդում է երկու հիմնական նպատակներ: Առաջինը, պետությունը դարձնել առավել ժողովրդավարական, բաց, հասարակության համար «թափանցիկ»: Նշված նպատակի իրագործումը կնպաստի բնակչությանը և գործարար շրջանակներին ՏՂՏ-երի օգնությամբ պետական որոշակի ծառայությունների մատուցմանը ու հասարակայնության հետ երկխոսության ծավալմանը: Նման բացության և թափանցիկության օրինակ հարող է հանդիսանալ ամերիկյան կառավարությունը, որի գրեթե բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները ներկայացված են Ինտերնետում: Կոնգրեսի բոլոր օրենսդրական ակտերն Ինտերնետի միջոցով անվճար հասանելի են ազգաբնակչությանը: Այդպիսի քաղաքականության իրագործումը կարևորվել է 1997թ. Բոննում կայացած եվրոպական երկրների նախարարների հանդիպմանը:

Երկրորդ նպատակը պետական ապարատի գործունեության արդյունավետության բարձրացումն է: ՏՂՏ-երի օգտագործումը պետական կառավարման մարմինների գործունեության բարելավման կարևորագույն

գործոններից է: Նշված նպատակի իրագործման համար անհրաժեշտ է կարգավորել արդեն իսկ գործող պետական տեղեկատվական համակարգերի շահագործման գործընթացը և նախաձեռնել նոր համակարգերի նախագծման աշխատանքներ: Վերոնշյալի անհրաժեշտությունը պայմանավորված է գոյություն ունեցող տեղեկատվական համակարգերի բարձր ինքնարժեքով և դրանց գործունեության արդյունավետությունը գնահատող հստակ չափորոշիչների բացակայությամբ:

Այդ գործում մեծ հաջողությունների է հասել Մեծ Բրիտանիան, որը հետևողական քաղաքականություն է տանում Ինտերնետի միջոցով պետության կողմից քաղաքացիներին մատակարարվող տեղեկատվության ու ծառայությունների ներկայացման ուղղությամբ: Պետական տեղեկատվական ծառայության միջոցով ավելի քան 300 պետական կազմակերպություններ հասանելի են դառնում բնակչությանը: Որպեսզի հեշտացվի մուտքը տեղեկատվական հասարակություն, Մեծ Բրիտանիայի կառավարությունը գլխավորապես միջին և փոքր գործարարությանը և կրթության ու վերապատրաստման համակարգերին հասցեագրված հատուկ ծրագրեր է իրականացնում: Դրանք կոչված են ապահովելու գործարար աշխարհին և քաղաքացիներին մատուցվող տեղեկատվական ծառայությունների հուսալիությունը, բարձրացնելու պետական ապարատի արդյունավետության և թափանցիկության մակարդակը, նվազեցնելու հարկատուների ծախսերը:

Մեծ Բրիտանիայի կառավարության հիմնական նպատակը այդ ոլորտում էլեկտրոնային տեսքով առավել մեծաքանակ տեղեկատվության թողարկումն է:

Կանադայում պետության կողմից մատուցվող ծառայությունների մակարդակի բարձրացման նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը սկսվել է 1994թ.-ից: Նմանատիպ աշխատանքների իրականացման ընթացքում խիստ կարևորվում է պետական տեղեկատվության զնի որոշումը: Այդ տեղեկատվությունը կարելի է բաժանել երկու խմբի.

- տեղեկատվություն, որն օգտագործվում է լայն հասարակության կողմից: Օրինակ, օրենքներ, տեղեկատուներ, կառավարական որոշումներ և այլն,
- տեղեկատվություն, որն ունի սահմանափակ պահանջարկ: Օրինակ,

գիտահետազոտական, տեխնիկական տեղեկատվությունը:

Առաջին խմբի տեղեկատվությունը կարող է հասանելի լինել անվճար կամ ոչ մեծ գնով, իսկ երկրորդ խմբի տեղեկատվությունը կարժեճա ավելի թանկ, քանի որ դրա հավաքման և ձևավորման համար մեծ ծախսեր են անհրաժեշտ:

Իսպանիայում իրականացվում է Vereda ծրագիրը, որով պետությունը քաղաքացիներին տեղեկատվություն է տրամադրում հասարակական վայրերում տեղակայված ինտերակտիվ տերմինալների միջոցով: Հեշտորեն հասանելի է ապահովագրության, ֆինանսական ծառայությունների և պետական կառավարման ոլորտի տեղեկատվությունը:

Սինգապուրում հարկատուները հարկերը կարող են վճարել էլեկտրոնային տեխնոլոգիաների միջոցով:

Յոթնյակի երկրների կողմից իրականացվում է «ՕՆ-լայն պետություն» նախագիծը, որը հետապնդում է հետևյալ նպատակները.

- ավանդական պետական ծառայությունները էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու համար պայմանների ստեղծում,
- քաղաքացիներին ամբողջապես ինտերակտիվ տեղեկատվության լայնածավալ տրամադրում,
- պետական ապարատի ներսում և պետության ու քաղաքացիների միջև փաստաթղթաշրջանառության փոխարեն էլեկտրոնային փոստի օգտագործում:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում ԱՄՆ փորձը, որտեղ ոչ վաղ անցյալում ընդունվել են պետական հաստատություններում ՏՀՏ-երի օգտագործումը կանոնակարգող երկու օրենքներ: Դրանք տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարման բարեփոխումների և փաստաթղթաշրջանառության կրճատման մասին օրենքներն են: Տվյալ նորմատիվային ակտերն ընդունվել են ողջ պետական մեխանիզմի արդյունավետության բարձրացմանն ուղղված առավել լայն ծրագրի շրջանակներում:

Համապետական տեղեկատվական համակարգերը ունեն կարևորագույն նշանակություն յուրաքանչյուր քաղաքացու համար, իսկ երկրի կառավարության արտադրողականությունը կախված է հենց տեղեկատվության արդյունավետ օգտագործումից: Դրա հետ մեկտեղ պետությունը տարեկան հսկայական միջոցներ է ծախսում հնացած տեղեկատվական համակարգերի կառավարման համար, որոնց շահագործումը զգալիորեն

նվազեցնում է քաղաքացիներին տրամադրվող ծառայությունների որակը:

Նշված օրենքների նպատակներն են.

• ՏՀՏ-երի արդյունավետ աշխատանքը և կառավարության կողմից բնակչությանը տրամադրվող ծառայությունների ինքնարժեքի և արդյունավետության օպտիմալ հարաբերակցությունն ապահովելու նպատակով կառավարությանը դրդել տեղեկատվական տեխնոլոգիաների ռազմավարական օգտագործման,

• խթանել տեղեկատվական տեխնոլոգիաների ժամանակին ձեռք բերումը, ապահովել արդյունավետ որոշումների օգտագործումն ու կառավարումը,

• պետության և մասնավոր հատվածի կողմից բնակչությանը մատակարարվող տեղեկատվական ծառայությունների որակների համարժեքության ապահովում:

Օրենքներում առանձնահատուկ դերակատարում է վերապահված ԱՄՆ բյուջեի և կառավարման գրասենյակի տնօրենին, որը ապահովում և պատասխանատվություն է կրում տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռք բերման և օգտագործման աշխատանքների բարելավման համար:

Համաձայն օրենքի, ԱՄՆ Կոնգրեսի խնդիրն է լինելու վերահսկել, որ առաջիկա 5 տարիների ընթացքում գրանցվի տեղեկատվական տեխնոլոգիաների գործունեության ինքնարժեքի 5%-անոց իջեցում, միաժամանակ հասնելով դրանց արտադրողականության 5%-անոց աճի:

Ուշագրավ է նաև Ֆրանսիայի փորձը, որտեղ տեղեկատվության ոլորտում պետական կառավարման մարմինների գործունեության կոորդինացման գործառնությունները վերապահված են պետական վարչակազմում օրգտեխնիկայի ու տեղեկատվության գծով միջգերատեսչական կոմիտեին: Կոմիտեն պատասխանատվություն է կրում պետական ապարատի համակարգչայնացման ոլորտի գործերի վիճակի համար և լիազորված է.

• հսկողություն իրականացնել կառավարման մարմինների ու պետական կազմակերպությունների կողմից օգտագործվող տեղեկատվական համակարգերի գործունեության նկատմամբ,

• իրականացնել հաշվառում և քննարկել այն հիմնախնդիրները, որոնք կծագեն տեղական ինքնակառավարման համակարգի համակարգչայնացման ոլորտում,

• նպաստել պետական կառավարման ոլորտում համակարգչայնացման միջգերատեսչական նախագծերի ներդրմանը:

Կանադայում կառավարության տեղեկատվայնացմանն ուղղված ռազմավարության իրագործման պատասխանատուն ֆինանսների նախարարությունն է: Այդ գերատեսչության զեկույցներից մեկում նշված է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը թույլ կտա զգալիորեն բարձրացնել կառավարության գործունեության արդյունավետությունը և քաղաքացիներին տրամադրվող ծառայությունների որակը:

Պետական իշխանության մարմինների տեղեկատվայնացումը բազմասպեկտ խնդիր է, որը պետական ապարատի արդյունավետության բարձրացմանը զուգահեռ պետք է հետապնդի նաև ավելի բարձր նպատակներ. բարեփոխել բնակչության լայն խավերի հետ կառավարման մարմինների փոխհարաբերությունների բնույթը, հաշվի առնել հասարակայնության կարծիքը:

Այսպիսով, կարելի է փաստել, որ հասարակության ու պետության տեղեկատվական փոխներգործությունը այդ գործընթացներում ՏՀՏ-երի ներդրմանը համընթաց սկզբունքային նոր որակ է ստանում, ստեղծվում են պայմաններ ժողովրդավարության հետագա զարգացման, անհատի տեղեկատվական անկախության և հասարակության կողմից պետական կառավարման մարմինների նկատմամբ արդյունավետ վերահսկողության համար:

### *3.2 Պետական ծառայությունը և զանգվածային լրատվության միջոցները*

Պետական ծառայությունը, որպես սոցիալական ինստիտուտ, սերտորեն կապված է հասարակության ինստիտուտների համակարգի հետ: Պետական ծառայության փոխազդեցությունը սոցիալական մյուս ինստիտուտների հետ զգալի չափով բնորոշվում է դրանց բնույթով, հասարակական հարաբերություններում դրանց ունեցած տեղով ու դերով:

Հասարակության կենսագործունեության վրա ակտիվ ներազդող սոցիալական ինստիտուտների շարքում կարևոր դեր է հատկացվում զանգվածային լրատվության միջոցներին (ՁԼՄ): Պետական ծառայության փոխ-

ներգործումը ՁԼՄ-երի հետ ունի բազմագործառնությամբ բնույթ: Այն կարելի է դիտարկել նաև որպես երկու տեղեկատվական համակարգերի փոխգործողություն, որոնք հասարակության մեջ ապահովում են տեղեկատվության ազատ շրջանառություն:

Իշխանության, պետական ծառայության և ՁԼՄ-երի փոխհամագործակցության մակարդակից նշանակալի չափով կախված է հասարակության առաջընթացը, ժողովրդավարական վերափոխումների ճանապարհով դրա հետագա զարգացումը:

Պետական ծառայությունն իրենից ներկայացնում է սոցիալական համակարգի տեսակ, որի արդյունավետությունը ուղղակի կախման մեջ է գտնվում տեղեկատվության կուտակումից, մշակումից և օգտագործումից:

Պետական ծառայության մարմինների գործունեության մեջ տեղեկատվության նշանակությունը բնորոշվում է ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործունեությամբ:

Արտաքին գործունեությունը պայմանավորված են հասարակության կենսագործունեության ապահովման անհրաժեշտությամբ, դրա կայունության բարձրացմամբ, զարգացման պոստինդուստրիալ, տեղեկատվական փուլ աստիճանական անցմամբ: Դրա համար անհրաժեշտ է բազմակողմանիորեն հաշվի առնել մարդկային քաղաքակրթության տեղեկատվական օրենքները, տեղեկատվության տարերային հոսքերն ուղղել կազմակերպման և արարման նպատակներով, այլ ոչ ապակազմակերպման և ավերվածության: Ստեղծարար խնդիրների լուծումն անհմաստ է առանց հասարակական օրգանիզմում ընթացող բոլոր գործընթացների վերաբերյալ հավաստի տեղեկատվության առկայության և շահագրգիռ հասարակական-քաղաքական ուժերի ու քաղաքացիների կողմից դրա օգտագործման ազատության: Ինչպես նշում է կիբեռնետիկայի հիմնադիր Ն. Վիները, «իրականում ապրել դա նշանակում է ապրել՝ տիրապետելով ճիշտ տեղեկատվության»:

Արտաքին գործունեությունը արտացոլում են նաև պետության անվտանգության ապահովման պահանջարկը:

Ներքին գործունեությունը կապված են պետական իշխանության մարմինների աստիճանակարգային կառուցվածքի, դրանց գործունեության բնույթի, կառավարման սուբյեկտների և օբյեկտների միջև կապի մշտականու-

թյան պահանջարկի հետ: Հավաստի տեղեկատվության բացակայությունը պարալիզացնում է ողջ պետական ապարատը:

Իսկ ի՞նչ է իրենից ներկայացնում պետական ծառայությունը որպես տեղեկատվական-հաղորդակցական համակարգ: Այդ որակում այն հանդես է գալիս որպես տվյալների բազաների ու հաղորդակցության գծերի բազմաճյուղ ցանց, որն ապահովում է տեղեկատվության շրջանառությունը:

Նախկինում ստեղծված տեղեկատվական-հաղորդակցական կապերի համակարգը դադարել է ամբողջությամբ համապատասխանել ժամանակակից պահանջներին: Դա առաջին հերթին բացատրվում է նրանով, որ երկրի անցումը շուկայական տնտեսության անհրաժեշտ դարձրեց փոխել մոտեցումը պետական-վարչական կառավարման ոլորտի տեղեկատվական ու տեղեկատվական-վերլուծական աջակցության նկատմամբ: Տեղեկատվությունը ներկայումս դիտարկվում է որպես ռեսուրս, առանց որի հնարավոր չէ օգտագործել ժամանակակից տեխնոլոգիաներն ու կառավարման մեթոդները: Դրա հետ կապված պետական ծառայությունը, որպես տեղեկատվական-հաղորդակցական համակարգ, անընդհատ կերպարանափոխվում է և կատարելագործվում՝ ձեռք բերելով նոր որակներ:

Հասարակության կյանքի տարբեր ոլորտների կառավարման ընթացքում պետական մարմինները հենվում են ՁԼՄ-երի լայն ցանցի վրա, որն իր մեջ միավորում է տպագիր, էլեկտրոնային և այլ տիպի տեղեկատվական միջոցներ:

Ինչպես հայտնի է, ՁԼՄ-երի դերը հասարակության կյանքում շատ մեծ է: Պատահական չէ, որ ՁԼՄ-երը կոչվում են նաև չորրորդ իշխանություն, նկատի ունենալով մարդկանց վարքագծի վրա մաս-մեդիայի ունեցած հսկայական ազդեցությունը: Ժամանակակից զարգացած երկրներում ՁԼՄ-երը գոյատևում են ինչպես պետությունից անկախ, այնպես էլ ամբողջապես կամ մասնակիորեն աջակցություն են ստանում նրա կողմից:

Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, հասարակության զարգացման օբյեկտիվ պահանջները առաջացնում են իշխանության մարմինների և ՁԼՄ-երի գործունեության բացահայտ կամ լատենտ կոորդինացման անհրաժեշտություն: Այդպիսի անհրաժեշտությունը հետևում է այդ երկու ինստիտուտների միմյանց նկատմամբ ունեցած շահագրգռվածությունից: Պետական մարմինները հետաքրքրվում են ՁԼՄ-երով՝ որպես հասարա-

կությունում իրերի դրվածքի վերաբերյալ բազմակողմանի տեղեկատվության սկզբնաղբյուր և իշխանությունների քաղաքականության նկատմամբ բնակչության վերաբերմունքի ձևավորման կարևոր գործոն: Ընկալվում է նաև այն հանգամանքը, որը ՁԼՄ-երը հասարակական կարսծիքի կազմավորման, բնակչության աչքերում իշխանության իմիջի ձևավորման կարևորագույն գործիք են: ՁԼՄ-երը իրենց հերթին, շահագրգռված են իշխանության մարմինների հետ համագործակցությամբ, քանի որ նորմալ հրատարակչական գործունեություն ծավալելու, լրագրողների գործելակերպի բարելավման, որոշակի արտոնությունների տրամադրման և այլ հարցերում դրանցից շատ բան է կախված:

Իշխանության և ՁԼՄ-երի փոխհամագործակցությունը բավականին բարդ ու հակասական գործընթաց է, որի ընդհանուր ինտեգրալ արդյունքն, այնուամենայնիվ, անմիջականորեն կապված է հասարակական կյանքի հետագա ժողովրդավարացման, տնտեսական ու սոցիալական վերափոխումների իրականացման գործընթացների հետ, որոնց հիմնական նպատակը պետք է լինի հայոց պետականության ամրապնդումը և մեր երկրում յուրաքանչյուր քաղաքացու համար արժանապատիվ կյանքի ապահովումը:



## 4. Տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում

### 4.1 Տեղեկատվական անվտանգությունը որպես ազգային անվտանգության համակարգի կարևոր բաղկացուցիչ

Տեղեկատվական անվտանգությունն ասելով հասկանում ենք տեղեկատվական ոլորտում անհատի, հասարակության ու պետության կենսականորեն կարևոր շահերի պաշտպանությունը ներքին և արտաքին սպառնալիքներից:

Անվտանգության մյուս բաղադրիչների շարքում տեղեկատվական անվտանգությունը բնորոշվում է անորոշության ամենամեծ աստիճանով: Այսօր պետության ազգային անվտանգության տեղեկատվական բաղադրիչին տրվում է առաջնահերթ նշանակություն: Դա պայմանավորված է մի շարք օբյեկտիվ հանգամանքներով.

1. Երկրի տեղեկատվական ենթակառուցվածքի քայքայումն ու կազմալուծումը համարժեք է զանգվածային բնաջնջման զենքի կիրառման հետևանքներին:

2. Ներկա պայմաններում երկրների հակասությունների ծանրության կենտրոնը տեղաշարժվել է տեղեկատվական ոլորտ:

3. Տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի բնականոն գործունեության վրա ազդող միջոցները հասանելի են դարձել ոչ միայն պետական հատուկ ծառայություններին, այլ նաև առանձին հանցագործ ու ահաբեկչական կազմավորումներին, որի արդյունքում տեղեկատվական անվտանգությունը ստացել է միջազգային նշանակություն և իր չափերով համարժեք է գլոբալ տնտեսական ու բնապահպանական անվտանգությանը:

Հայաստանի արտաքին գլխավոր մարտահրավերներն այսօր պայմանավորված են նրանով, որ առանց արդյունավետ տեղեկատվական քաղաքականության ազատականացման գործընթացը կարող է ուղեկցվել երկրի անկախության թուլացմամբ, դրա արդյունաբերական և տեխնոլո-

գիական կարողության հետընթացով, ինչպես նաև համաշխարհային շուկայում հիմնականում ծառայությունների ոլորտի մասնագիտացման և որոշ արտադրությունների գծով զարգացած երկրների համար կցորդի կարգավիճակի ձեռքբերմամբ:

Տեղեկատվական անվտանգության արտաքին հատվածն իրենից ներկայացնում է փոխկապակցված գործոնների մի ամբողջություն, որը որոշակի ազդեցություն ունի երկրի ներսում և դրա շուրջ տեղի ունեցող գործընթացների վրա: Արտաքին տեղեկատվական անվտանգության մաս է կազմում արտերկրի հետ Հայաստանի տեղեկատվական հարաբերությունների ողջ համակարգը, որը բնութագրվում է, մի կողմից, միջազգային տեղեկատվական կապերի ներկա վիճակով, ուժերի նոր վերաբաշխմամբ և առաջատար երկրների վարած արտաքին քաղաքականությամբ, մյուս կողմից՝ ազգային տնտեսության վիճակով և երկրի ազգային ու պետական շահերն արտացոլող համապատասխան արտաքին քաղաքականությամբ:

Պետության տեղեկատվական անվտանգության համակարգը կոչված է ապահովելու երկրի՝ որպես ամբողջական կառույցի, կայուն և անկախ զարգացումը, դրա բնականոն տնտեսական աճը՝ հիմնված արտաքին արդյունավետ փոխհարաբերությունների, ինչպես նաև գիտատեխնիկական առաջընթացի և մտավոր կարողության անընդհատ զարգացման վրա:

Տեղեկատվական անվտանգությունն անհրաժեշտաբար ներառում է բարեփոխումների այնպիսի ոլորտներ, որոնք նպաստում են երկրի պաշտպանական կարողության ամրապնդմանը, արտաքին շուկաներում նոր դիրքերի գրավմանը, ինչպես նաև տարածաշրջանում ազդեցության հնարավոր ոլորտների ձևավորմանը:

Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվական անվտանգության անհրաժեշտ նակարդակի ձեռքբերումը ենթադրում է երկրի կենսական շահերի պաշտպանություն, տարածաշրջանային գործընթացներում որոշիչ դերի ձևավորում, ներքաղաքական և ներտնտեսական խնդիրների լուծման համար որոշակի ինքնուրույնություն, որը կկանխի արտաքին ուժերի հնարավոր ճնշումներն ու վերջնագրերը և թույլ կտա հասնել երկրի սոցիալական ու քաղաքական կայունության: Այսպիսով, ներկայումս տեղեկատվական անվտանգությունը կարելի է բնորոշել որպես երկրի զար-

զացման արդյունքների և պետության արտաքին քաղաքականության համապատասխանությունը՝ երկրի ընթացիկ և հեռանկարային շահերին:

Ցավոք, մինչ այժմ, ելնելով և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ գործոններից, բավականաչափ ուշադրություն չի դարձվել ՀՀ տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրներին: Անհրաժեշտ է այստեղ արմատական բեկումն մտցնել, քանի որ, ըստ էության, խոսքը հայոց անկախ պետականության հետագա գոյատևման և Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից տեղեկատվական հասարակության ձևավորման համար բարենպաստ պայմանների ստեղծման մասին է:

Հասարակության զարգացման ներկա փուլը բնութագրվում է տեղեկատվական ոլորտի աճող դերակատարումով, որը հանդիսանալով հասարակական կյանքի կարևորագույն գործոն, շատ դեպքերում որոշում է սոցիալ-քաղաքական և տնտեսական վերափոխումների իրականացման հեռանկարները: Դա առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ տնտեսական, տեղեկատվական և մտավոր գործունեությամբ ազատ զբաղվելու քաղաքացիների սահմանադրական իրավունքների կենսագործման պայմաններում զգալիորեն աճում են հասարակության սոցիալապես ակտիվ խմբերի պահանջումները ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտաքին աշխարհի հետ իրականացվող տեղեկատվական փոխանակության նկատմամբ:

Տեղեկատվական ենթակառուցվածքի և առաջին հերթին տեղեկատվական-հեռահաղորդակցության համակարգերի ինտենսիվ զարգացումը, ինտեգրումը միջազգային տեղեկատվական տարածության հետ, ինչպես նաև հասարակական կյանքի բոլոր բնագավառների, պետական իշխանության և կառավարման մարմինների գործունեության համակողմանի տեղեկատվայնացումը զգալիորեն մեծացրել են հասարակության ու պետության արդյունավետ գործունեության կախվածությունը տեղեկատվական ոլորտում տիրող իրավիճակից:

Միաժամանակ անհրաժեշտ է ընդգծել, որ տեղեկատվական ենթակառուցվածքը, տեղեկատվական ռեսուրսներն ավելի ու ավելի ընդգրկում են ձևով և վերածվում համաշխարհային լիդերության, հակամարտող կողմերի որոշակի ռազմավարական ու մարտավարական քաղաքական նպատակների իրականացման համար միջպետական պայքարի արենայի:

Մարդկանց անհատական, խմբային ու զանգվածային գիտակցության

ձևավորման վրա առավել ազդեցիկ է դառնում զանգվածային լրատվության ու հաղորդակցության միջոցների գործունեությունը: Ցավոք, ներկայումս գործնական հարթության վրա, այդ թվում և միջազգային հարաբերությունների բնագավառում, լայնորեն կիրառություն են ստացել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «տեղեկատվական պատերազմը», «տեղեկատվական հակազդեցությունը» և այլն:

Այս բոլոր հանգամանքները, ինչպես նաև հասարակության կախվածության աճը տեղեկատվական ենթակառուցվածքի գործունեության կայունությունից, տեղեկատվական ոլորտում ՀՀ ազգային շահերի անվտանգության ապահովումն ու ամրապնդումը դարձնում են երկրի ազգային անվտանգության համակարգի կարևորագույն բաղադրիչ:

Տեղեկատվական ոլորտը հանդիսանում է հասարակական կյանքի համակարգաստեղծ գործոններից մեկը: Այն ակտիվորեն ազդում է ազգային անվտանգության քաղաքական, տնտեսական, պաշտպանական և այլ բաղադրիչների վրա: ՀՀ ազգային անվտանգությունը ամբողջապես կախված է տեղեկատվական անվտանգության ապահովման մակարդակից և տեխնիկական առաջընթացի պայմաններում այդ կախվածությունն անընդհատ կմեծանա: Այդ հարցի արդիականությունը պետք է գիտակցվի ոչ միայն պետական իշխանության մարմինների, այլ նաև տեղեկատվական անվտանգության ոլորտի և անվտանգության համակարգերի ու միջոցների հետ սերտորեն առնչվող այլ մարդկանց և ազգաբնակչության կողմից: Տեղեկատվական ոլորտը հասարակական կյանքի ոլորտ է, որն ընդգրկում է.

- տեղեկատվությունը, որը նախատեսված է տեղեկատվական ոլորտի սուբյեկտների կողմից օգտագործման համար,
- սուբյեկտները, որոնք իրականացնում են տեղեկատվության կուտակումը, ձևավորումը, տարածումը և օգտագործումը,
- տեղեկատվական ենթակառուցվածքները, որոնք ապահովում են սուբյեկտների միջև տեղեկատվական փոխանակման գործընթացները,
- հասարակական հարաբերությունները կարգավորող համակարգերը, որոնք ձևավորվում են տեղեկատվության ձևավորման, տարածման և օգտագործման գործընթացների իրականացման ժամանակ:

ՀՀ տեղեկատվական անվտանգությունը նրա ազգային շահերի պաշտպանվածության կայուն իրավիճակն է տեղեկատվական ոլորտում, որը

կոնկրետացվում է անհատի, հասարակության և պետության շահերի հավասարակշռված ընդհանրությամբ:

Տեղեկատվական ոլորտում անհատի շահերը հետապնդում են տեղեկատվությունից օգտվելու, մարդու և քաղաքացու ազատությունը երաշխավորող սահմանադրական իրավունքների կենսագործման նպատակներ:

Տեղեկատվական ոլորտում հասարակության շահերը խնդիր ունեն ապահովելու այդ ոլորտում անհատի շահերի կենսագործումը, ամրապնդելու ժողովրդավարությունը, ստեղծելու սոցիալական և իրավական պետություն, նպաստելու հասարակական համաձայնության կայացմանը և երկրի հոգևոր վերափոխմանը:

Տեղեկատվական ոլորտում պետական շահերը հետամուտ են տեղեկատվական ենթակառուցվածքի ներդաշնակ զարգացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու, այդ ոլորտում սահմանադրորեն երաշխավորված իրավունքներն ու ազատությունները պահպանելու կենսագործելու, սահմանադրական կարգի կայունությունը ապահովելու, երկրի ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը պաշտպանելու, քաղաքական, տնտեսական ու սոցիալական կայունությունը ապահովելու, օրինականությունն ու իրավակարգի նորմերը կենսագործելու, փոխշահավետ և իրավահավասար միջազգային համագործակցություն ծավալելու գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

Տեղեկատվական ոլորտում երկրի ազգային շահերի հիման վրա ձևավորվում են տեղեկատվական անվտանգության ապահովմանն ուղղված պետության ներքին ու արտաքին քաղաքականության ռազմավարական և ընթացիկ խնդիրները:

Տեղեկատվական ոլորտի ազգային շահերին են վերաբերում.

- տեղեկատվության ստացման և օգտագործման ոլորտում մարդու ու քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների կենսագործման ապահովումը, ՀՀ հոգևոր վերածննդի իրագործումը, հասարակության բարոյական արժեքների, հայրենասիրության ու մարդասիրության ավանդույթների, երկրի մշակութային ու գիտական ներուժի պաշտպանությունն ու ամրապնդումը,

- ՀՀ պետական քաղաքականության տեղեկատվական ապահովումը,
- ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների, հայրենական

տեղեկատվական արդյունաբերության, այդ թվում՝ տեղեկատվայնացման, հեռահաղորդակցության ու կապի միջոցների արդյունաբերության զարգացումը, դրա արտադրանքով ներքին շուկայի պահանջարկի բավարարումը և համաշխարհային շուկաներ այդ արտադրանքի արտահանման խթանումը, ինչպես նաև հայրենական տեղեկատվական ռեսուրսների կուտակման, ամփոփման և արդյունավետ օգտագործման ապահովումը,

- չթուլատրված օգտագործումից տեղեկատվական ռեսուրսների պաշտպանությունը, ինչպես արդեն գոյություն ունեցող, այնպես էլ ստեղծվելիք տեղեկատվական ու հեռահաղորդակցության համակարգերի գործունեության անվտանգության ապահովումը:

Ըստ էության, այստեղ խոսքը Հայաստանում տեղեկատվական հասարակության հիմքերի ձևավորման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման մասին է:

Գլոբալ տեղեկատվական հասարակության ձևավորման գործընթացներում Հայաստանի Հանրապետության լայնածավալ մասնակցությունը կարելի է դիտարկել որպես նրա ազգային անվտանգության ապահովման ռազմավարական խնդիրներից մեկը:

Եթե նորից անդրադառնանք տեղեկատվական ոլորտում ՀՀ ազգային շահերին, ապա պետք է ընդգծել, որ շահերի այն խմբի իրագործումը, որը կապված է տեղեկատվության ստացման ու օգտագործման ոլորտում մարդու, քաղաքացու սահմանադրական իրավունքների, ազատությունների ու ՀՀ հոգևոր վերածննդի ապահովման, հասարակության բարոյական արժեքների պաշտպանության և ամրապնդման հետ, առաջին հերթին կապահանջվի բարձրացնել հասարակության զարգացումն ապահովող տեղեկատվական ենթակառուցվածքի օգտագործման արդյունավետությունը, հայ հասարակության համախմբման մակարդակը, որը բարդ խնդիր է: Գաղտնիք չէ, որ հասարակության ծայրահեղ բևեռացման պայմաններում դժվար է նրա բոլոր անդամների համար ապահովել նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու հավասար հնարավորություններ: Այդ ուղղությամբ պետությունը պետք է նախատեսնի համապատասխան սոցիալական ինստիտուտների ստեղծման ու զարգացման մեխանիզմներ, որոնք բնակչության որոշակի մասին կցուցաբերեն անհրաժեշտ աջակցություն:

Անհրաժեշտ է կատարելագործել ՀՀ գիտատեխնիկական և հոգևոր ներուժի հիմքը կազմող տեղեկատվական ռեսուրսների ձևավորման, պահպանման և ռացիոնալ օգտագործման համակարգը, միաժամանակ ապահովելով ցանկացած օրինական ճանապարհով ազատորեն տեղեկատվություն փնտրելու, ստանալու, հաղորդելու, ստեղծելու և տարածելու քաղաքացիների սահմանադրական իրավունքների ու ազատությունների կենսագործումը: Եվ ընդհակառակը, տեղեկատվությունից օգտվելու ազատության իրավունքը չպետք է հանգեցնի անձնական և ընտանեկան գաղտնիք ունենալու, նամակագրության, հեռախոսային խոսակցությունների գաղտնիության քաղաքացիների սահմանադրական իրավունքների խախտման: Ցավոք, նշված իրավունքների խախտման դեպքերն այսօր այնքան շատ են:

Անհրաժեշտ է երաշխավորել նաև զանգվածային լրատվության ազատությունը, գրաքննության արգելումը և միաժամանակ ամրապնդել մտավոր սեփականության ոլորտում ծագող հարաբերությունների իրավական կարգավորման մեխանիզմները, ստեղծել պայմաններ օրենսդրությամբ սահմանված գաղտնի տեղեկատվության նկատմամբ ոտնձգությունները սահմանափակելու համար:

Նշված խնդիրների լուծմանը խանգարում են որոշ գործոններ ու հանգամանքներ, որոնք ընդհանրացվում են «տեղեկատվական անվտանգության սպառնալիքներ» հասկացության շրջանակներում: Տեղեկատվական անվտանգության հիմնական սպառնալիքներն են.

- պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից այնպիսի նորմատիվային ակտերի ընդունումը, որոնք տեղեկատվական գործունեության և հոգևոր զարգացման բնագավառում խախտում են քաղաքացու սահմանադրական իրավունքները և ազատությունները,

- Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվության ձևավորման, ստացման և տարածման բնագավառում մենաշնորհների ստեղծումը, այդ թվում նաև հեռահաղորդակցության համակարգերի ոլորտում: Առաջին հայացքից այս խնդիրը կարող է թվալ ոչ այնքան արդիական: Սակայն վերջին ժամանակներս մեր երկրում ծավալվող զարգացումները վկայում են, որ այդ սպառնալիքի կարևորությունը ևս մեկ անգամ անհրաժեշտ է ընդգծել,

- քաղաքացիների անձնական և ընտանեկան գաղտնիքի պաշտպանության, նամակագրության, հեռախոսային խոսակցությունների գաղտնիության սահմանադրական իրավունքների դրսևորման հակազդեցությունները,

- հասարակայնորեն անհրաժեշտ տեղեկատվության չափից դուրս գաղտնիությունը:

Սպառնալիքների շարքին կարելի է դասել նաև.

- անհատական, խմբային և հասարակական գիտակցության վրա ազդող հատուկ միջոցների հակաիրավական օգտագործումը: Ըստ մեզ, այդ ոլորտը շատ թույլ է ուսումնասիրված և անհրաժեշտ է լրջորեն մոտենալ տվյալ խնդրի պարզաբանմանը,

- մշակութային արժեքների, ներառյալ նաև արխիվների, հավաքման ու պահպանման համակարգերի ապակազմակերպումն ու քայքայումը: Դա առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ փաստաթղթերի զգալի մասը, այդ թվում և կինո, ֆոտո, տեսափաստաթղթերի, պահպանվում է պետական արխիվներից դուրս:

Սպառնալիքների այդ խմբում են գտնվում նաև.

- հոգևոր արժեքների արժեզրկումը, հասարակության կողմից ընդունված արժեքային համակարգին հակասող հոգևոր ու բարոյական նորմերի, բռնության վրա հիմնված զանգվածային մշակույթի քարոզումը: Այդ սպառնալիքը գրեթե ամեն օր, ամեն ժամ իրագործվում է մեր հեռուստաալիքների օգնությամբ և լրացուցիչ հիմնավորումներ ներկայացնելու խնդիր չկա,

- երկրի բնակչության հոգևոր, բարոյական ու ստեղծարար ներուժի նվազումը, որը զգալիորեն կբարդացնի նորագույն տեխնոլոգիաների ներդրման և արդյունավետ շահագործման համար անհրաժեշտ որակյալ կադրերի պատրաստման գործընթացը:

Երկրի ազգային շահերի հաջորդ խումբը կապված է իրականացվող պետական քաղաքականության տեղեկատվական ապահովման հետ: Դրանց կենսագործման համար անհրաժեշտ է.

1. Ինտենսիվացնել պետական բաց տեղեկատվական ռեսուրսների ձևավորումը, բարձրացնել դրանց օգտագործման արդյունավետությունը:
2. Ամրապնդել զանգվածային լրատվության պետական միջոցները,

արժանահավատ տեղեկատվությունը ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտերկրում սպառողներին ժամանակին հասցնելու համար ընդլայնել դրանց հնարավորությունները: Անհրաժեշտ է նշել, որ պետականության տեսանկյունից այս կարևորագույն խնդիրը ոչ ճիշտ է ընկալվում ոչ պետական ՋԼՍ-ների կողմից, որոնք այն ընդունում են որպես խտրականության դրսևորում:

Այդ ոլորտի հիմնական սպառնալիքներն են.

- երկրի տեղեկատվական շուկայի կամ դրա առանձին սեկտորների նկատմամբ մենաշնորհների գերակայությունը,
- բնագավառի որակյալ մասնագետների անբավարար քանակով պայմանավորված պետական քաղաքականության տեղեկատվական ապահովման ցածր արդյունավետությունը, պետական տեղեկատվական քաղաքականության ձևավորման ու կենսագործման արդյունավետ համակարգի բացակայությունը:

Ազգային շահերի երրորդ խումբն առնչվում է ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների, տեղեկատվական արդյունաբերության զարգացման, դրա արտադրանքով ներքին շուկայի պահանջարկի բավարարման և միջազգային շուկաներ դրա արտահանման խթանման, ինչպես նաև հայրենական տեղեկատվական ռեսուրսների կուտակման, պահպանության և օգտագործման արդյունավետ մեխանիզմի գործունեության հետ: Դրա համար պահանջվում է զարգացնել և կատարելագործել ՀՀ միասնական տեղեկատվական տարածության ենթակառուցվածքը: Անհրաժեշտ է զարգացնել տեղեկատվական ծառայությունների հայրենական արդյունաբերությունը և բարձրացնել պետական տեղեկատվական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը: Կարևորագույն խնդիր է հանդիսանում նաև ՀՀ-ում տեղեկատվայնացման, հեռահաղորդակցության և կապի մրցունակ միջոցների ու համակարգերի արտադրության զարգացումը, այդ միջոցներն ու համակարգերն արտադրողների միջազգային ու տարածաշրջանային կոոպերացիային ՀՀ մասնակցության ընդլայնումը: Չնայած այդ ուղղությամբ իրականացվող որոշակի միջոցառումներին, արդյունքները դեռևս զգալի չեն, քանի որ համաշխարհային տնտեսության այդ սեկտորում մրցակցությունը բավականին մեծ է և ՀՀ հետ մնալը առաջին հերթին պայմանավորված է ֆինանսական միջոցներ

րի սահմանափակվածությամբ:

Շատ կարևոր է տեղեկատվական ոլորտի հայրենական հիմնարար և կիրառական հետազոտությունների, մշակումների նկատմամբ պետական աջակցության ցուցաբերումը: Այս ոլորտում ՀՀ ազգային շահերի հիմնական սպառնալիքներն են նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու, տեղեկատվական ծառայությունների մատակարարման բնագավառում աշխատանքի միջազգային փոխշահավետ և իրավահավասար մասնակցության ոլորտներում մեր երկրի առջև կանգնած մարտահրավերները, ինչպես նաև ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում ՀՀ-ին պարտադրված տեխնոլոգիական կախվածության պայմանների ստեղծումը:

Մեր արդյունաբերության համար հատկապես զգալի վտանգ է ներկայացնում բարձրորակ մասնագետների և «ուղեղների» մեծ արտահոսքը:

Ազգային շահերի վերջին խումբը կապված է չթույլատրված օգտագործումից տեղեկատվական ռեսուրսների պաշտպանության և տեղեկատվական ու հեռահաղորդակցության համակարգերի անվտանգության ապահովման հետ:

Այդ խնդիրների իրագործման համար պահանջվում է բարձրացնել տեղեկատվական համակարգերի անվտանգությունը, առաջին հերթին պետական կառավարման մարմինների, ֆինանսավարկային ու բանկային ոլորտի ձեռնարկությունների, ինչպես նաև ռազմական հաստատությունների ու բնապահպանական կարևորագույն կառույցների տեղեկատվական համակարգերի անվտանգությունը:

Ազգային շահերի տվյալ բաղադրիչի սպառնալիքները անհրաժեշտ է փնտրել արտասահմանյան գաղտնի ծառայությունների և քրեական տարրերի գործունեության մեջ, որն ուղղված է.

- տեղեկատվության հակաօրինական ստացմանն ու օգտագործմանը,
- տեղեկատվական ու տեղեկատվական-հեռահաղորդակցության համակարգերի բնականոն գործունեությունը խաթարող ծրագրերի տարածմանը,
- տեխնիկական ուղիների միջոցով տեղեկատվության տիրապետմանը:

Սպառնալիքների այս խումբն ունի արտաքին ուղղվածություն:

Ներքին բնույթի սպառնալիքները կապված են սպասարկող անձնակազմի կողմից տեղեկատվության մշակման տեխնոլոգիաների խախտ-

ման, չթույլատրված տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվայնացման միջոցների օգտագործման, տեղեկատվության տարածման օրինական սահմանափակումների չհաշվառման հետ:

Վերոշարադրյալ խնդիրների լուծումը և սպառնալիքներին արդյունավետ հակազդեցության մեխանիզմների մշակման անհրաժեշտությունը ենթադրում է ՀՀ տեղեկատվական անվտանգության օրենսդրական-նորմատիվային ապահովվածության աստիճանի բարձրացում:

Այսօր շատ է խոսվում տեղեկատվական զենքի և պատերազմի նոր դեմքի մասին: Քննարկումների հիմնական էությունն այն է, որ ներկայումս պատերազմական գործողություններ կարելի է վարել ավելի «քաղաքակիրթ» ձևով: Արդյունավետ ձևով հակառակորդին կարելի է թուլացնել՝ կազմալուծելով նրա կառավարման համակարգը, խախտելով ֆինանսական հոսքերի կանոնակարգված ընթացքը, ֆիզիկապես ու բարոյապես մաշված տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման ճանապարհով տեղեկատվական ոլորտի զարգացումը ցանկալի հունով ուղղորդելով:

Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական-տեղեկատվական հասարակության կառուցման խնդիրները, հասարակության և պետության առաջընթացի գործում տեղեկատվական ռեսուրսների, տեխնոլոգիաների և տեղեկատվության դերի բարձրացումը երկրի ազգային անվտանգության ապահովման շրջանակներում առաջին պլան են մղում տեղեկատվական անվտանգության հարցերը: Տեղեկատվական անվտանգությունը ենթադրում է տեղեկատվական ոլորտում արտաքին և ներքին սպառնալիքներից անհատի, հասարակության և պետության կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածություն: Ռեսուրսսիներով տեղեկատվական անվտանգությանն առնչվող այլ երկրների կողմից մշակված մոտեցումները, կարելի է որոշակիացնել տեղեկատվական ոլորտում հիմնական շահերն ու սպառնալիքները, տեղեկատվական անվտանգությունն ապահովող պետական քաղաքականության հիմնական սկզբունքները:

Տեղեկատվական ոլորտում կենսականորեն կարևոր խնդիրներն են.

- վնասակար տեղեկատվությունից քաղաքացիների առողջության պաշտպանությունը,
- ազգային-հոգևոր արժեքների պաշտպանությունը, ազգային-մշակութային ժառանգության և բարոյական արժեքների քարոզումը,

- զանգվածային գիտակցության նկատմամբ մանիպուլյացիոն մեխանիզմների վնասակար ազդեցության կանխարգելումը,

- ժամանակակից հեռահաղորդակցության տեխնոլոգիաների նախընտրելի զարգացումը, հայրենական գիտական և արտադրական ներուժի պահպանումն ու ամրապնդումը:

Անհատի, հասարակության և պետության կենսականորեն կարևոր շահերի հիմնական սպառնալիքներն են.

ա) ներքին սպառնալիքներ

- տեղեկատվայնացման մակարդակով ՀՀ հետ մնալը աշխարհի առաջատար երկրներից,

- ՀՀ միասնական տեղեկատվական և հոգևոր տարածության կազմալուծումը, հասարակության հոգևոր կյանքին զգալի վնաս հասցնող կրոնական տարբեր աղանդների և կազմակերպությունների ակտիվացումը,

- ազգային շահերին համապատասխանող հստակ ձևավորված տեղեկատվական քաղաքականության բացակայությունը:

բ) արտաքին սպառնալիքներ

- ՀՀ տեղեկատվական համակարգերի զարգացմանն ու բնականոն գործունեությանը խոչընդոտող արտաքին նպատակաուղղված միջամտությունը,

- տեղեկատվական պատերազմների վարման մեթոդների անընդմեջ կատարելագործումն ու տեղեկատվական զենքի օգտագործումը:

Տեղեկատվական անվտանգությունն ապահովող հիմնական խնդիրներն են.

1. Տեղեկատվական ոլորտում առկա սպառնալիքներից ազգային շահերի պաշտպանությունն ապահովող միասնական պետական քաղաքականության ձևավորումն ու իրագործումը:

2. Տեղեկատվական անվտանգության ապահովման օրենսդրական-նորմատիվային համակարգի ստեղծումն ու կատարելագործումը:

3. Տեղեկատվական անվտանգությունն ապահովելու նպատակով պետական իշխանության մարմինների գործողությունների կոորդինացումը:

4. Պետական տեղեկատվական ռեսուրսների պաշտպանությունը:

5. Երկրի հոգևոր վերածնունդը, ավանդական-հոգևոր արժեքների պահպանումը:

6. Պատմական ու մշակութային ժառանգության ամբողջականության և

պաշտպանվածության ամրապնդումը:

7. Ձանգվածային լրատվության միջոցով ազգային մշակույթի, հոգևոր-բարոյական և պատմական ավանդույթների քարոզումը:

8. Հայոց լեզվի, որպես պետական լեզվի, դերի հետազոտությունը:

9. Ստեղծարար գործունեությամբ զբաղվելու համար օպտիմալ տնտեսական պայմանների ստեղծումը:

#### *4.2 Տեղեկատվական անվտանգության ապահովման համակարգ*

Տեղեկատվական անվտանգության ոլորտում ՀՀ ազգային անվտանգության սպառնալիքներն են.

- երկրի տեղեկատվական անվտանգության ոլորտում միասնական պետական քաղաքականության և անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայությունը,

- տեղեկատվական անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների ոչ լրիվ ծավալով ֆինանսավորումը,

- ՀՀ և աշխարհի առաջատար երկրների միջև տեխնոլոգիական խզվածքի մեծացումն ու նրանց ազդեցությունը մեր երկրի տեղեկատվական տեխնոլոգիաների հետազոտությանը, այլ երկրների տեղեկատվական էքսպանսիան,

- ՀՀ տեղեկատվական շուկայի և դրա առանձին սեկտորների մոնոպոլացումը հայրենական և արտասահմանյան տեղեկատվական կառույցների կողմից,

- չլիցենզավորված տեղեկատվական տեխնոլոգիաների, տեղեկատվության պաշտպանության, տեղեկատվայնացման, հեռահաղորդակցության ու կապի միջոցների լայնածավալ օգտագործումը,

- տեղեկատվական արտահոսքի բազմաթիվ տեսակների առկայությունը երկրի ներսում և այլն:

Գլոբալացման գործընթացներում հայոց ինքնությունը վտանգող նոր արժեքների և ազդեցությունների ներթափանցման պայմաններում երկրի անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ է.

1. Ձևավորել ու կատարելագործել տեղեկատվական անվտանգության

բնագավառի նորմատիվաիրավական դաշտը:

2. Բարենպաստ պայմաններ ստեղծել տեղեկատվության բնագավառում օրենսդրությամբ թույլատրվող գործունեություն ծավալող քաղաքացիների ու հասարակական կազմակերպությունների իրավունքները կյանքի կոչելու համար:

3. Ազգային անվտանգության տեսակետից որոշել տեղեկատվության ազատ փոխանակման նկատմամբ քաղաքացիների, հասարակության ու պետության պահանջարկի ու տեղեկատվության տարածման նկատմամբ անհրաժեշտ սահմանափակումների միջև հավասարակշռության չափը:

4. Ըստ ամենայնի խրախուսել ՀՀ տեղեկատվական ու հեռահաղորդակցության շուկաներում մասնավոր ներդրումների ներգրավման և ազնիվ մրցակցության ծավալման գործընթացը՝ բացառելով նոր մենաշնորհների առաջացումը:

5. Ինտեգրվել գլոբալ տեղեկատվական տարածության ու ժամանակի մեջ՝ նկատի ունենալով առկա բացասական գործոնները և գործունե կազմակերպություն կազմակերպելով այլ երկրների կողմից ծավալվող տեղեկատվական էքսպանսիային:

Պետական տեղեկատվական քաղաքականությունը մշակվում և իրականացվում է երկրի ազգային անվտանգության քաղաքականության հետ ներդաշնակելով: Պետական ընդհանուր քաղաքականության այդ երկու բաղադրիչների փոխազդող գործունեության կարևորագույն ասպեկտներից է տեղեկատվական ռեսուրսների, տեղեկատվական-հաղորդակցության ենթակառուցվածքի ու միասնական տեղեկատվական տարածության մյուս տեխնոլոգիական տարրերի անվտանգության ապահովումը:

Տեղեկատվական տարածության անվտանգությունն ապահովելու համար պետությունը մշակում է օրենսդրություն և ստեղծում հատուկ կազմակերպական կառույցներ, որոնց միասնությունը կազմում է երկրի տեղեկատվական անվտանգության (SU) համակարգը:

Կարելի է ձևակերպել ՊՏՔ տվյալ ոլորտի հետևյալ հիմնական ուղղությունները.

- ՊՏՔ ռազմավարության մշակման և իրականացման ժամանակ տեղեկատվական անվտանգության պահանջների հաշվառում,

- տեղեկատվական հասարակության զարգացման նորմատիվային-իրավական հենքի մշակում SU կողմից ներկայացվող չափորոշիչներին

համապատասխան,

- միջազգային հեռահաղորդակցության և տեղեկատվական համակարգերին ՀՀ ինտեգրման ժամանակ միասնական ու հավասարակշռված քաղաքականության մշակում,

- ՏԱ ապահովման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների արտադրման ոլորտում միասնական պետական գիտատեխնիկական քաղաքականության իրականացում:

### 4.3 Տեղեկատվական պատերազմ

Ամերիկացի հայտնի ապագայագետ (ֆուտուրոլոգ) Ա. Կոֆֆերի կարծիքով, գիտության ու տեխնիկայի զարգացումը իրականացվում է թռիչքներով, կամ, նրա խոսքերով ասած, ալիքներով: Առաջին ալիքը, որին նա տվել է «գյուղատնտեսական քաղաքակրթություն» անվանումը, ի հայտ է եկել մոտ 10000 տարի առաջ: Այն ջարդեց ինքնակազմակերպման նախնադարյան-համայնական ձևերը՝ առաջացնելով աշխատանքի բաժանում և ստեղծելով հասարակական կազմակերպված աստիճանակարգային կառույցներ:

Երկրորդ ալիքը՝ «արդյունաբերական քաղաքակրթությունը», որը սկսվել էր 300 տարի առաջ, ստեղծեց «ամենահզոր, համախմբված և էքսպանսիոն սոցիալական համակարգը, որին հավասարը աշխարհը դեռ չգիտեր» (Тодфдер А., Третья волна, М., 1999):

Երրորդ ալիքը, որն սկսվել է անցած դարի 50-ական թվականներից, կապված է, այսպես կոչված, «տեղեկատվական պայթյունի» հետ, այսինքն՝ տեղեկատվության լավայածև աճի հետ, որի արդյունքում մարդն այլևս ի վիճակի չէր, առանց նոր տեղեկատվական տեխնոլոգիաների օգնության, կառավարելու այդ ծավալները: Այդ իսկ կապակցությամբ երրորդ ալիքը, որի տիրապետության տակ ներկայումս գտնվում է մարդկությունը, անվանվեց «տեխնոլոգիական քաղաքակրթություն»:

«Ալիքներից» յուրաքանչյուրն ուներ իր տնտեսությունը, սոցիալական ու քաղաքական ինստիտուտները, մշակույթը, հաղորդակցության միջոցները, ինչպես նաև պատերազմներ վարելու իր ձևերն ու մեթոդները: Տ. Չերվինսկին, ալիքների հերթափոխը կապելով պատերազմների տեսակ-

ների հերթափոխի հետ, նշում է. «Առաջին ալիքի» պատերազմները մղվում էին հողի համար, «երկրորդ ալիքի» պատերազմները՝ ֆիզիկական արդյունավետության, «երրորդ ալիքինը» կմղվեն գիտելիքներից օգտվելու և դրանց նկատմամբ վերահսկողություն սահմանելու համար: Քանի որ ցանկացած հասարակության «մարտական գործողությունների ձևերը» հետևում են այդ հասարակության «բարեկեցության ստեղծման ձևերին», ապա ապագայի պատերազմները հիմնականում կլինեն «տեղեկատվական պատերազմներ» (Czerwinski T. J. The Third Wave: what the Tofflers never Told You // Strategic Forum, 1996):

Տեղեկատվական պատերազմները սահմանող և ուսումնասիրող հասկացությունները դեռևս չեն հստակեցվել, ինչը և պայմաններ է ստեղծում այդ տերմինի տարաբնույթ մեկնաբանությունների համար:

Ի՞նչ է տեղեկատվական պատերազմը և որտեղի՞ց է ծագել այդ հասկացությունը: Տեղեկատվական ազդեցությունը, որպես այդպիսին, միշտ էլ գոյություն է ունեցել: Հին ժամանակներում, որպես տեղեկատվական գրոհի ձևեր, օգտագործում էին, օրինակ, միջերը: Այսօր շատ է խոսվում տեղեկատվական պատերազմի մասին: Սակայն հազիվ թե որևէ մեկը ճիշտ պատասխանի, թե ի՞նչ է այն իրենից ներկայացնում: Ավելին, նույնիսկ մասնագետները չեն կարողանում պատասխանել այն հարցին, թե ե՞րբ է ծնվել «տեղեկատվական պատերազմ» բառակապակցությունը: Առաջին անգամ ոմն Թոմաս Ռոնա է օգտագործել «տեղեկատվական պատերազմ» տերմինը 1976թ. Boeing ֆիրմայի համար պատրաստած «Ձեռքի համակարգեր և տեղեկատվական պատերազմ» զեկույցում: Թ. Ռոնան նշել էր, որ տեղեկատվական ենթակառուցվածքը դառնալու է ամերիկյան տնտեսության առանցքային բաղադրիչը: Մինչև ժամանակ այն կդառնա նաև խոցելի նպատակակետ ինչպես պատերազմական, այնպես էլ խաղաղ ժամանակներում: Այդ զեկույցն էլ հենց կարելի էր նշել որպես «տեղեկատվական պատերազմ» տերմինի սկզբնաղբյուր:

Թ. Ռոնայի զեկույցի տպագրությունը դարձավ ՋԼՄ-ներում ծավալված քննարկումների սկիզբը:

Ռազմական տեսաբանների ուշադրության կենտրոնում «տեղեկատվական պատերազմ» տերմինը առաջին անգամ ի հայտ է եկել 20-րդ դարի 80-ական թվականներին, կապված սառը պատերազմի ավարտից հետո ԱՄՆ զինված ուժերի առջև դրված նոր խնդիրների հետ և հանդիսանում է



ամերիկյան ռազմական տեսաբաններ Գ. Էքքլզի ու Գ. Սամներզի ուսումնասիրությունների արդյունք:

1980թ. ԱՄՆ ռազմա-օդային ուժերը սկսեցին ակտիվորեն զբաղվել այդ խնդրով: Այդ ժամանակ արդեն հասկանալի էր այն, որ տեղեկատվությունը կարող է լինել և՛ նպատակ, և՛ զենք:

Սառը պատերազմի ավարտից հետո ի հայտ եկած նոր խնդիրների կապակցությամբ «տեղեկատվական պատերազմ» տերմինը մտցվեց ԱՄՆ պաշտպանության նախարարության պաշտոնական փաստաթղթաշրջանառության մեջ: Այն սկսեց ակտիվորեն գործածության մեջ դրվել 1991թ. «Փոթորիկ անապատում» օպերացիան ավարտելուց հետո, որտեղ նոր տեղեկատվական տեխնոլոգիաներն առաջին անգամ օգտագործվել էին որպես մարտական գործողություններ վարելու միջոցներ: Պաշտոնապես այդ տերմինը առաջին անգամ մտցվել է ԱՄՆ պաշտպանության նախարարի 21.21.1992թ. DODD 3600 դիրեկտիվում: 1996թ. ԱՄՆ պաշտպանության նախարարությունը գործողության մեջ դրեց «Վերահսկողության և կառավարման համակարգերի դեմ պայքարի դոկտրինը»: 1996թ. վերջերին Պենտագոնի փորձագետ Ռոբերտ Բանկերը գիտաժողովներից մեկում ներկայացրեց զեկույց նվիրված 21-րդ դարում ԱՄՆ զինված ուժերի նոր ռազմական դոկտրինին («Force XXI» հայեցակարգ): Դրա հիմքում դրված էր մարտական գործընթացների դաշտը երկու բաղադրիչների բաժանելու գաղափարը՝ ավանդական տարածություն և կիբեռտարածություն:

Այսպիսով, մարտական գործողությունների վարման ոլորտների շարքում հողի, ծովի, օդի և տիեզերքի հետ միասին այժմ ընդգրկված է նաև տեղեկատվությունը:

1998թ. ԱՄՆ պաշտպանության նախարարությունը գործողության մեջ դրեց «Տեղեկատվական օպերացիաների միավորված դոկտրինը»: Սկզբում այդ փաստաթուղթը կրում էր «Տեղեկատվական զենքի միավորված դոկտրին» անվանումը: Փոփոխության պատճառն այն էր, որպեսզի բացատրվեր «տեղեկատվական օպերացիա» և «տեղեկատվական պատերազմ» հասկացությունների հարաբերակցությունը: Դրանք սահմանվեցին հետևյալ կերպ.

- տեղեկատվական օպերացիան գործողությունների ամբողջություն է, որի նպատակն է դժվարացնել հակառակորդի տեղեկատվական համակարգերի միջոցով տեղեկատվության կուտակումը, մշակումը, հաղորդու-

մը և պահպանումը՝ ապահովելով սեփական տեղեկատվության և տեղեկատվական համակարգերի անվտանգությունը,

- տեղեկատվական պատերազմը հակադիր կողմի պետական և ռազմական կառավարման համակարգերի ու ռազմաքաղաքական ղեկավարության վրա համալիր ներգործություն է (տեղեկատվական օպերացիաների միասնություն), որը նույնիսկ խաղաղ պայմաններում տեղեկատվական ներգործություն նախաձեռնող կողմի համար կապահովի իրերի բարենպաստ զարգացում և անհրաժեշտ որոշումների ընդունման ընթացք:

Ինչպես նշում են ամերիկյան փորձագետները, տեղեկատվական պատերազմը բաղկացած է գործողություններից, որոնք ձեռնարկվում են հակառակորդի տեղեկատվության և տեղեկատվական համակարգերի վրա ներագդելու ճանապարհով տեղեկատվական առավելության հասնելու համար:

Տեղեկատվական առավելությունը բնորոշվում է որպես իրավիճակի վերաբերյալ տեղեկատվություն հավաքելու, մշակելու և տարածելու ընդունակություն՝ խոչընդոտելով հակառակորդին անելու նույն բանը:

Տեղեկատվական հակամարտությունն իրականացվում է կառավարման ու որոշումների ընդունման, ինչպես նաև համակարգչային և տեղեկատվական համակարգերի ու ցանցերի բնականոն գործընթացը խաթարող և ապակազմակերպող միջոցառումների կենսագործման ճանապարհով:

Մի քանի տարի առաջ ԿԶՎ-ը կիբեռտարածությունում հնարավոր սպառնալիքների սկզբնաղբյուր համարում էր միայն Ռուսաստանին ու Չինաստանին: Այսօր ամերիկյան փորձագետները նշում են, որ ԱՄՆ-ի դեմ ուղղված տարաբնույթ տեղեկատվական օպերացիաներ ավելի քան 20 երկրներ պլանավորում և իրագործում են:

Տեղեկատվական բաղադրիչից ժամանակակից քաղաքակրթության կախվածությունը վերջինիս առավել խոցելի է դարձնում: Տեղեկատվական ցանցերի արագագործությունը և լայն տարածվածությունը բազմակի մեծացրել է տեղեկատվական զենքի հզորությունը:

Տեղեկատվության գործառնությանից երկու տարբեր ոլորտները՝ հունամիտարն ու տեխնիկականը, առաջադրում են «տեղեկատվական պատերազմ» տերմինի մեկնաբանության երկու տարբերակ:

Հունամիտար առումով «տեղեկատվական պատերազմ» ընկալվում է

որպես տեղեկատվական տարածության կերպափոխման այս կամ այն ակտիվ մեթոդի կենսագործում: Այս կարգի տեղեկատվական պատերազմներում խոսքը աշխարհակարգի պարտադրման որոշակի մոդելի (հայեցակարգի) մասին է, որը կոչված է ապահովելու մարդկային վարքագծի ցանկալի տեսակների գոյությունը:

Տեղեկատվական հասարակությունում, որի նախաշեմին է գտնվում առաջադեմ մարդկությունը, կյանքի ցանկալի ստանդարտներն ուժով չեն պարտադրվում, այլ նրբորեն քարոզվում և տարածվում են նոր տեխնոլոգիաների, այսպես կոչված, «մետատեխնոլոգիաների» օգնությամբ: «Մետատեխնոլոգիաների» ներգործության հիմնական օբյեկտն է զանգվածային գիտակցությունը: Փորձը ցույց է տալիս, որ ժամանակակից ՁԼՄ-ները, առաջին հերթին էլեկտրոնային, որոնք ձևավորում են տեղեկատվական տարածությունը, հանդիսանում են զանգվածային գիտակցության վրա ազդելու տեխնոլոգիապես օպտիմալ միջոց: Տեղեկատվական տարածության և հասարակական կարծիքի նոր կարգավիճակը ներկայումս ակտիվորեն օգտագործվում է արտաքին քաղաքականության մեջ: Ռազմաքաղաքական նպատակների ձեռքբերումն այսօր հնարավոր է հասարակական կարծիքի ձևավորման միջոցով: Օրինակ, ամերիկյան վերլուծաբանները խոսում են մեդիա-պատերազմի մասին, որը քաղաքական որոշումներ ընդունող մարդկանց վրա ունենում է ժամանակավոր հզոր ճնշում՝ հնարավորություն չտալով վերլուծելու ընդունվելիք որոշումների հետևանքները և ժամանակ չտրամադրելով խորհրդատվության համար: Հետևաբար, հակառակորդն այսօր իր նպատակներին կարող է հասնել ոչ միայն ռազմական, այլ նաև քաղաքացիական մեթոդներով:

Յուրաքանչյուր հասարակություն ինքնապաշտպանության համար օգտագործում է ռելևանտ տեղեկատվական ռեժիմներ: Այսպես, նախկին խորհրդային Միությունը սահմանափակում էր արտաքին հաղորդակցության հնարավորությունները՝ դրա մեջ տեսնելով գոյություն ունեցող կարգի համար վտանգներ: Արևմուտքը, ընդհակառակը, պահանջում էր մշակութային փոխանակումներ, որոնց միջոցով էլ ԽՍՀՄ էր ներթափանցում երկրի համար կործանարար տեղեկատվություն:

Անհրաժեշտ է նշել, որ ՁԼՄ-ների կողմից «տեղեկատվական պատերազմ» տերմինը մեկնաբանվում է հիմնականում որպես կոմպրոմատների արտահոսք, որին զգալի չափով նպաստում է զանգվածային հեռահաղոր-

դակցության նոր միջոցի՝ Ինտերնետ ցանցի ի հայտ գալը, որը շատ հարմար է ոչ միայն կոմպրոմատների չվերահսկվող տարածման, այլ նաև հասարակությանը ժամանակին և անհրաժեշտ տեղեկատվության մատակարարման առումներով:

Հենց Ինտերնետ գլոբալ ցանցն է հնարավորություն տալիս «տեղեկատվական պատերազմ» տերմինը դիտարկել տեխնիկական տեսանկյունից:

Տեխնիկա-տեխնոլոգիական տեսանկյունից ևս գոյություն ունեն տեղեկատվական պատերազմի տարբեր սահմանումներ: Պենտագոնում, օրինակ, ընդունված է հետևյալ սահմանումը. «Տեղեկատվական պատերազմը համակարգչային տեխնիկան է՝ գումարած ֆինանսները»:

Մինչ տեխնիկական տեսանկյունից տեղեկատվական պատերազմի տարբեր սահմանումների մեկնաբանումը, նշենք դրա կարևորագույն հատկությունը. տեղեկատվական պատերազմների վարումը երբեք չի լինում պատահական, այն տեղեկատվության օգտագործման բնագավառում ենթադրում է համաձայնեցված գործունեություն, լինի դա իրական մարտական գործողությունների ժամանակ, թե քաղաքական, տնտեսական ու սոցիալական ոլորտներում: Այդ կապակցությամբ, ըստ մեզ, առավել ամբողջական է տեղեկատվական պատերազմի հետևյալ սահմանումը. «Տեղեկատվական պատերազմը ընդգրկում, ամբողջական ռազմավարություն է, պայմանավորված կառավարման ու քաղաքականության բնագավառներում տեղեկատվության անընդհատ աճող նշանակությամբ և արժեքով» (Завадский И. И., Информационная война- что это такое?):

Նման բնորոշման դեպքում տեղեկատվական պատերազմի գործունեության դաշտը շատ է լայնանում, իր մեջ ընդգրկելով հետևյալ ոլորտները.

- պետության կենսագործունեությունն ապահովող ենթակառուցվածքների համակարգը՝ հեռահաղորդակցությունը, տրանսպորտային ցանցերը, էլեկտրակայանները, բանկային համակարգերը և այլն,

- արդյունաբերական լրտեսությունը. արտոնագրված տեղեկատվության հափշտակումը, հատկապես կարևոր տվյալների ու ծառայությունների կեղծումը կամ ոչնչացումը, մրցակիցների մասին հետախուզական տեղեկատվության հայթայթումը և այլն,

- բանկային հաշիվների, գաղտնի տվյալների օգտագործումը, ապատեղեկատվության տարածումը,

• զինվորական օբյեկտների ու համակարգերի կառավարման գործընթացներին էլեկտրոնային միջամտությունը, ռազմական հաղորդակցության ցանցերի շարքից դուրս բերումը,

• Ինտերնետ համաշխարհային ցանցի ինտենսիվ օգտագործում, որում, ըստ որոշ տվյալների, գործում են 150000 ռազմական համակարգիչներ: Հայտնի է նաև, որ զինվորական կապի գծերի 95%-ը անցնում է բաց հեռախոսային գծերով:

Ինչ իմաստ էլ որ հաղորդվի «տեղեկատվական պատերազմ» հասկացությանը, այն ծագել է ռազմական միջավայրում և առաջին հերթին նշանակում է վճռական ու վտանգավոր գործողություններ՝ կապված իրական ռազմական իրավիճակների հետ: Ձինվորական փորձագետները, ձևակերպելով տեղեկատվական պատերազմի դոկտրինը, պարզորոշ նախանշել են նաև դրա առանձին բաղադրիչները.

- շտաբային պատերազմ,
- էլեկտրոնային պատերազմ,
- հոգեմետ (փսիխոտրոն) պատերազմ,
- տեղեկատվական-հոգեբանական պատերազմ,
- կիբեռնետիկական պատերազմ և այլն:

Ընդհանուր առմամբ, զինվորականները տեղեկատվական պատերազմին մոտենում են այնպես, ինչպես ձևակերպված է ԱՄՆ պաշտպանության փոխնախարարների և զինված ուժերի շտաբների պետերի կոմիտեի 1993թ. թիվ 30 հուշագրում: Տեղեկատվական պատերազմը ենթադրում է գործողություններ, որոնք ձեռնարկվում են ազգային ռազմավարությանը աջակցելու նպատակով հակառակորդի տեղեկատվության և տեղեկատվական համակարգերի վրա ներգործության միջոցով տեղեկատվական գերազանցության հասնելու համար՝ սեփական տեղեկատվության և տեղեկատվական համակարգերի անվտանգության ու պաշտպանության միաժամանակյա ապահովման պայմաններում:

Տեխնիկական տեղեկատվական պատերազմի վարման հիմնական ձևերը հանդիսանում են ռադիոէլեկտրոնային պայքարը, էլեկտրոնային հետախուզության միջոցների օգտագործմամբ պատերազմը, հոգեմետ պատերազմը, պայքարը հակերների դեմ, կիբեռնետիկական պատերազմը:

Տեղեկատվական պատերազմների վարման տեխնիկական միջոցների կիրառման փայլուն օրինակ կարող է հանդիսանալ ԱՄՆ-ում մշակված գլոբալ հետախուզական «էշելոն» ցանցը, որն ընդունակ է ընդգրկելու հաճախականությունների շատ մեծ դիապազոնում գործող ռադիոէթերի հոսքերը: Հատուկ հզորագույն համակարգիչները հնարավորություն են տալիս առանցքային բառերով զտել տեղեկատվությունը, մշակել և պահպանել տվյալների բանկում:

1993թ. ԱՄՆ-ում ստեղծված Անվտանգության հանձնաժողովը եկավ այն եզրակացության, որ ներխուժումը տեղեկատվական համակարգեր և ցանցեր կարևորագույն սպառնալիք է անվտանգությանը: Տեղեկատվական տեխնոլոգիաները թույլ կտան լուծել աշխարհաքաղաքական ճգնաժամերը՝ չկրակելով ոչ մի փամփուշտ: Ամերիկյան հանձնաժողովը նմանապես նշել է. «Ազգային անվտանգության ապահովման մեր քաղաքականությունները և դրանց իրականացման գործընթացները պետք է ուղղված լինեն տեղեկատվական պատերազմներ վարելու մեր հնարավորությունների զարգացմանը և ԱՄՆ-ի հետ հակամարտող երկրների կողմից նման պատերազմներ վարելու կամխմանը»:

Սակայն համակարգչային անվտանգության ամերիկյան ինստիտուտի մասնագետները գտնում են, որ տեղեկատվական պատերազմը, վերջին հաշվով, ուղղված է համաշխարհային տնտեսությանը: Հետևաբար, տեղեկատվական պատերազմի նպատակները բացարձակապես այլ են, քան սովորական պատերազմներիինը. ոչ թե հակառակորդի ֆիզիկական ոչնչացում և նրա զինված ուժերի լիկվիդացում, կարևոր ռազմական ու տնտեսական օբյեկտների քայքայում, այլ ֆինանսական, տրանսպորտային, հաղորդակցության ցանցերի ու համակարգերի աշխատանքների լայնածավալ խափանում, տնտեսական ենթակառուցվածքի մասնակի ոչնչացում և տեղեկատվական գրոհի ենթարկվող տարածքի ազգաբնակչության ենթարկում գրոհը նախաձեռնող երկրի կամքին:

Ձևական խաղաղության և, այսպես կոչված, լուկալ պատերազմների պայմաններում շատ արդյունավետ է կոնսցիենտալ պատերազմը, որի դեպքում գրոհների և ոչնչացման օբյեկտ են դառնում գիտակցության որոշակի տեսակները: Մարդկային գիտակցության ոչնչացման հիմնական եղանակներն են.

- մյարդա-գլխուղեղային սուբստրատի ախտահարումը, որի դեպքում

նեղանում է գիտակցության գործառուփային տիրույթը: Առաջանում է քիմիական նյութերի, օդի և սննդի թունավորման և ռադիոակտիվ ներգործության արդյունքում,

- ապահիտեզման և պարզունակեցման հիման վրա տեղեկատվական-հեռահաղորդակցության միջավայրի կազմակերպվածության մակարդակի իջեցումը (օրինակ, զանգվածային մշակույթի քարոզում),

- գիտակցության աշխատանքը կազմալուծող կերպարների ու տեքստերի հատուկ ընտրությունն ու հաղորդակցության միջոցներով դրանց լայնածավալ տարածումը (հոգեմետ զենք),

- ՁԼՄ-ների միջոցով գիտակցությունը մանիպուլյացիայի ենթարկող մեխանիզմների կիրառումը:

Կոնսցիենտալ պատերազմի հիմնական նպատակը ազգաբնակչության հատվածավորումն է, ազգի, որպես միասնական ընդհանրության, ընկալելիության աստիճանի նվազումը:

Այսօր գրոհող տեղեկատվական զենք կարելի է համարել.

- համակարգչային վիրուսները, որոնք ընդունակ են բազմանալու, ծրագրերի մեջ ներդրվելու, կապի գծերով տարածվելու, կառավարման համակարգերը շարքից դուրս հանելու և այլն,

- տրամաբանման ռումբերը, որոնք նախապես ներդրվում են ռազմական կամ քաղաքացիական ենթակառուցվածքների տեղեկատվական-կառավարման համակարգերում ու կենտրոններում, որպեսզի ըստ ազդանշանի կամ նախանշված ժամանակ գործի դրվեն և խափանեն այդ մեխանիզմների բնականոն գործունեությունը,

- թեստային ծրագրերի չեզոքացման միջոցները,

- օբյեկտի ծրագրային ապահովման մեջ նախապես ներմուծված տարաբնույթ սխալները:

Տեղեկատվական պատերազմների դարաշրջանում շրջանառության մեջ են դրվում նոր հասկացություններ, որոնցից մեկն էլ «գլոբալ տեղեկատվական շրջապատ» հասկացությունն է: Հենց դա է ազդում քաղաքական ու ռազմական որոշումների ձևավորման վրա, քանի որ նպաստում է ժամանակի իրական մասշտաբում դրանց լուսաբանմանը: Որպես օրինակ կարելի է բերել CNN հեռուստաընկերության գործունեությունը, որը վերջին ժամանակների պատերազմական գործողությունները ներկայացնում էր իրական ժամանակային կտրվածքում: Ամերիկյան պաշտոնական ռազ-

մական փաստաթղթերը հաստատում են, որ «գլոբալ տեղեկատվական տարածությունը հանդիսանում է տեղեկատվության այնպիսի կարևոր սկզբնաղբյուր, որ հարկավոր է այն ուշադրության կենտրոնում պահել ապագա բոլոր պատերազմների ժամանակ» (Concept for Information Operations):

Սակայն ձևավորվող տեղեկատվական հասարակության պայմաններում ԱՄՆ-ը չի կարող հաջողությամբ դիմակայել տեղեկատվական պատերազմի իր բոլոր հակառակորդներին, ելնելով հետևյալ նկատառումներից.

- քանի որ ԱՄՆ-ը հանդիսանում է բաց հասարակություն և չի կարող կոշտ մեթոդներ կիրառել տեղեկատվական ցանցերի նկատմամբ, այն խոցելի է,

- դեռևս պարզաբանված չեն տեղեկատվական պատերազմների քաղաքական և իրավական բոլոր ասպեկտները,

- ամերիկյան բազմակարծությունը թույլ չի տալիս մշակել միասնական քաղաքականություն տեղեկատվական պատերազմների ռազմավարության ոլորտում:

Այս ամենը մեկ անգամ ևս վկայում է տեղեկատվական պատերազմների հիմնախնդիրների առանձնահատկության մասին, որը կապված է դրա օբյեկտների՝ տեղեկատվության ու մարդու, յուրահատկությունների հետ:

ԱՄՆ-ում իրերի նման դրվածքը Հայաստանին ստիպում է լրջորեն մտածել գոյություն ունեցող տեղեկատվական և, որպես հետևանք, ազգային անվտանգության իրական վտանգների մասին և համապատասխան միջոցառումներ ձեռնարկել պետության տեղեկատվական ենթակառուցվածքը և տեղեկատվական տարածությունը պաշտպանելու ուղղությամբ: Այդ կապակցությամբ առանձնահատուկ արդիականություն են ստանում իրավական բնույթի խնդիրները, որոնց լուծումը պետք է որոշի ազատ խոսքի և գաղտնիության, գլոբալ տեղեկատվական տարածության թափանցիկության ու պետության տեղեկատվական անվտանգության հարցերի միջև հարաբերությունները: Տեղեկատվական ոլորտի իրավական կարգավորման հարցերը Հայաստանում դեռևս սպասում են իրենց լուծմանը:

Համառոտակի ներկայացնենք, թե որոշ երկրներում տեղեկատվական պատերազմի նկատմամբ ինչպիսի՞ մոտեցումներ գոյություն ունեն:

## **Ռուսաստանի Դաշնություն**

Մինչև վերջերս Ռուսաստանում գոյություն չուներ այդ հիմնախնդրին վերաբերող հստակ պետական դիրքորոշում: Միայն 2000թ. ՌԴ նախագահի կողմից ստորագրվեց Ռուսաստանի տեղեկատվական անվտանգության դոկտրինը: Ի տարբերություն տվյալ հարցի վերաբերյալ ամերիկյան մոտեցմանը, ռուսաստանյան դոկտրինում առաջին պլան է մղվել անհատական, խմբային և հասարակական գիտակցության տեղեկատվական անվտանգության ապահովումը: Դոկտրինի հիմնական դրույթները իրականացնելու և տեղեկատվական անվտանգություն ապահովելու նպատակով ՌԴ անվտանգության խորհրդում ստեղծվել է տեղեկատվական անվտանգության վարչություն: Այսօր ՌԴ տեղեկատվական անվտանգության խնդիրներով զբաղվում են նաև պաշտպանության նախարարությունը, կառավարական կապի ու տեղեկատվության համադաշնային գործակալությունը, անվտանգության դաշնային ծառայությունը և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում իրականացվող հանցագործությունների բացահայտմամբ զբաղվող ներքին գործերի նախարարության “?” վարչությունը:

## **Ամերիկայի Միացյալ Նահանգներ**

Ամերիկյան վարչակազմի գործունեությունը տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում սկզբնավորվել է 1996թ. Ճգնաժամային ենթակառուցվածքի պաշտպանության նախագահական հանձնաժողովի ձևավորմամբ: Այդ հանձնաժողովի հաշվետու զեկույցն ի հայտ բերեց տեղեկատվության ոլորտում ԱՄՆ-ի խոցելի կողմերը: Աշխատանքի արդյունքները հիմք հանդիսացան ճգնաժամային ենթակառուցվածքի տեղեկատվական անվտանգության ապահովման կառավարական քաղաքականության համար, որն իր ձևակերպումը ստացավ նախագահի թիվ 63 դիրեկտիվում (PDD-63):

Դիրեկտիվի ցուցումներն իրականացնելու նպատակով մշակվեց ԱՄՆ տեղեկատվական համակարգերի պաշտպանության ազգային պլանը: Պլանի իրագործման համար պետական բյուջեից հատկացվել է 2.03 մլրդ ԱՄՆ դոլար:

Այդ ուղղությամբ պաշտպանության նախարարության իրականացրած

կարևորագույն նախագծերից է համակարգչային դատական լաբորատորիայի (DCFL) ստեղծումը, որի հիմնական խնդիրն է համակարգչային հանցագործությունների բացահայտումը: Տեղեկատվական համակարգերը և համակարգիչները պաշտպանելու նպատակով ստեղծվեց պաշտպանության նախարարության համակարգչային ցանցի միավորված օպերատիվ խումբ (JTF-CND): 2000թ.-ից պաշտպանության նախարարությունը ձեռնարկել է նաև դաշնակիցների հետ համագործակցության միջոցառումներ:

Անժխտելի է, որ ամերիկյան իշխանությունները տեղեկատվական անվտանգության ոլորտում իրականացնում են զգալի աշխատանքներ, որոնք սակայն դեռևս բարձր արդյունավետություն չեն ապահովում:

Ինտերնետի միջոցով ազատ հասանելի տեղեկատվական հոսքերի առատությունը թույլ է տալիս ենթադրություն անել այն մասին, որ ԱՄՆ տեղեկատվական անվտանգության մակարդակը, չնայած իրականացված հսկայածավալ միջոցառումներին, աննշան է: Համաձայն ԱՄՆ վարչակազմի մի շարք ներկայացուցիչների հայտարարությունների, տեղեկատվական անվտանգության ապահովման ստեղծված համակարգը աչքի է ընկնում չափից դուրս դանդաղաշարժությամբ: Մի շարք դեպքերում աշխատանքների արդյունավետ ընթացքը խոչընդոտվում է բյուրոկրատական արգելքների հետևանքով: Առաջադրված նպատակների իրագործման հարցում էական արգելակիչ է տեղեկատվական անվտանգության ոլորտի բարձրակարգ մասնագետների պակասը:

## **Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն**

Չինաստանն արդեն վաղուց է «տեղեկատվական պատերազմ» տերմինը դրել ռազմա-քաղաքական շրջանառության մեջ: Տեղեկատվական պատերազմի չինական հայեցակարգն ընդգրկում է պատերազմի մասին չինական յուրօրինակ պատկերացումներն ընդհանրապես: Տեղեկատվական պատերազմը բնորոշվում է որպես անցում ինդուստրիալ պատերազմից դեպի որոշումների ընդունման և կառավարման ոճի, գիտելիքների և ինտելեկտի պատերազմի: Չինաստանը զարգացնում է ցանցային ուժերի հայեցակարգը, որոնք բաղկացած կլինեն բարձրորակ համակարգչային փորձագետներից:

## **Մեծ Բրիտանիա**

Տեղեկատվական պատերազմի մասին բրիտանական մոտեցումները նման են ամերիկյանին: Բացի դրանից, Մեծ Բրիտանիան օգտագործում է իրավական կառուցվածք՝ Regulation of Investigatory Powers Act (RIP): Այն ենթադրում է, որ հարձակումը տեղեկատվական համակարգերի վրա կարող է դիտարկվել որպես սովորական քրեական հանցագործություն, այստեղից բխող հետևանքներով: Վերոնշյալ ակտը բրիտանական կառավարությանը թույլ է տալիս գրանցել և կարդալ քաղաքացիների էլեկտրոնային փոստը, ինչպես նաև պետական պաշտոնյաների պահանջով վերծանել անձնական ֆայլերը:

## **Գերմանիա**

Ընդհանուր գծերով տեղեկատվական պատերազմի գերմանական պատկերացումները մոտ են ամերիկյանին ու բրիտանականին: Դրա հետ մեկտեղ, Գերմանիան տվյալ խնդրին ավելի համակարգված մոտեցում է ցուցաբերում: Սպառնալիքների ու հավանական պատասխանների որոշման ժամանակ արտասահմանյան պետություններն առանձին են դիտարկվում ոչ պետական կազմավորումներից (քաղաքական կուսակցություններ, միջազգային կազմակերպություններ, ՁԼՄ-ներ), հանցավոր խմբավորումներից և անհատներից: Գերմանիան ՁԼՄ-ների կառավարումը դիտարկում է որպես տեղեկատվական պատերազմի կարևոր բաղկացուցիչ տարր: Բացի այդ, Գերմանիան առանձին սահմանում է մտցրել տնտեսական տեղեկատվական պատերազմի համար:

## **Ֆրանսիա**

Ֆրանսիացիները տեղեկատվական անվտանգության հայեցակարգը բաղադրում են երկու բաղադրիչների՝ ռազմական ու տնտեսական կամ քաղաքական: Ռազմական հայեցակարգը ենթադրում է տեղեկատվական օպերացիաների որոշակի սահմանափակ դեր: Այդ ենթատեքստում դաշնակիցները չեն դիտարկվում որպես հակառակորդներ: Ընդհակառակը, տնտեսական հայեցակարգը ընդգրկում է տեղեկատվական օպերացիաների կիրառման ավելի լայն դիապազոն: Այդ կտրվածքով ֆրանսիացիներն իրենց կաշկանդված չեն զգում ՆԱՏՕ-ի, ՄԱԿ-ի և միջազգային այլ

կառույցների շրջանակներում: Տնտեսական կոնֆլիկտների նկատմամբ նրանց մոտեցումը թույլ է տալիս միաժամանակ լինել և՛ դաշնակից, և՛ հակառակորդ: Կիբեռտարածությունում քաղաքացիների նկատմամբ վերահսկողություն սահմանելու համար Ֆրանսիան ակտիվորեն ձևավորում է կառուցվածքներ:

## **ՆԱՏՕ**

Ըստ հաղորդագրությունների, գոյություն ունի տեղեկատվական պատերազմի ՆԱՏՕ-ի սահմանումը, որը խիստ գաղտնի է պահվում: Միաժամանակ հայտնի է, որ այդ սահմանումը շատ գծերով նման է ամերիկյանին:

Վերը շարադրվածից երևում է, որ աշխարհի շատ երկրներ արդեն իսկ ստեղծում են տեղեկատվական ագրեսիայից և ամերիկյան մշակութային էքսպանսիայից պաշտպանվելու համակարգեր: Նույն Ֆրանսիայում, օրինակ, հեռուստատեսությամբ թույլատրվում է ցույց տալ ոչ ավել, քան ընդհանուր քանակի 50%-ը կազմող արտասահմանյան ֆիլմեր: Մեր երկիրը այդ ոլորտում դեռևս չի ձեռնարկել էական քայլեր իր քաղաքացիներին պաշտպանելու համար:

Հաշվի առնելով տեղեկատվական ներգործության բարդությունն ու առանձնահատկությունը, ՀՀ անվտանգությունն ապահովելու նպատակով կենսականորեն անհրաժեշտ է ունենալ հատուկ կոորդինացնող-ղեկավարող կառույց, որը կկարգավորի տեղեկատվական ոլորտի խնդիրները:

Ի հայտ եկող խնդիրների արդյունավետ լուծման համար անհրաժեշտ է միավորել ուժերը տեղեկատվական պատերազմների և տեղեկատվական անվտանգության ապահովման հարցերի գիտական հետազոտման, ինչպես նաև հետազոտող կադրերի պատրաստման ուղղությամբ:

### ***4.4 Տեղեկատվական անվտանգության սոցիալ-հոգեբանական կողմերը***

Իր գործունեության ընթացքում մարդու կողմից սոցիալ-տեղեկատվական տեխնոլոգիաների լայնորեն կիրառումն ակտիվ ազդեցությունն է թող-

նում ոչ միայն հասարակության վրա, այլ նաև մասնակցում է անհատի ձևավորմանը: Մարդը, որպես հասարակական զարգացման անմիջական մասնակից, այսօր ստանձնել է հանրություն ընթացող գործընթացների յուրօրինակ կատալիզատորի դեր: Մարդկային գործունեության սոցիալական, տնտեսական, քաղաքական և այլ ոլորտներում կուտակված անբարենպաստ գործոնները իրենց հետքն են թողնում մարդկային գենոֆոնդում: Դա վնասում է ոչ միայն ներկայումս ապրող մարդուն, այլ նաև նախադրյալներ է ստեղծում ապագա սերունդների ոչ ներդաշնակ զարգացման համար:

Ժամանակակից կյանքի տեղեկատվական դաշտի տարողության ընդլայնումը մարդուց պահանջում է հոգեբանական լուրջ պատրաստվածություն: Մարդու ամենօրյա կենսագործունեության ընթացքում տեղեկատվական հոսքերը հաճախ ծանրաբեռնվում են ավելորդ «աղմուկներով», որոնք կարող են հանգեցնել անհատական գիտակցության կողմից ոչ ճիշտ եզրահանգման: Նման ենթադրությունների հետևանքները մարդկային գործունեության ոլորտում կարող են բերել սխալ լուծումների: Այդ կապակցությամբ էլ անհատի ամենօրյա և մասնագիտական գործունեության ոլորտներում նրա անվտանգ տեղեկատվական վարքի հիմնախնդիրը մասնագետների շրջանում մեծ հետաքրքրություն է առաջացնում:

Տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրը նոր չէ: Բայց մինչև վերջին ժամանակներս այն մասնագետների և հասարակության կողմից մեկնաբանվում էր որպես համակարգչային համակարգերի ու ցանցերի անվտանգ գործունեության ռեժիմի հետ կապված հարցերի համալիր: Հասարակության տեղեկատվայնացման հաջողությունները պահանջում էին ներդնել ոչ միայն տեղեկատվական պաշտպանության տեխնիկական միջոցներ, այլ նաև հասարակության սոցիալական գործընթացների իրավական կարգավորման տեխնոլոգիաներ և տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրների նկատմամբ սոցիոմշակութային մոտեցման դրսևորումներ:

Ժամանակակից Հայաստանի իրողությունները քաղաքացիների համար ստեղծել են վտանգների ու սպառնալիքների արտակարգ լայն և բազմաբնույթ շրջանակ, որոնք մեծամասամբ ունեն տեղեկատվական բնույթ կամ մարդու վրա ներգործում են տեղեկատվական ուղիների օգնությամբ: Հասարակության մեջ անբարեխիղճ մրցակցային հարաբերությունների

հետևանքով առաջացող անհատի տեղեկատվական սպառնալիքների գիտակցումը և դրանց նկատմամբ հակազդեցության անհրաժեշտությունը մեծ հետաքրքրություն է առաջացնում: Ավելի ու ավելի շատ անհատական բնույթի տեղեկատվություն հայտնվելով տվյալների բազայում՝ օտարվում է մարդուց: Առավել սուր է դրվում սուբյեկտի կողմից չթույլատրված նպատակներով և գործունեության ոլորտներում անհատական տվյալների օգտագործման նկատմամբ վերահսկողության խնդիրը: Օրինակ, ԱՄՆ-ում ներկայումս գոյություն ունեն տեղեկատվության պաշտպանությունն ապահովող 500 օրենսդրական ակտեր: Ավելի հաճախ է ոչ բարեխիղճ մրցակցության, անհատական ու գաղտնի տեղեկատվության չարաշահման օրինակներով լրացվում սոցիալական վիճակագրությունը:

Վտանգների լայն շրջանակ է ծնում սոցիալական միջավայրը, որում ընթանում է յուրաքանչյուր անհատի ամենօրյա կյանքը: Սոցիալական ինստիտուտների ամբողջությունը, որի հիմնական առաքելությունը սոցիալական պաշտպանությունն է, նպատակաուղղված չէ նշված վտանգների ու սպառնալիքների կանխարգելմանը: Սովորական մարդը կարող է դառնալ անբարեխիղճ կամ ուղղակի անտարբեր չինովնիկների, արկածախնդիրների, խարդախների, անորակ ծառայություններ մատուցող ֆիրմաների կամ սոցիալական հաղորդակցության ալիքներով ակնհայտ սուտ և թերի տեղեկատվության տարածման զոհը: Նա կարող է դառնալ նաև քաղաքական կուսակցությունների, լոբբիստական խմբերի մանիպուլյացիայի օբյեկտ:

Այս հիմնախնդիրը խորանում է նրանով, որ հասարակությունում, պատմականորեն ձևավորված սոցիոմշակութային ավանդույթների ազդեցության ներքո, նման իրավիճակները դառնում են ամենօրյա կյանքի չափանիշ: Խնդրի լրջությունը և վտանգավորությունը մեծանում է նման իրավիճակների կանխմանը վերաբերող տեղեկատվության մասնակի կամ լրիվ բացակայությամբ զանգվածային լրատվության միջոցներում և պետության կողմից պատշաճ վերահսկողության չիրականացմամբ: Այդ պատճառով էլ շարքային քաղաքացին մնում է դեմ առ դեմ սեփական անվտանգության հիմնախնդիրների հետ:

Տեղեկատվական բնորոշ վտանգներից է այնպիսի իրավիճակների ստեղծումը, երբ մարդու վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է դառնում անձանց, որոնք ոչ մի առնչություն չունեն դրանց հետ: Կազմա-

կերպությունները, որոնք տնօրինում են քաղաքացիներին վերաբերող տեղեկատվությունը, տարաբնույթ են և սովորաբար չեն ապահովում այդ տվյալների գաղտնիությունը: Բացի դրանից, չպետք է մոռանալ նաև նմանօրինակ տեղեկատվության ստացման հանցագործ եղանակների մասին: Եվ չնայած պետությունը, իրավապաշտպան օրգաններն ու ծառայությունները իրականացնում են օպերատիվ միջոցառումներ, պաշտպանում են քաղաքացիներին քրեական և այլ հանցագործությունների դեպքում, սակայն սոցիալական վտանգների ու հիմնախնդիրների լայն շրջանակը չի մտնում դրանց իրավասության մեջ:

Ժամանակակից տեղեկատվական ենթակառուցվածքի ձևավորումը (տեղեկատվության օպերատիվ կուտակման և մշակման համակարգեր, տվյալների բազաներ ու բանկեր, ցանցային ու հեռահաղորդակցության տեխնոլոգիաներ) լրացուցիչ հնարավորություններ է ստեղծում անձնական ու այլ բնույթի գաղտնի տեղեկատվությունից առանց թույլտվության օգտվելու համար: Վերջին ժամանակներս հաճախակի են դարձել հեռահաղորդակցության ցանցերին չթույլատրված միացումների դեպքերը: Լայնորեն օգտագործվող մոբիլ կապի միջոցները նույնպես հանդիսանում են տեղեկատվության հավաքման պոտենցիալ սկզբնաղբյուր: Այդ պատճառով էլ հեռախոսագրույցների, փեյջերով հաղորդակցման ժամանակ մարդիկ անընդհատ պետք է հիշեն երրորդ անձանց կողմից այդ հաղորդակցություններին հետևելու հնարավորության մասին: Հենց անհատի զգոնությունը կարող է երաշխավորել նրա անվտանգությունը ամենօրյա կյանքում: Նման իրավիճակներում հեռանկարային արդյունավետ միջոցառում է հակազդեցության հնարավոր մեթոդների վերաբերյալ բնակչությանը տեղեկատվության տրամադրումը:

Քաղաքացու իրավունքների և ազատությունների իրավական պաշտպանությունից զատ պետությունը պետք է իր վրա վերցնի նաև շարքային քաղաքացուն պատշաճ ձևով տեղեկատվություն տրամադրելու նկատմամբ վերահսկողության իրականացումը: Ընդ որում, նմանօրինակ տեղեկատվության տարածումը պետք է իրականացվի ոչ միայն հասարակության պահանջով, այլ նաև պետության նախաձեռնությամբ, սոցիալական պաշտպանության և անվտանգության ոլորտներում քաղաքացիների լուսավորման ծրագրերի շրջանակներում:

Պետությունը պետք է ակտիվ մասնակցություն ցուցաբերի նաև երիտա-

սարդության մոտ տեղեկատվական մշակույթի ձևավորման գործում, նպաստելով տեղեկատվայնացված քաղաքացիների քանակական աճին և կայուն որակական գծերով անհատների կայացմանը:

Պետության կողմից բնակչությանն անհրաժեշտ տեղեկատվական ապահովումը պետք է դառնա հասարակական գործընթացների կայունացման պայման:

Տեղեկատվական միջոցառումներին զուգահեռ պետությունը պետք է իրականացնի նաև կազմակերպչական ձեռնարկումներ: Վերջին տասնամյակում ակտիվացել է անբարեխիղճ մրցակցության վտանգներին ու սպառնալիքներին հակազդեցության ծառայություններ մատակարարող շուկան: Այդպիսի ծառայությունները նվազագույնի են հասցնում անհատական տեղեկատվության օգտագործման ռիսկը: Սակայն նմանօրինակ ծառայությունները բավականին թանկ են և հավանական է, որ ազգաբնակչության մեծամասնությունը չի կարողանա օգտվել դրանցից: Պետության կարևորագույն գործառույթներից պետք է հանդիսանա նաև մասնագիտացված կառույցների ստեղծումը, որոնք այդ ծառայությունները մատչելի պայմաններով կմատակարարեն հասարակության լայն շերտերին:

Տեղեկատվական անվտանգությունը չի նույնացվում համակարգչային անվտանգության հետ, ինչպես և տեղեկատվայնացումը չի նույնացվում համակարգչայնացման հետ: Համակարգչային անվտանգությունը վերաբերում է սոսկ սաքոտաժից, շահագործման տեխնիկական կանոնների խախտումից, տարերային աղետներից, կանխատեսված կամ պատահական վնասից և այլ հանգամանքներով պայմանավորված գործոններից համակարգչային սարքավորումների ու դրանցում կուտակված տեղեկատվության պաշտպանությանը: Տեղեկատվական անվտանգությունը, որպես կարևորագույն բաղադրիչ իր մեջ ներառելով նաև համակարգչային անվտանգությունը, տարածվում է սոցիալական այն բոլոր գործընթացների վրա, որոնցում գործում և օգտագործվում է տեղեկատվությունը: Դա սոցիալական համակարգի, ըստ էության, ողջ քաղաքակրթության տեղեկատվական գործընթացների և հասարակության տեղեկատվայնացման այնպիսի զարգացումն ապահովող հատկություն է, որը երաշխավորում է մարդկության հետագա գոյատևման և առաջընթացի տեղեկատվական պայմանների գոյությունը: Այլ խոսքերով, տեղեկատվական անվտանգությունը տարածվում է հանրույթի տեղեկատվական ոլորտի այն բոլոր



երևույթների վրա, որոնք ուղղակիորեն կամ միջնորդավորված նպաստում են հասարակական համակարգի օպտիմալ զարգացմանը:

Տեղեկատվական հասարակության մեջ, հաղորդակցության ցանցերում համակարգիչների ավելի ու ավելի լայնորեն օգտագործմանը զուգընթաց, տարբերությունը սոցիալական տեղեկատվության և հաղորդակցության միջև կարծես թե վերանում է: Տեխնոլոգիապես այդ երկու երևույթները միահյուսվում են մեկ մոդելի մեջ: Այս իրավիճակում ծագող հիմնական խնդիրներն ունեն իրավական, բարոյագիտական ու տնտեսական բնույթ: Կարևորագույն ասպեկտը քաղաքականն է, քանի որ տեղեկատվությունն իշխանությունն է, իսկ դրանից օգտվելը՝ ազատության նախապայման: Նույնիսկ այն երկրներում, որտեղ տեղեկատվայնացման մակարդակը բավականաչափ բարձր է, տեղեկատվությունից ու գիտելիքներից օգտվելու ազատությունն օգտագործվում է ոչ միայն մարդասիրական նպատակներով, այլ նաև ընդդեմ մարդու: Հակաիրավական և անբարոյական դեպքերը բազմաթիվ ու բազմատեսակ են: Առաջին հերթին դրանք վերաբերում են «էլեկտրոնային» կողոպուտներին, այսինքն՝ էլեկտրոնային հաշվիչ մեքենաների օգնությամբ ֆինանսական միջոցների գողությանը: Աշխարհում իրականացվող զինված կողոպուտներն իրենց մասշտաբով անհամեմատելի են «էլեկտրոնային» կողոպուտների հետ, որոնց հետևանքով միլիարդավոր դոլարներ փոխանցվում են բանկային մեկ հաշվից մեկ այլ հաշիվ, մեկ երկրից մեկ այլ երկիր: Տեղեկատվության ոլորտի բարձրակարգ մասնագետը, հետապնդելով այդ կարգի նպատակներ, ի վիճակի է իրականացնել այնպիսի գործեր, որոնք, ըստ էության, արժանի կլինեին Մաքիավելու հայտնի բնորոշմանը: Միայն ԱՄՆ-ի բանկերը տարեկան կորցնում են տասնյակ միլիարդավոր դոլարներ, որը համեմատելի է համակարգչային տեխնիկայի օգտագործումից ստացվող տնտեսական արդյունավետության հետ: Այսօր բիզնեսի բնագավառում իրականացվող հանցագործությունների կեսը կապված է տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման հետ:

Տեղեկատվական անվտանգության անբավարար ապահովման հետ կապված տեղեկատվայնացման բացասական հետևանքներից է, այսպես կոչված, համակարգչային ահաբեկչությունն ու խուլիգանությունը: «Հեռախոսային ֆանատիկոս», «հակեր», «կրեկեր» արտահայտությունները դարձել են թե առօրյա խոսակցությունների, թե մասնագիտական քննար-

կումների հիմնական թեմա: Եթե հակերները ներթափանցում են համակարգչային համակարգերի հիշողությունների մեջ անձնական ամբիցիաները բավարարելու նպատակով, ապա կրեկերները՝ նաև տեղեկատվական բանկերը տնօրինելու նպատակով: Այդ կարգի «մասնագետները» խիստ վտանգավոր են մարտական հրթիռների, տիեզերական ու միջուկային սարքավորումների հեռակառավարումն իրականացնող տեղեկատվական համակարգերի համար:

Պակաս վտանգավոր չէ նաև համակարգիչների, հատկապես անձնական օգտագործման, ազդեցությունը մարդու առողջության ու հոգեբանության վրա:

Նախ, էլեկտրոնային հաշվիչ մեքենա օգտագործողների մեծամասնության մոտ խիստ բարձր է ճառագայթման նորման համակարգչի մոնիտորից: Դիսփլեյը հեռուստացույցից ուժեղ է ազդում տեսողության վրա, առաջացնում մտավոր ծանրաբեռնվածություն ու ներվային համակարգի հյուծում, նպաստում հոգեկան հիվանդությունների առաջացմանը: Այսօր ոչ ոք չի կարող ասել, թե ինչ ազդեցություն է թողնում համակարգիչը կենսոլորտի ու կենդանի օրգանիզմների վրա:

Երկրորդ, անձնական օգտագործման համակարգիչների և էլեկտրոնիկայի մյուս նվաճումների տարածումը կնպաստի մարդկանց մեջ ինդիվիդուալիզմի հոգեբանության զարգացմանը և կոլեկտիվիզմի սկզբունքների խաթարմանը: Այդ զգուշացումը հիմնազուրկ չէ. անձնական օգտագործման համակարգչային և այլ տեղեկատվական տեխնիկայի օգտագործումը, իրոք, սահմանափակում է մարդկանց միջև շփումը, կարող է մարդուն կտրել իրականությունից, ստեղծել իրականությանը փոխարինող արհեստական միջավայր և դրանով ուժեղացնել սոցիալական ինքնամեկուսացումը:

Ամփոփելի է, որ համակարգչային վտանգների էությունը գտնվում է ոչ միայն տեխնիկայի ու տեղեկատվության ոլորտում, այլ նաև կոնկրետ հասարակական միջավայրում, որտեղ դեռևս պահպանվում են սոցիալական շեղումների այս կամ այն ձևերը, որոնք և կփոխանցվեն տեղեկատվական հասարակությանը:

Միաժամանակ, տեղեկատվական տեխնիկայի ու տեխնոլոգիայի առանձնահատկություններից բխող վտանգները մարդու համար ակնհայտ են: Սոցիալ-տեղեկատվական այդ վտանգների վրա ուշադրություն են

դարձնում շատ հեղինակներ: Օրինակ, Ա. Քինգը գրում է. «Չմայած էլեկտրոնային հաղորդակցության թեթևությանը, ծագում է մեկուսացման և օտարացման վտանգ, որը կարող է ծնել տեղեկատվական հասարակությունը տանը աշխատելու խրախուսման իր միտումներով ու կրթական համակարգերին և զվարճանքին վերաբերող տեղեկատվական հոսքերի գերհագեցվածությամբ, որոնց արդյունքում ընտանիքը կհեռանա հասարակության մյուս անդամների հետ անմիջական շփումներից»:

Համակարգչային վտանգները կանխատեսվել էին դեռևս կիբեռնետիկական գիտելիքների զարգացման սկզբնափուլում: Այսօր, կապված «բարեկամական» և ինտելեկտուալ համակարգիչների ի հայտ գալու և լայնորեն տարածվելու հետ, կիբեռնետիկական իր մեջ պարունակում է հասարակությունից անհատի մեկուսացման վտանգ, որը կարող է հանգեցնել նույնիսկ ընտանեկան կապերի խզման: Ամերիկացի հոգեթերապևտ Կ. Բրոդի կարծիքով, դա պայմանավորված է նրանով, որ տեխնոկենտրոնաձիգ անձիք ընտանիքում շփումը սահմանափակում են անհրաժեշտ նվազագույնով: Նրանք ձգտում են մեկուսանալ ոչ միայն նախկին ընկերներից, այլ նաև ընտանիքի անդամներից: Նրանց համար բուն շփումը ձեռք է բերում ուտիլիտար բնույթ՝ զրկված զգացմունքայնությունից ու մարդկային ջերմությունից: Տեղի է ունենում տեխնոկենտրոնաձիգ մարդկանց հայացքների ու տեսակետների փոփոխություն նույնիսկ սիրո և սեռական կյանքի ոլորտներում:

Երրորդ, համակարգչի օգտագործման ժամանակ ծագում է մի երևույթ, որին Կ. Բրոդն անվանում է տեխնոսթրես: Դա բացարձակ նոր, ժամանակակից ադապտացման հիվանդություն է և պայմանավորված է տեղեկատվական-համակարգչային ոչ սովորական տեխնոլոգիային առողջ վերաբերվելու անընդունակությամբ: Տեղեկատվական նոր տեխնոլոգիաների ադապտացման ու զարգացման հետ կապված առանձնանում են մի քանի գործընթացներ:

Նախ, դա մտավոր ծանրաբեռնվածությունն ու հոգնածությունն է, որի մակարդակը ավելի ու ավելի է մեծանում: Բացի դրանից, համակարգիչները կենտրոնացում են պահանջում, իսկ դա մեծացնում է սխալների քանակը, որոնք կարող են առաջացնել լուրջ հետևանքներ և որոնց ուղղման համար հաճախ ժամանակը չի բավականացնում:

Երկրորդ, դա մշտական վերահսկողությունն է, աշխատանքներին ու

դրանց որակին հետևելը: Աշխատողի աշխատանքային գործունեության սերտ կախվածությունը համակարգչից առաջացնում է ընդվզում, տեղեկատվական անպաշտպանվածության զգացում:

Երրորդ, դա համակարգչային աշխատանքի մեծակյաց բնույթն է, քանի որ այն բավականաչափ ինտենսիվացված է, որը իդեալական պայմաններ է ստեղծում սոցիալական ինքնամեկուսացման համար:

Վերջապես, որպեսզի պատասխան տրվի կենսականորեն կարևոր այն հարցերին, որոնք վերաբերում են մարդու վրա համակարգչի ունեցած ազդեցությանը, պետք է ջանասիրաբար ուսումնասիրել «համակարգչային հավատի կրեդոն», առանձնացնել հիպոթեթիկը իրականությունից, փաստը անիրականից: Չի կարելի չնշել, որ մտավոր ծանրաբեռնվածության ավելացմանը, աշխատաժամանակի խտացմանը զուգընթաց համակարգչային տեխնոլոգիայի հետ շփվողների մոտ ձևավորվում է հիասթափության զգացում, քանի որ համակարգչի իրական հնարավորությունները նրանց սպասումները հաճախ չեն արդարացնում:

Տեղեկատվայնացման ու համակարգչայնացման ևս մեկ առեղծվածն այն է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման հմտությունը խթանում է մտավոր ընդունակությունների զարգացումը միայն մեկ ուղղությամբ:

Տեղեկատվայնացման մյուս բացասական հետևանքը ինտելեկտուալների «անմեղ ահաբեկչությունն» է: «Էլեկտրոնային համաճարակները» առաջանում են «համակարգչային վիրուսներից», այսինքն՝ ծրագրերից, որոնցում բովանդակվում են լավ թաքնված հրամաններ, որ ընդունակ են ներթափանցել այլ ծրագրեր ու հիշողության բլոկներ, ոչնչացնելով դրանց:

Տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում բավականին անհանգըստացնող է քաղաքացիների «էլեկտրոնային հետապնդումը», այսինքն՝ հաղորդակցության եղանակների ձայնագրումն ու գաղտնալուծումը: ԱՄՆ-ում դրանով զբաղվում է, այսպես կոչված, Ազգային անվտանգության ծառայությունը, որն ունի 10000 աշխատակից: Դեռևս 1973թ. այդ ծառայությունը վերահսկել է 23 մլն հեռախոսագրույց: Տեղեկատվայնացումը և մեդիատիզացիան տվյալ դեպքում բերում են նրան, որ անձնական կյանքը, հանգիստը, վարքը և մարդկային բոլոր հատկանիշները ենթարկվում են կոպիտ ու ստիպողական նորմավորման:

#### 4.5 Տեղեկատվական անվտանգությունն արդի պայմաններում

Մարդկության զարգացման ներկա փուլի կարևորագույն միտումներից մեկը «տեղեկատվական հեղափոխությունն» է: Այդ գործընթացների արդյունքում ի հայտ եկող կտրուկ փոփոխությունները առաջացնում են լուրջ տեղաշարժեր մարդու կենսագործունեության բոլոր ոլորտներում: Ներկայումս զգալի կերպափոխումների ենթարկվող այդպիսի կարևորագույն ոլորտներից է տեղեկատվական ոլորտը: Այդ տեսանկյունից այսօր ցանկացած պետության արդիական հիմնախնդիրներից լրջագույնը տեղեկատվական անվտանգության հետ կապված խնդիրների ամբողջությունն է: Դա մեծապես պայմանավորված է հետևյալ գործոններով.

Նախ, ժամանակակից աշխարհում տեղեկատվությունը դարձել է առանցքային այնպիսի գործոն, որից արմատապես կախված են ցանկացած պետության գործունեության արդյունավետությունն ու զարգացման հեռանկարները:

Ներկա իրավիճակը բնութագրվում է հասարակական զարգացման գործընթացներում տեղեկատվության՝ որպես համընդհանուր առաջընթացի որակական կարևորագույն բաղադրիչի, դերի բարձրացմամբ: Ակնհայտ է, որ տեղեկատվական ճշգրիտ, հավաստի և արդիական տվյալների տիրապետումը կարևոր հանգամանք է կառավարչական վճռորոշ որոշումների ընդունման արդյունավետության գործում և ոչ միայն պետական մակարդակում: Այսինքն, տեղեկատվությունը վեր է ածվում ցանկացած պետության, հասարակական և միջազգային հարթություններում գործող սուբյեկտների ռազմավարական արժեքի:

Այդ պայմաններում տեղեկատվական համակարգի գործունեության, զարգացման և անվտանգության մակարդակը, ինչպես նաև այդ ոլորտի հարաբերությունների իրավական կարգավորման աստիճանը որոշում են պետության զարգացման հիմնական ցուցանիշները:

Տեղեկատվությունը, դառնալով ոչ պակաս ռազմավարական ռեսուրս, քան հողը, էներգիան, բնական և հումքային ռեսուրսները, իր նկատմամբ պահանջում է ուշադիր վերաբերմունք:

Ազգային տեղեկատվական ոլորտի ու հաղորդակցության նկատմամբ վերահսկողության և ազդեցության կորուստը կարող է պետության համար հանգեցնել բացասական հետևանքների: Մի շարք փորձագետներ ընդգ-

ծում են, որ այն կարող է նույնիսկ բերել պետական ինքնիշխանության կորստի:

Երկրորդ, տեղեկատվական անվտանգության վիճակը զգալի ազդեցություն է գործում պետությունների ընդհանուր անվտանգության հասարակական-քաղաքական, տնտեսական, պաշտպանական և այլ բաղադրիչների վրա:

Վերջին ժամանակներս տեղեկատվական ոլորտի բուռն զարգացումը գործնականում մեծ ազդեցություն է թողնում հասարակական կյանքի բոլոր բնագավառների վրա՝ առաջացնելով արմատական-որակական վերափոխումներ:

Տեղեկատվական նոր տեխնոլոգիաները փոխում են մարդկանց կենսակերպը: Դա պայմանավորված է նրանով, որ փոփոխվում են մարդու սոցիալական ակտիվությունը բնութագրող այնպիսի հիմնարար կատեգորիաների բնույթն ու բովանդակությունը, ինչպիսիք են հաղորդակցությունը և համատեղ գործունեությունը:

Այսօր տեղեկատվայնացման գործընթացները որոշակի աստիճանով ընդգրկել են պաշտպանական և անվտանգության համակարգերը, տնտեսության շատ ճյուղեր, բանկային ոլորտը, գործարարությունը և պետական կառավարման բնագավառը: Արտադրությունը և կառավարումը, պաշտպանությունը և կապը, տրանսպորտն ու էներգետիկան, բանկային գործը, ֆինանսները, գիտությունն ու կրթությունը, զանգվածային լրատվության միջոցները ավելի մեծ չափով են կախված տեղեկատվական փոխանակության ինտենսիվությունից, տեղեկատվության հավաստիությունից և որակից:

Տեղեկատվական տեխնոլոգիաները ոչ միայն սրընթաց ձևով ներդրվում են քաղաքականության, գործարարության և պետական կառավարման համակարգերում, այլև կերպափոխում են հասարակության մեջ միջանձնային հարաբերությունների բնույթը, ձևափոխում են բիզնեսի, պետության և տնտեսավարող սուբյեկտների կառավարման սկզբունքները:

Տեղեկատվական բաղադրիչը մարտական գործողությունների անբաժանելի մասն է: Դա հատկապես նկատելի դարձավ վերջին ժամանակներս աշխարհի տարբեր ծայրերում տեղ գտած լոկալ ռազմական գործողությունների ժամանակ:

Տեղեկատվական ոլորտը և տեղեկատվական հոսքերը վճռորոշ նշա-

նակություն ունեն ինչպես առանձին երկրներում, այնպես էլ գլոբալ մակարդակով ձևավորվող հասարակական կարծիքի վրա: Այդ պատճառով էլ գովազդը, քարոզարշավները, քաղաքական տեխնոլոգիաները, PR-երը և տարաբնույթ տեղեկատվական արշավները դարձել են ժամանակակից հասարակական գործընթացների բնութագրական գիծը:

Երրորդ, տեղեկատվական անվտանգության ապահովումը սերտորեն կապված է տեխնոլոգիական անվտանգության ապահովման հարցերի հետ: Դա պայմանավորված է նրանով, որ տեղեկատվական անվտանգության մակարդակի վրա մեծ ազդեցություն են թողնում տեղեկատվական նոր տեխնոլոգիաների զարգացման և տարածման հետ կապված գործընթացները:

Ձարգացած երկրների տնտեսությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք զգալի հաջողություններ են արձանագրում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման հաշվին: Այդ պատճառով այսօր Եվրոպայի, Ամերիկայի, Հարավ-արևելյան Ասիայի երկրների տեղեկատվական ենթակառուցվածքում ներդրվում է ՀՆԱ-ի 10-15%-ը:

Անհրաժեշտ է մեկ անգամ ևս ընդգծել, որ տեղեկատվական տեխնոլոգիաները դարձել են ոչ միայն ժամանակակից պետության անհրաժեշտ բաղադրիչ, այլ նաև ազգային տնտեսության առավել արդյունավետ ոլորտ: Անհրաժեշտ է նշել նաև, որ տեղեկատվական տեխնոլոգիաները որոշակի դեր են խաղում, այսպես կոչված, «նոր տնտեսության» կայացման գործում: Այդ կապակցությամբ շատ պետությունների գերակայությունները արտադրության ավանդական գործոններից տեղաշարժվում են դեպի գիտելիքներ և տեղեկատվություն: Այդ հարթությունում կարևորվում է այն փաստը, որ այսօր հիմնական միջոցները գոյանում են ոչ այնքան նյութական արտադրության ոլորտում, որքան տեղեկատվական-ֆինանսական: Այսօր աշխարհի ամենահարուստ մարդկանց շրջանում առաջատար դեր են զրավում նրանք, ովքեր զբաղվում են տեղեկատվական բիզնեսով:

Այստեղ պետությունների հոգատարության հիմնական առարկա է դառնում գիտատեխնիկական առաջընթացի հնարավորությունների արդյունավետ օգտագործումը:

Չորրորդ, տեղեկատվական ոլորտն իրականացնում է պետության կարևորագույն գործառնություններից մեկը՝ հասարակության հոգևոր, բարո-

յական և ստեղծարար ներուժի զարգացումը, ինչպես նաև կարևոր դեր է խաղում նոր գիտելիքների ստացման ու կուտակման գործընթացներում:

Անհրաժեշտ ու հավաստի տեղեկատվությունից օգտվելու իրավունքը, հանդիսանալով ժամանակակից ժողովրդավարական հասարակությունների անքակտելի բաղադրիչը, նպաստում է անհատի, հասարակության և պետության օրինական իրավունքների ապահովմանը:

Տեղեկատվական համակարգերն ապահովում են տեղեկատվայնացման բնագավառի համաշխարհային նվաճումներից և միջազգային տեղեկատվական ռեսուրսներից օգտվելը, հասանելի են դարձնում այնպիսի ծառայությունների մատակարարումը, ինչպիսիք են հեռահար ուսուցումը, հեռահար բժշկությունը, էլեկտրոնային առևտուրը և այլն: Բացի դրանից, տեղեկատվությունը ժողովուրդների, մարդկանց տարբեր սերունդների և մարդկության պատմության տարբեր ժամանակահատվածների միջև կապի գործառնություն է կատարում:

Տեղեկատվությունից օգտվելու իրավունքը ենթադրում է հարցերի համալիրի՝ իրավական, տնտեսական, տեխնոլոգիական, լուծում: Չնայած խնդրի բարդությամբ, դրա կենսագործումը նույնպես հանդիսանում է ժամանակակից պետության առանցքային դերակատարումներից մեկը:

Հինգերորդ, նոր տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմամբ պայմանավորված հնարավորությունների օգտագործումն աշխարհի շատ երկրների ղեկավարության կողմից, դիտարկվում է որպես լավագույն միջոց լուծելու առավել սուր ներքին և արտաքին հիմնախնդիրները: Այն դիտարկվում է նաև որպես հսկայական ներուժ համաշխարհային տնտեսության կայուն զարգացման, մրցունակության բարձրացման, նոր աշխատատեղերի ստեղծման, մարդկանց կյանքի որակական բարելավման և մարդկության գլոբալ հիմնախնդիրների լուծման գործընթացներում:

Այսպիսով, տեղեկատվական անվտանգության ապահովումը հանդիսանում է ցանկացած ինքնիշխան պետության ազգային անվտանգության կարևորագույն բաղադրատարրը:

Ժամանակակից պայմաններում տեղեկատվական անվտանգության արդյունավետ ապահովման համար խիստ կարևոր է տեղեկատվական ոլորտում ընթացող և պետությունների տեղեկատվական անվտանգության վրա ազդող գործընթացների և դրանց զարգացման միտումների հստակ պատկերացումը: Այդ ենթատեքստում անհրաժեշտ է նշել հետևյալ

հիմնարար միտումներն ու գործընթացները.

Առաջին. ժամանակակից համաշխարհային զարգացման գլոբալ միտումներից մեկն է գլոբալ տեղեկատվական տարածության արագ զարգացումը:

Բազմաթիվ փորձագետների կարծիքով, ներկայումս մարդկությունը մուտք է գործել իր զարգացման նոր տեղեկատվական փուլ, որը բնութագրվում է նորագույն տեղեկատվական-հեռահաղորդակցության տեխնոլոգիաների սրընթաց զարգացմամբ և համակողմանի տարածմամբ, մարդու կենսագործունեության և հասարակական գործընթացների բազմաթիվ ոլորտների տեղեկատվայնացմամբ:

Այսպես, դեռևս «Մեծ յոթնյակի» 1995թ. գագաթաժողովում բարձրացվել է 21-րդ դարի մարտահրավերների և տեղեկատվական հասարակության գլոբալացման հարցը: Փաստորեն այդ ժամանակ հռչակվեց հեռահաղորդակցության միջոցների առանցքային դերակատարումը գլոբալ տեղեկատվական ենթակառուցվածքի կառուցման գործում: Այդ գործընթացի տրամաբանական շարունակությունը հանգեցրեց 2000թ. Օկինավայում կայացած G-8-ի գագաթաժողովի շրջանակներում «Գլոբալ տեղեկատվական հասարակության Օկինավայի խարտիայի» ստորագրմանը, ուր ընդգծվում է, որ տեղեկատվական-հեռահաղորդակցության տեխնոլոգիաները դարձել են 21-րդ դարի հասարակության ձևավորման վրա ազդող առավել կարևոր գործոններ: Դրանով փաստորեն արձանագրվում է գիտական շրջանակներում բավական երկար ժամանակ շրջանառության մեջ գտնվող, այսպես կոչված, «տեղեկատվական հասարակություն» համաշխարհային հանրության մուտքի մասին տեսակետի իրավացիությունը:

Անհրաժեշտ է ընդգծել, որ տվյալ գործընթացը, մի կողմից հանդիսանալով գիտա-տեխնիկական հեղափոխության հետևանք, մյուս կողմից դարձել է ժամանակակից գլոբալացման առանցքային գործոններից մեկը: Ձևավորվում է կյանքի, հաղորդակցության և արտադրության նոր գլոբալ տեղեկատվական-հեռահաղորդակցության միջավայր: Ընդ որում, տեղեկատվական հասարակությունը զարգանում է խիստ դինամիկ ձևով: Այսպես, երբ 1994-1995թթ. Եվրոպայում ստեղծվեց տեղեկատվական հասարակության հայեցակարգը և խոսք էր գնում դրա ինդիկատորների մասին, ապա այդ ժամանակ չէր հիշատակվում էլեկտրոնային առևտուրը, քանի

որ գործնականում այն գոյություն չուներ: Այսօր էլեկտրոնային առևտուրը դառնում է շատ երկրների զարգացման կարևորագույն գործոն: Ներկայումս այդ ծառայությունից օգտվում է մոտ 300 մլն մարդ, իսկ 2005թ. սպասվում է, որ նրանց թիվը կհասնի 1 մլրդ-ի սահմանագծին:

Երկրորդ, տեղեկատվական ոլորտը դառնում է պետությունների մեծամասնության պետական քաղաքականության անբաժանելի և կարևոր մասը:

Հասարակության զարգացման ներկա փուլը բնութագրվում է տեղեկատվության, տեղեկատվական արտադրանքի, տեղեկատվական ենթակառուցվածքի ստեղծման և տեղեկատվական ծառայությունների մատակարարման հետ կապված գործունեության աճող դերով: Տեղեկատվական տեխնոլոգիաները գործնականում դարձել են մարդկային գործունեության բոլոր ոլորտների կառավարման արդյունավետության բարձրացման ծանրակշիռ գործոն: Մասնավորապես, բազմաթիվ երկրներում գիտակցել են այն սկզբունքային փաստը, որ տեղեկատվական տեխնոլոգիաները դադարել են պետական կառավարման մարմինների, հիմնարկների և կազմակերպությունների գործունեության մեջ կատարել օժանդակող գործառույթներ և դարձել են դրանց անհրաժեշտ ու կարևորագույն բաղադրատարրը: Դրանց զարգացման աստիճանից է կախված իրենց առջև դրված խնդիրների լուծման օպտիմալ տարբերակներ գտնելու տարաբնույթ կազմակերպչական կառույցների ընդունակությունը. մրցունակության բարձրացում, հասարակական պահանջարկի առավել արդյունավետ բավարարում և այլն:

Այդ տեսանկյունից առաջնահերթ գերակայությունը, որի ուղղությամբ ներկայումս իրենց զարգացման ընթացքում կողմնորոշվում են շատ երկրներ, հանդիսանում է անցումը տեղեկատվական հասարակության ձևավորմանը: Տվյալ ուղղությունը մի շարք պետությունների համար դառնում է տեղեկատվական անվտանգության առանցքային բաղադրիչներից մեկը:

Հետևաբար շատ երկրների կողմից ակտիվ քայլեր են ձեռնարկվում ազգային տեղեկատվական ռեսուրսների, ենթակառուցվածքի և ամբողջապես տեղեկատվական ոլորտի զարգացման համար:

Ակնհայտ ձևով այդ միտումը երևում է ԱՄՆ-ի, Եվրոպայի խորհրդի, Կանադայի, Մեծ Բրիտանիայի և այլ երկրների գործելակերպում: Դրանցից

հետ չեն մնում նաև Եվրոպական համագործակցության և ասիական որոշ երկրներ: Այսպես, վերջերս ASEAN-ի տասը երկրներ սկսեցին մշակել e-ASEAN պլանը, որի նպատակն է զարգացնել տարածաշրջանային տեղեկատվական տարածությունը:

Ռուսաստանում նույնպես ձեռնարկվում են միջոցառումներ տեղեկատվական ներուժի զարգացման ուղղությամբ: Այդ մասին է վկայում «Էլեկտրոնային Ռուսաստան 2002-2010» համադաշնային նպատակային ծրագրի մշակման աշխատանքների ինտենսիվ ընթացքը: Այդ ծրագիրը ևս երկու էլեկտրոնային առևտրին և էլեկտրոնային կառավարման ստեղծմանը վերաբերող ծրագրերի հետ միասին, պետք է ստեղծի մոր տնտեսության կադրային ու տեխնիկական ենթակառուցվածքը:

Ընդհանուր առմամբ, որպես կանոն, տեղեկատվական ոլորտի զարգացման գերակա ուղղություններ են դառնում.

- էլեկտրոնային կառավարման ձևավորումը,
- հեռահար բժշկության զարգացումը,
- հեռահար կրթության զարգացումը,
- էլեկտրոնային առևտրի զարգացումը:

Երրորդ, նկատվում է գլոբալ տեղեկատվական ենթակառուցվածքի փոփոխություն:

Ժամանակակից հասարակության բոլոր կառուցվածքային բաղադրիչները վերակողմնորոշվում են այն ուղղությամբ, որը թույլ կտա ավելի արդյունավետ աշխատել տեղեկատվության հետ:

Բազմաբնույթ ֆիզիկական, բնական, կենսաբանական, սոցիալ-տնտեսական և այլ երևույթների ու գործընթացների տեղեկատվական բովանդակության ներկայացման համընդհանուր ձև է դառնում թվայնացումը: Տարաբնույթ տեղեկատվության (տեքստեր, պատկերներ և այլն) մշակման ու հաղորդման թվային տեխնոլոգիան դարձել է ցանցային տեխնոլոգիաների հիմքը և գլոբալ տեղեկատվական ցանցերի ձևավորման համար մոր լայն հնարավորություններ է բացել: Տեղեկատվական ցանցերը վեր են ածվել տեղեկատվական հասարակության կազմակերպական-տեխնոլոգիական հիմքի:

Հեռահաղորդակցության ոլորտի հեղափոխությունը անսովոր բարենպաստ հնարավորություններ է ստեղծում հասարակական կյանքի տարբեր բնագավառներում՝ ներառյալ քաղաքականության, տնտեսության,

գիտության, մշակույթի, կենցաղի, անվտանգության, ցանցային կառուցվածքների ձևավորման ու զարգացման ոլորտները:

Այսպես, ամբողջ աշխարհում ակտիվորեն ձևավորվում է ցանցային տեղեկատվական տնտեսությունը, որը ստացել է Networks Economy անվանումը: Բազմաթիվ երկրներում ինտենսիվորեն ձևավորվում են աշխատանքի էլեկտրոնային բորսաներ:

Ցանցային տեղեկատվական ենթակառուցվածքի տարբեր բաղադրիչների ձևավորմանը զուգահեռ ընթանում է տարբեր ցանցային կառավարման ինստիտուցիոնալ կառուցվածքների, ներառյալ պետական իշխանության ինստիտուտների, ձևավորման գործընթաց:

Վերջին ժամանակներս բավական արագ զարգանում են այնպիսի նախագծեր, ինչպիսիք են էլեկտրոնային կառավարումը (e-government), էլեկտրոնային առևտուրը (e-commerce), էլեկտրոնային բիզնեսը (e-business): Այսպես, ներկայումս «էլեկտրոնային կառավարման» նախագծերը ակտիվորեն իրագործվում են ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Կանադայում, Ավստրալիայում և այլ երկրներում: Այդ ուղղությամբ լուրջ քայլեր է ձեռնարկում Սինգապուրը: 2000թ.-ից մմանօրինակ նախագծերի կենսագործում են սկսել ճապոնիայի կառավարությունը, Դուբայի ու Կատարը: ԱՊՀ երկրներից խնդիրն առավել առարկայական է մոտեցել Ռուսաստանի Դաշնությունը:

Բացի դրանից, մոր տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացման համաշխարհային միտումները հանգեցրել են մեծաթիվ և տարաբնույթ տեղեկատվական ռեսուրսների ու ծառայությունների երևան գալուն: Այսպես, ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալներով, տեղեկատվական ծառայությունների ժամանակակից շուկայի ծավալները մոտենում են 2 տրիլիոն դոլարին և կազմում են համաշխարհային առևտրի 15%-ը:

Չորրորդ, աշխարհում մեծանում է տեղեկատվական զարգացման անհավասարությունը:

Ինչպես ցույց է տալիս վերլուծությունը, տեղեկատվական զարգացման տարբերությունը երկրագնդի տարբեր հատվածներում պահպանվում և խորանում է:

Ձարգացող և անցումային տնտեսությամբ երկրների մեծամասնությունը տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման մակարդակով լրջորեն ետ հեն մնում զարգացած երկրներից: Ձարգացող երկրներում տե-

ղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ցածր տեմպերը պայմանավորված են մի շարք գործոններով. անկատար նորմատիվային-իրավական բազա, բնակչության համակարգչային գրագիտության ցածր մակարդակ, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման խիստ սահմանափակ ոլորտ, հեռահաղորդակցության ոլորտում թույլ հակամենաշնորհային քաղաքականության առկայություն, որակյալ մասնագետների բացակայություն, երկրի տեխնիկական պատրաստվածության ցածր մակարդակ, գիտատեխնիկական զարգացման անբավարար տեմպեր և այլն:

Զարգացող և անցումային տնտեսությամբ երկրները համաշխարհային զարգացման տեմպերից հետ են մնում ինչպես տեղեկատվական տեխնոլոգիաների և դրանց կողմից մատակարարվող ծառայությունների օգտագործման մասշտաբով, այնպես էլ տեղեկատվական տեխնիկայի և ծրագրային ապահովման միջոցների արտադրության ծավալներով: Այդ կապակցությամբ աշխարհում լայն տարածում է ստացել «թվային խզում» (Digital Divide) տերմինը: Ըստ փորձագետների, թվային խզումը ոչ միայն նվազեցնում է միջամենային հաղորդակցության մակարդակը, այլև իր հետ բերում է նաև որոշակի սոցիալ-տնտեսական հետևանքներ: Մասնավորապես, տեղեկատվական թերզարգացումը կհանգեցնի տնտեսական հետամնացության: Այսպես, 1999թ. Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրներին էլեկտրոնային առևտրից բաժին է հասել 18 մլրդ դոլար եկամուտ, այն դեպքում, երբ էլեկտրոնային առևտրի համաշխարհային եկամուտը կազմել է 111 մլրդ ԱՄՆ դոլար: Այսպիսով, համաշխարհային տնտեսության առավել դինամիկ ոլորտում զարգացող երկրները կատարում են աուտսայդերի դեր: Տեղեկատվական անհավասարության նման վիճակը դառնում է նաև սոցիալական շերտավորման կարևորագույն գործոններից մեկը: Այդ պատճառով էլ 1997թ. ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը շրջանառության մեջ դրեց աղքատության չափման նոր ցուցանիշ՝ տեղեկատվականը, որը բնութագրում է բնակչության լայն խավերի կողմից տեղեկատվական մայրուղիներից օգտվելու հնարավորություն: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանը «Հազարամյակի գագաթաժողովին» նվիրված մամլո ասուլիսում նշեց, որ իր «Հազարամյակի զեկույցը» պարունակում է տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու հնարավորությունների բարելավման կոնկրետ առաջարկներ: Դրանց

շարքում կարևոր է ՄԱԿ-ին առընթեր «Տեղեկատվական տեխնոլոգիաների ծառայության» (UNITeS) ստեղծումը, որը տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի երիտասարդ մասնագետներին կուղարկի զարգացող երկրներ՝ փորձի փոխանակման և գիտելիքների փոխանցման համար:

Անհրաժեշտ է ընդգծել, որ թվային խզում գոյություն ունի նաև տնտեսապես զարգացած երկրների միջև: Անհանգստացած Եվրոպայի և ԱՄՆ-ի միջև առկա թվային խզմամբ, Եվրոպական հանձնաժողովը 1999թ. ընդունեց «Տեղեկատվական հասարակություն բոլորի համար» փաստաթուղթը:

Տեղեկատվական անհավասարությունն արտահայտվում է նաև այն փաստի առկայությամբ, որ աշխարհում ծրագրային արտադրանքի ընդհանուր ծավալի 80%-ը մշակվում է անգլերեն լեզվով, այն դեպքում, երբ աշխարհի բնակչության 75%-ը չի տիրապետում անգլերենին:

Հինգերորդ, ժամանակակից պայմաններում բարդանում և ավելանում է տեղեկատվական անվտանգության սպառնալիքների քանակը:

Տվյալ հանգամանքը պայմանավորված է միջազգային տեղեկատվական միջավայրի տարբեր սուբյեկտների կողմից իրականացվող կազմալուծող գործունեությամբ: Մասնավորապես, վերջին ժամանակներս աշխարհում առավել արդիական հիմնախնդիր են դառնում, այսպես կոչված, «Տեղեկատվական ահաբեկչության» հետ կապված սպառնալիքները:

Տեղեկատվական դիվերսիաները, ուղեղների «լվացումը», բնակչության գիտակցության վրա ազդեցության տեղեկատվական-հոգեբանական մեթոդների և մեխանիզմների կիրառմամբ որոշակի շրջանակների շահերի լրբեհնգը և այլն լրջորեն անհանգստացնում են տեղեկատվական անվտանգության ոլորտի մասնագետներին: Ընդ որում, տեղեկատվությունը կարող է ազդել ինչպես առանձին անհատի, այնպես էլ մարդկանց խմբի վրա, ինչպես առանձին պետության կամ երկրների խմբի վրա, այնպես էլ համաշխարհային քաղաքական ամբողջ համակարգի վրա:

Գործնականում տեղեկատվական-հոգեբանական ներգործությունը նոր երևույթ չէ: Փաստորեն այդ ներգործությունը հանդիսանում է ինչպես միջազգային հարաբերությունների ոլորտում, այնպես էլ այս կամ այն երկրի քաղաքական համակարգի շրջանակներում ծագող հակամարտությունների և կոնֆլիկտների սովորական բաղադրատարրը: Որպես կանոն, այդպիսի ազդեցությունն իրականացվում է քարոզչության տարաբնույթ մեթոդների, «հոգեբանական օպերացիաների», «տեղեկատվական պա-

տերազմների» կիրառմամբ: Ներքաղաքական ենթատեսքստում օգտագործվում են PR մեթոդներն ու մեխանիզմները: Ընտրարշավների ժամանակ դրանք ընտրական և քաղաքական-տեխնոլոգիական տարբեր մեթոդներն են: Տեղեկատվական-հոգեբանական ներգործության տեխնոլոգիաների լայն սպեկտր է օգտագործվում տարբեր քաղաքական ու ֆինանսական խմբերի հակամարտությունների ժամանակ: Դրանց ընդհանուր բնութագրական գիծը մարդկանց վրա ներգործությունն ու որոշակի հասարակական կարծիքի ձևավորումն են: Կարևոր է ընդգծել, որ այդպիսի ազդեցության բազմաթիվ տարրեր այսօր ոչ բավարար չափով են ուսումնասիրված նույնիսկ տեսական մակարդակում:

Վեցերորդ, գլոբալ տեղեկատվական տարածության կարևոր միտումների մեջ առանձնանում է այդ ոլորտում առաջատար դիրքեր գրավելու մի շարք երկրների ձգտումը, որը կենթադրի այլ երկրների տեղեկատվական ոլորտների վրա ներգործության համար անհրաժեշտ պայմանների ստեղծում, ինչպես նաև տեղեկատվական ոլորտում աճող մրցակցություն:

Այսպես, Մեծ Բրիտանիայի կառավարությունը ցանկանում է Միացյալ Թագավորությունը դարձնել Ինտերնետի կտրվածքով Երկրագնդի ամենահրապուրիչ վայրը: Այդ ռազմավարության գլխավոր բաղադրիչը գլոբալ համակարգչային ցանցի շրջանակներում «տեղեկատվական գերմայրուղու» ստեղծումն է: Մեծ Բրիտանիան իր առջև նպատակ է դրել 2005թ. «ինտերնետացնել» ամբողջ երկիրը:

Մի շարք երկրներ սահմանափակում են իրենց տեղեկատվական տարածությունում արտասահմանյան սուբյեկտների ներկայությունը: Մասնավորապես, ԱՄՆ-ում 1934թ. ընդունված կապի միջոցների մասին օրենքի 310 բաժնով հստակ ձևակերպված են սահմանափակումներ երկրի տարածքում օտարերկյա ռադիոէմիտերի լիցենզիայի տրամադրման համար: Նմանօրինակ գործունեության համար լիցենզավորել չի թույլատրվում նաև այն ֆիրմաներին, որոնց կապիտալի 1/5-ից ավելին պատկանում է օտարերկրացիներին: Հարկավոր է նշել, որ ԱՄՆ-ում բավականին լուրջ վերաբերմունք են ցուցաբերում պետական քաղաքականության տեղեկատվական աջակցությանը, որի գործիքներից մեկը հանդիսանում է տարբեր գլոբալ տեղեկատվական գործակալությունների առկայությունը:

Հանդիսանալով տեխնոլոգիական անվտանգության առանցքային գոր-

ծոններից մեկը, թվային խզումը լուրջ հետևանքներ ունի տեղեկատվական ոլորտում: Մասնավորապես, զարգացող երկրներում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների անբավարար զարգացումը հանգեցնում է առանձին երկրների և տարածաշրջանների տեղեկատվական տարածություններում զարգացած երկրների տեղեկատվական հոսքերի և արտադրանքի գերիշխմանը:

Համաշխարհային տեղեկատվական ոլորտի զարգացման հետագա ինտենսիվացումը կայանաձևավորի այդ ոլորտի լիզերության համար երկրների միջև մրցակցության սրումը, տնտեսական, քաղաքական, մշակութային ճնշումներ գործադրելու նպատակով տեղեկատվական ոլորտը կդարձնի հակամարտությունների գրավիչ օբյեկտ:

Գլոբալ տեղեկատվական ոլորտում ընթացող գործընթացների և զարգացման միտումների վերլուծությունը թույլ է տալիս ամել եզրակացություններ, որոնք արդիական են նաև Հայաստանի Հանրապետության համար:

**1.** Համաշխարհային տեղեկատվական ոլորտում իրականացվող սրընթաց փոփոխությունները շատ պետությունների ստիպում են կատարելագործել տեղեկատվական անվտանգության ապահովման իրենց մոտեցումները:

Ինչպես փորձն է ցույց տալիս, այսօր տեղեկատվական անվտանգության ապահովումը չի հանգեցնում բացառապես տեղեկատվության պաշտպանությանը և տեղեկատվության անվտանգությանը: Այն պայմանավորում է «տեղեկատվական անվտանգություն» հասկացության մեկնաբանության ընդլայնման անհրաժեշտությունը: Ակնհայտ է, որ տեղեկատվական զարգացման համար միջոցներ չձեռնարկելով՝ անհնար է ապահովել տեղեկատվական անվտանգություն: Տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրը պահանջում է տեղեկատվական անվտանգության ազգային համակարգի ստեղծում ու զարգացում:

Տեղեկատվական անվտանգության հիմնախնդրի լուծումը պայմանավորում է, մասնավորապես, «տեղեկատվական պատերազմների» շրջանակներում երկրի սուբյեկտների և ենթակառուցվածքի վրա տեղեկատվական ներգործության կանխարգելման և դրանից պաշտպանության անհրաժեշտություն, պահանջում է ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային մակարդակում տեղեկատվական հարաբերությունների համա-



պատասխան կարգավորում:

Առանձնահատուկ նշանակություն է ստանում իրականացվող պետական քաղաքականության և պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների տեղեկատվական ապահովման անհրաժեշտությունը: Դա հատկապես արդիական է ազգային տեղեկատվական տարածության վրա ազդեցության պաշտպանության ենթատեքստում:

Տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառի կարևոր խնդիր է տեղեկատվական և հեռահաղորդակցության ցանցերում տվյալների պաշտպանության ոլորտի նորմատիվային կարգավորումը:

Հատուկ նշանակություն պետք է տալ ժամանակակից ազգային տեղեկատվական ենթակառուցվածքի զարգացմանը:

Տեղեկատվական նոր տեխնոլոգիաների զարգացմամբ պայմանավորված հնարավորությունների օգտագործումը պետք է դիտարկել որպես երկրի առավել սուր խնդիրների լուծման միջոց:

Տեղեկատվական զարգացումը պետք է ուղեկցվի միջազգային տեղեկատվական ընկերակցության հետ երկրի ինտեգրմամբ: Տվյալ ուղղությունը պետք է դառնա պետության արտաքին քաղաքականության առանցքային ուղղություններից մեկը: Այդ տեսանկյունից անհրաժեշտ է առավել ուշադիր վերաբերվել տեղեկատվական հասարակության խնդիրներին նվիրված միջազգային փաստաթղթերին:

Ակնհայտ է, որ տեղեկատվական անվտանգության ապահովման հիմնախնդրի լուծման հաջող ընթացքը զգալի չափով կախված է այդ բնագավառի կադրային ապահովվածության որակից: Այդ պատճառով էլ լուրջ վերաբերմունքի պետք է արժանանա կրթության համակարգը: Դա ենթադրում է կրթության համակարգի փոփոխությունների անհրաժեշտություն, ներառյալ տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետների և համակարգիչների որակյալ օպերատորների թողարկման ծավալների մեծացում, նոր ծրագրերի ու ստանդարտների ներդրում, դպրոցների և բուհերի տեխնիկական հագեցվածության աստիճանի, բնակչության համակարգչային գրագիտության մակարդակի բարձրացում և այլն: Այդ ուղղությամբ գլխավոր նպատակը պետք է լինի տեղեկատվական տեխնոլոգիաների շուկայի կադրային ենթակառուցվածքի ստեղծումը:

**2.** Այսօր տեղեկատվական անվտանգության ապահովման ենթատեքստում տեղեկատվական քաղաքականության ձևավորման և իրագործման

նկատմամբ պահանջվում են նոր մոտեցումներ:

Տեղեկատվական քաղաքականությունը գործունեություն է, որն ուղղված է տեղեկատվական ոլորտի զարգացմանը և որն ընդգրկում է ոչ միայն զանգվածային լրատվության միջոցները, տեղեկատվական ենթակառուցվածքը, տեղեկատվական համակարգերը, այլ նաև տեղեկատվության ստեղծման, պահպանման, մշակման և տարածման հետ կապված արտադրությունների ու հարաբերությունների ամբողջությունը:

Տեղեկատվական քաղաքականության այդպիսի ընդգրկում ընկալումը պայմանավորված է նրանով, որ ժամանակակից տեղեկատվական-հեռահաղորդակցության տեխնոլոգիաները ինտենսիվ կերպով վերացնում են տեղեկատվական ոլորտի առանձին ճյուղերի միջև առկա խոչընդոտները:

Կարևոր է նաև տեղեկատվական ոլորտի զարգացումն ապահովող կառուցվածքների գործունեության վերաիմաստավորումը: Եթե նախկինում գլխավոր խնդիրը պետական կառավարման մարմիններին կապով, համակարգիչներով, տեղեկատվությամբ ապահովումն էր, ապա ներկայումս հիմնական շեշտը պետք է դրվի ազգային տեղեկատվական ենթակառուցվածքի և տեղեկատվական ռեսուրսների ձևավորման վրա:

Խոսքը նաև տեղեկատվության որակի և դրա նկատմամբ վստահության մասին է: Այդ ենթատեքստում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ տեղեկատվությունն այսօր ձեռք է բերում որոշակի արժեք, այսինքն, դառնում է ապրանք: Այդ պատճառով էլ մրցակցության ուժեղացման պայմաններում փորձեր կարվեն ազգային տեղեկատվական արտադրանքը դուրս մղել ոչ միայն միջազգային, այլ նաև ազգային տեղեկատվական տարածությունից: Դրա հետ մեկտեղ հարկավոր է հիշել, որ արտասահմանյան տեղեկատվական շուկան հագեցած է տեղեկատվությամբ:

Անհրաժեշտ է մտածել նաև սեփական Ինտերնետ-քաղաքականության մասին: Ընդ որում, Ինտերնետում պետական գերատեսչությունների միայն ներկայությունը բավարար չէ:

Տեղեկատվական համակարգերի և ցանցերի ստեղծման ու զարգացման փորձը ցույց է տալիս, որ առաջատար դերը այդ գործընթացներում պատկանում է մասնավոր սեկտորին: Ժամանակակից տեղեկատվական ոլորտի զարգացումն առանց պետության ծանրակշիռ դերակատարման կընթանա խիստ դանդաղ և ոչ արդյունավետ, որը, սակայն, չի նշանակում այդ գործընթացների նկատմամբ պետական տոտալ վերահսկողության

հաստատում: Այդ կապակցությամբ էլ ցանկացած պետության տեղեկատվական քաղաքականության կարևոր ասպեկտներից է տեղեկատվական արտադրանքի և ծառայությունների շուկայի կարգավորումը: Այդ ենթատեքստում տեղեկատվական արտադրանքի և ծառայությունների շուկայի պետական կարգավորման առանցքային ուղղություն է հանդիսանում մրցակցության ուժեղացումը, հակամենաշնորհային պայքարը, տեղեկատվայնացումը և այլն:

Տեղեկատվական քաղաքականության կարևորագույն ուղղություն պետք է դառնա տեղեկատվական ոլորտի ու ծառայությունների համալրումը համապատասխան հոգևոր-մշակութային բովանդակությամբ՝ ազգային և համաշխարհային մշակույթների բազմազանությունը տարածելու, ազգաբնակչության մոտ որոշակի հոգևոր արժեքների համակարգ ձևավորելու համար:

Այս հարցերի լուծումը կնպաստի տեղեկատվության և գիտելիքների կերպափոխմանը սոցիալ-տնտեսական և հոգևոր զարգացման ռեսուրսի, քաղաքացիական հասարակության ինստիտուտների ամրապնդմանը, անհատի ինքնակրթության հնարավորությունների ընդլայնմանը, տեղեկատվական անվտանգության ապահովման համակարգի ամրապնդմանը:

**3.** Տեղեկատվական անվտանգության ոլորտում Հայաստանի Հանրապետության համար առավել արդիական հիմնախնդիր է Հայաստանի և այլ երկրների տեղեկատվական զարգացումների միջև մեծացող խզումը:

Մասնավորապես, զարգացած երկրների հետ տեղեկատվական զարգացման մակարդակի խզման խորացումը կարող է բացասաբար անդրադառնալ երկրի տնտեսական հեռանկարների վրա: Դա պայմանավորված է նրանով, որ այսօր ողջ աշխարհը առևտուր է անում գործնականում ժամանակի օպերատիվ ռեժիմում: Այդ պայմաններում մեր երկիրը որոշակի դժվարություններ կունենա: Բնական է, առևտրի ավանդական ձևերը դեռ երկար ժամանակ կգոյատևեն, սակայն փորձագետները կանխատեսում են «Օն-լայն» ռեժիմում իրականացվող առևտրի ծավալների զգալի մեծացում մոտ ապագայում:

Ակնհայտ է, որ «թվային խզման» հիմնախնդրի լուծումը չի կարող գտնվել մեկ երկրի շրջանակներում և միայն երկրների համատեղ ջանքերով կարելի է հասնել տեղեկատվական ռեսուրսների օգտագործման հավա-

սար հնարավորությունների:

Խիստ կարևոր է տեղեկատվական տեխնոլոգիաների և ծառայությունների սեփական արդյունաբերության զարգացումը:

Տեղեկատվական ոլորտի զարգացումը պետք է նպաստի նոր տեղեկատվական տեխնոլոգիաների, հետևաբար նաև երկրի տեխնոլոգիական զարգացմանը: Տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվ զարգացումը կարող է դառնալ ազգային տնտեսության առավել հեռանկարային սեկտորը: Տեղեկատվական տնտեսության ձևավորումը, հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներում նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ստեղծումն ու օգտագործումը պետք է դիտարկվեն որպես պետության տնտեսական քաղաքականության կարևորագույն ուղղություններ: Անհրաժեշտ է ավելի ակտիվորեն մասնակցել էլեկտրոնային առևտրի համակարգի զարգացմանը: Նպատակահարմար է ճիգերը կենտրոնացնել տեղեկատվական ոլորտում գործարարության զարգացման և նորամուծությունների ներդրման համար խրախուսման և աջակցության միջոցառումների մշակման և կենսագործման վրա:

Տեղեկատվական ոլորտի տեխնոլոգիական հետամնացության հաղթահարումը պետք է դառնա գիտատեխնիկական քաղաքականության առանցքային ուղղությունը:

Այսպիսով, բացի տնտեսական յուրահատուկ արդյունավետությունից, տեղեկատվական-հեռահաղորդակցության ոլորտը ռազմավարական գործոն է, որն ընդունակ է փոխել երկրի տեղը ուժերի գլոբալ հարաբերակցության բնագավառում:

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ** ..... 3

**ԳԼՈՒԲԱԼՑՈՒՄՆ ՈՒ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

- 1.1 Գլոբալացման եռությունը ..... 5
- 1.2 Տեղեկատվական համակարգի զարգացումը որպես գլոբալացման շարժիչ ուժ .....15
- 1.3 Տեղեկատվական հասարակություն ..... 28

**2. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

- 2.1 Տեղեկատվական համակարգի զարգացման ռազմավարության նպատակը, տեղեկատվական հիմնական գործընթացները որպես պետական տեղեկատվական քաղաքականության օբյեկտներ ..... 37
- 2.2 Միասնական տեղեկատվական տարածություն ու տեղեկատվական-հեռահաղորդակցության ենթակառուցվածք .....42
- 2.3 Տեղեկատվայնացման միջոցների, տեղեկատվական արտադրանքի ու ծառայությունների արտադրություն ու սպառում ..... 46
- 2.4 Տեղեկատվական շուկա .....47
- 2.5 Բնակչությանը տեղեկատվությամբ ապահովող ու հասարակական կարծիք ձևավորող համակարգ ..... 50
- 2.6 Տեղեկատվական իրավունք ..... 52
- 2.7 Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման միտումները Հայաստանի Հանրապետությունում ..... 53
- 2.8 Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվական հասարակության ձևավորման ռազմավարության հայեցակարգային դրույթները ..... 61
- 2.9 Տեղեկատվական հասարակության ձևավորման գերակա ուղղությունները ..... 66

**3. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՎԱՐԳՆ ՈՒ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ**

- 3.1 Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման արդյունավետությունը պետական կառավարման համակարգում..... 70
- 3.2 Պետական ծառայությունը և զանգվածային լրատվության միջոցները ..... 76

**4. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

- 4.1 Տեղեկատվական անվտանգությունը որպես ազգային անվտանգության համակարգի կարևոր բաղկացուցիչ ..... 80
- 4.2 Տեղեկատվական անվտանգության ապահովման համակարգ ..... 92
- 4.3 Տեղեկատվական պատերազմ ..... 94
- 4.4 Տեղեկատվական անվտանգության սոցիալ-հոգեբանական կողմերը .....107
- 4.5 Տեղեկատվական անվտանգությունն արդի պայմաններում ..... 116

## **«ՆՈՐԱՎԱՆՔ»** **ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ** **ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ**

Ժամանակակից աշխարհում սեփական ներուժի առավելագույն կենտրոնացումը, տարածաշրջանային և համաշխարհային հավասարակշռության համակարգերում կուտակված էներգիայի ռացիոնալ և նպատակային կիրառումը դառնում են ազգերի և պետությունների առջև ծառայած կենսական հիմնահարցեր:

Հայաստանն այսօր միջազգային ասպարեզում մրցունակ չէ բնական ռեսուրսների, տնտեսական ընդհանուր վիճակի, ֆինանսական համադրված կարողականության չափորոշիչներով: Փոխարենը հայկական գործոնն ուշագրավ և շահավետ դիրք է գրավում մտավոր ներուժի կարողականության կուտակման իմաստով: Մտավոր ներուժի կուտակման և ռացիոնալ կիրառման հիմնահարցը բանալի է հայ ժողովրդի՝ ժամանակակից աշխարհում սեփական ամբողջական ներուժի գնահատման, տեղի ու դերի, հնարավորությունների հստակեցման համար: Համահայկական կազմակերպված մտավոր ներուժը կոչված է դառնալու այն հզոր լծակը, որը Հայաստանին հնարավորություն կտա տեղ գրավել համաշխարհային գործընթացների վրա ազդելու կարողականություն ունեցող երկրների թվում:

Այսպիսով անհրաժեշտություն է դառնում հայկական շարունակականության մոդելի մշակումը, որը հայ ժողովրդի ամբողջական պոտենցիալի պահպանման ու զարգացման ծրագիրն է և իր առանձին բաղադրիչներով օրգանապես շաղկապված ամբողջություն է: Իրավիճակը և առաջիկա զարգացումների հրամայականն առաջնահերթ են դարձնում հիշյալ հիմնահարցը իրականացնելու կոչված, սկզբունքային առումով որակապես նոր միավորի ստեղծման անհրաժեշտությունը: Այդպիսին կարող է դառնալ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը, որն իրենից ներկայացնելու է գիտական, մշակութային, հոգևոր ներուժի կազմակերպման, համադրման, կառավարման և գործնական կիրառման մեխանիզմների մշակման կենտրոն:

Համաշխարհային փորձն ունի նմանատիպ կառույցների արդյունավետ աշխատանքի բազմաթիվ օրինակներ: Քաղաքակրթական մրցակցության

արդի փուլ զարգացած շատ երկրներ (Անգլիա, Ֆրանսիա, ԱՄՆ, ԳՖՀ, ճապոնիա, Իրան, Չինաստան) թևակոխում են տասնամյակների, երբեմն հարյուրամյակների պատմություն ունեցող այդպիսի հաստատություններով: Այս կենտրոնների վրա են դրվում պետության մտավոր ներուժի կազմակերպման, նորագույն գիտական մշակումների օգտագործման, գիտական կառավարման տեխնոլոգիաների մշակման, պետական ու հասարակական կյանքի բոլոր բնագավառներում դրանց կիրառմամբ, կադրերի պատրաստման և վերապատրաստման գործառույթները:

Այսպիսի հաստատությունների ձևավորման և արդյունավետ գործունեության հարուստ փորձ ունի նաև հայ ժողովուրդը: Պատմական շրջադարձային փուլերում, երբ առավել ցայտուն, երբեմն ավերիչ էին դրսևորվում քաղաքակրթությունների շփման և փոխազդեցությունների գործընթացները, ի հայտ եկան Նորավանքի, Սանահինի, Գլաձորի, Տաթևի, Սսի համալսարանները՝ որպես մտավոր ներուժի պահպանման, հոգևոր և մշակութային արժեքների հավաքման, կուտակման և վերարտադրման ազգային գեոֆունդի հետագա զարգացումն ապահովող կենտրոններ:

Հիմնադրամի հիմնական առաքելությունն է լինելու դառնալ այն փորձարարական կենտրոնը, որտեղից հայ իրականության ամենատարբեր ոլորտներ պետք է ձգվեն հայոց շարունակականությունն ապահովող ծրագրերն ու դրանց իրականացման մեխանիզմները: Այն միաժամանակ վեր է ածվելու միջազգային գիտահետազոտական և մտավոր կենտրոնի, որն ունակ կլինի արժանիորեն ներկայացնել մեր ժողովրդին համաշխարհային հանրությանը, դառնալով քաղաքակրթությունների լավագույն ձեռքբերումների համադրման և երկխոսության վայր:

Համալսարանի դասախոսներն ու սաները միջնադարի հայ ուսուցչապետերի օրինակով կդառնան հայկական ազգային նոր դպրոցի հիմնադիրներ, որոնք անկախ պետականության պայմաններում կլուծեն գլոբալ ներազդեցություններով թելադրված նոր խնդիրներ և առաջադրանքներ:

### **ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ**

Հիմնադրամն իրականացնելու է հետևյալ հիմնական գործառույթները.

- գիտական մտքի համախմբում,
- գիտահետազոտական գործունեություն,

- ռազմավարական հետազոտությունների իրականացում,
- մասնագետների պատրաստում և վերապատրաստում, կրթամեթոդական նոր մեխանիզմների մշակում և տարածում, տեղեկատվական ցանցի ստեղծում:

**ա) Գիտական մտքի համախմբումը ներառում է հետևյալ խնդիրները՝**

- համապատասխան մթնոլորտի ձևավորում, հանրապետության և արտերկրի առաջատար մտավորականների համախմբում, գիտական նորագույն մշակումների փոխանակում,
- գիտական կոնֆերանսներ, խորհրդակցություններ, քննարկումներ,
- գիտա-քաղաքական հետազոտություններ:

**բ) Գիտահետազոտական հայեցակարգային աշխատանքներ՝**

- պետության նպատակների և իրական հնարավորությունների գնահատում, զարգացման մոդելների ձևավորում,
- գործադաշտերի և գործամիջոցների հստակեցում,
- հայ ժողովրդի մարդկային, նյութական և հոգևոր կարողության «գույ-քագրում» չորս միջոցներով՝ մարդկային, կազմակերպական, ֆինանսական և հոգևոր (մշակութային, քաղաքակրթական),
- հասարակության միասնության մոդելի կառուցում, որի հիմքում կընկնեն տարբեր գաղափարական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրոնական, մշակութային ուղղվածություն ունեցող միավորների գործունեության համակարգումը և հասարակական համաձայնության առկա հիմնախնդիրների հստակեցումը,
- հետազոտությունների արդյունքների կիրառման մեխանիզմների ճշտում,
- կոնկրետ արդյունքների գործադրման առաջարկությունների ներկայացում:

**գ) Ռազմավարական հետազոտությունների իրականացում՝**

- ռազմավարության և առաջնահերթությունների ճշտում,
- կոնկրետ նպատակներ հետապնդող ծրագրերի մշակում,
- տարբեր ոլորտներում գործող ծրագրերի և նրանց գործադրման ժամանակացույցերի համադրման մեխանիզմների ձևավորում,
- մարտավարական նշանակության խնդիրների առանձնացում և դա-

սակարգում,

- յուրաքանչյուր ծրագրի ենթատեքստում հնարավոր համախոհ և հակադիր ուժերի տեղաբաշխման քարտեզի կազմում և գործունեության մեխանիզմների ճշգրտում,
- պետական անվտանգության բոլոր չափումներից բխող հատուկ ծրագրերի մշակում, վերջինիս արդյունքում պետական պատվերի մշակում և իրականացման մեխանիզմների ճշգրտում,
- պետական կառավարման օպտիմալ համակարգերի մոդելավորում:

**դ) Կրթամեթոդական աշխատանքներ և տեղեկատվական ցանցի ստեղծում՝**

- հիմնադրամի իրականացրած հետազոտությունների հիման վրա մեթոդաբանական աշխատանքների իրականացում,
- դասախոսների և ուսանողների վարժանքի (training) ծրագրերի իրականացում,
- կրթական նոր մեխանիզմների մշակում և տարածում գիտակրթական հաստատություններում,
- տարբեր ոլորտների մասնագիտական կադրերի պատրաստում և վերապատրաստում,
- տեղեկատվական-քարոզչական ցանցի հայեցակարգի մշակում,
- քարոզչական համադրման մեխանիզմների ձևավորում,
- համալսարանի իրականացրած աշխատանքների մատուցում հանրությանը,
- հանրությանը մատչելի գրադարանի, համակարգչային ծրագրերի ստեղծում,
- գիտական նորագույն մշակումներին հանրության ծանոթացում:

**ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՌԱՋԻԿԱ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գիտական ուսումնասիրությունների ոլորտը կարելի է բնութագրել որպես հայագիտություն, որի բովանդակությունն արդի փուլում էապես ընդլայնվել է, ներառելով մի շարք հասարակական գիտությունների (սոցիոլոգիա, քաղաքագիտու-

թյուն, պատմություն, փիլիսոփայություն, ազգագրություն, մշակութաբանություն, հոգեբանություն և այլն) հատույթում գտնվող հարցադրումներ և դրանց համապատասխան լուծումներ: Եթե անցյալում հայագիտության ուղղվածության վեկտորն ուղղված էր դեպի անցյալը, ապա ներկայումս սուր անհրաժեշտություն է զգացվում վեկտորի սլաքն ուղղել ապագային: Բացի այդ, առաջանում է հայագիտության բովանդակային նոր վեկտոր՝ միտված համակարգված մարտահրավերներին համարժեք պատասխաններ գտնելուն:

Անկախ պետականության պայմաններում հասարակության մեջ աստիճանաբար ձևավորվել է անհրաժեշտություն պարզաբանել, թե որո՞նք են մեր ազգային շահերը, նպատակները, առաջնահերթությունները 21-րդ դարում, ինչպիսի՞ ռազմավարություն և մարտավարություն է պահանջվում նրանց պաշտպանության համար երկրի ներսում և միջազգային ասպարեզում:

Այս իրողությամբ է պայմանավորված հիմնադրամի գիտական ուսումնասիրությունների թեմաների առաջնահերթությունը: Որպես հիմնական ընտրվեցին երկու փոխկապակցված հիմնախնդիրներ՝

- ա. Հայկական գործոնի ձևավորումը 21-րդ դարում
- բ. Ազգային և պետական անվտանգության համալիր հայեցակարգ

*«Հայկական գործոնի ձևավորումը 21-րդ դարում» թեման ներառում է հետևյալ խնդիրների շրջանակը՝*

- արդի գլոբալ գործընթացները և ազգային պետության գործառույթները,
- ազգային շահեր, նպատակներ, առաջնահերթություններ. էություն, բովանդակություն,
- հայկական շարունակականության հայեցակարգը,
- ազգային և պետական շահ ըմբռնումների փոխհարաբերակցությունը,
- ազգային պետությունը, քաղաքացիական հասարակությունը և ժողովրդավարությունը,
- ազգային համաձայնության և միասնականության գաղափարը որպես ազգային պետության ներքին կայունության և զարգացման գրավական, վերջինիս հասարակական, քաղաքական, տնտեսական, հոգևոր և

մշակութային ռեսուրսները,

- Հայոց Ցեղասպանության ճամաչումը և Պահանջատիրությունը որպես հայկական գործոնի կարևորագույն բաղադրամասեր,
- Հայրենիք-Սփյուռք առնչությունների մոդելավորման հիմնախնդիրները,
- Սփյուռքի ազգապահպանման գործոնները և հայոց անկախ պետականության գործառույթները,
- ՀՀ արտաքին քաղաքականության և ռազմական դոկտրինայի հիմնադրույթները,
- ազգային պետության կառուցման տնտեսական հիմնավորումները,
- գիտակրթական և մշակութային քաղաքականությունը որպես ազգային պետության ձևավորման կարևորագույն բաղադրամաս,
- անկախ պետականության զարգացման ուղիներն ու հեռանկարները 21-րդ դարում:

*«Ազգային և պետական անվտանգության համալիր հայեցակարգ» թեման ներառում է խնդիրների հետևյալ շրջանակը.*

- ազգային անվտանգության համալիր ծրագրի հիմնադրույթները,
- հազար-բարոյական անվտանգության հիմնադրույթներ,
- մշակութային անվտանգության հիմնադրույթներ,
- կրթական-դաստիարակչական անվտանգության հիմնադրույթներ,
- գիտատեխնիկական անվտանգության հիմնադրույթներ,
- տնտեսական (ֆինանսական) անվտանգության հիմնադրույթներ,
- կոմունիկացիոն անվտանգության հիմնադրույթներ,
- տեղեկատվական անվտանգության հիմնադրույթներ,
- բնապահպանական անվտանգության հիմնադրույթներ,
- ժողովրդագրական անվտանգության հիմնադրույթներ,
- առողջապահական անվտանգության հիմնադրույթներ,
- սահմանամերձ շրջանների անվտանգության հիմնադրույթներ:

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդ՝

**Անդրանիկ Սարգսյան** - ՀՀ Վարչապետ

**Մանուկ Թովուզյան** - ՀՀ կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար

**Կարինե Կիրակոսյան** - ՀՀ կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարարի տեղակալ

**Լևոն Մկրտչյան** - ՀՀ Կրթության և գիտության նախարար

**Տիգրան Սարգսյան** – ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ

**Արա Ավետիսյան** – ՀՀ Կրթության և գիտության նախարարի տեղակալ

Իրավաբանական հասցե՝

Երևան-10, Կառավարական տուն, 1

Գրասենյակի հասցե՝

Երևան, Գարեգին Նժդեհի, 23

Հեռ. 44-04-72, 44-04-73

Ֆաքս (374 1) 44-04-73

E-mail: noravank@arminco.com